



891.99  
U-26



ՍԱՐՍԵՆ

# ԹՈՒԻՉԱ



ՊԵՏՎՐԱԾ



-6 NOV 2011

891.99

78

U-26 U U R U B R

у

Р Р Т 2 f

1888/3 969  
38418

meslaus  
388418 1935 unius



29 JUL 2013

53692

MS VHH-3-

Տեսական գումար և բարձրացնել  
Տապերկ և տիտղոսաթերթը  
ԼԵՏԱՐԻ



ԱՅՍ ԿՅԱՆՔԻ ՀՈՒՆՈՎ

Ինչպէս սառնությամբ եղիքական  
Յերգեմ վերելքը մեր վիթխարի,  
Յերբ դասակարգը իմ հաղթական  
Փոխել և ընթացքն հին աշխարհի:  
Յերբ տասը տարում կտրում ենք անցնում  
Տարածությունը մի ձիգ դարի,  
Ինչպէս ցնծությամբ վաս, անպատում  
Չերգեմ խոյանքն այդ հաղթարի:

Յել յերբ լսում եմ հասակաչափ  
Հասկերի յերգն անափ արտում,  
Յերբ մանուկները — ժիր ու զվարթ՝  
Պայծառ աչքերով ինձ են ժպտում,  
Ու յերբ մտնում եմ ծովը յեռանդի՝  
Գործարանները փոթորկահույզ,  
Ինչպէս քնարովս չելնեմ մարտի,  
Վորտեղ պարփակեմ լոյնդը հոգուս:

Ու յերբ բամբակի արտերի մեջ  
Կոլխոզուհին ալ մի վարդ դարձած  
Կանգնում և հպարտ և լայնալանջ՝  
Աչքերում արևն անդրադարձած.  
Յել յերբ տեսնում եմ մեռնող չութը՝  
Խորհրդանիշը աղքատության,  
Յես ինչպէս պահեմ բորբոք սրանում  
Հնչյուններն անզուսակ ուրախության:

Ու յերբ տեսնում եմ հիմնահատակ,  
 Փոշիացումը հին տների,  
 Շենքերը շաղուն ու բազմահարկ  
 Տիրում են տեղը խրճիթների,  
 Յեվ յերբ լամպերը ելեքտրական  
 Ծաղկում են մթնում գիշերային,  
 Ինչպես մեղմությամբ եպիքական  
 Այդ տեսարանին հանդարտ նայեմ:

Ու յերբ տեսնում եմ նոր կյանք կերտող  
 Ազգերը բազում ու բազմաղան.  
 Միասիրտ ու հաշտ, աչքերում շող,  
 Յեղբայրությամբ կուռ ու անսասան.  
 Յերբ բոցկլտում են յեռանդից վառվող  
 Կոմյերիտական միլիոն աչքեր,  
 Ինչպես սանձեմ սրտից ժայթքող  
 Հըճվանքի, յերգի քաղցր կանչեր:

Յերբ, ինչպես ալիքն ովկիանոսում,  
 Դասակարդիս մեջ ձուլված և յե՞  
 Արևոտ շենքի քարն եմ տաշում,  
 Ձեռքերով իմ արևակեղ.  
 Յեվ յերբ տեսնում եմ՝ բարձրանում և  
 Մեր կերտած շենքը վեհ հասակով,  
 Ինչպես նրան չվողջունեմ  
 Ցնծաղին հոգու խոր հրճվանքով:

Ցնարավոր ե, չբոցկլտալ,  
 Յեվ մտերմորեն ձեղ չողջունել,  
 Ո՞, դուք տիպար հերոսության,  
 Անվեհեր, խիզախ ողաչուներ.  
 Յեվ ձեղ՝ հյուսիսի արկածալի,  
 Ցրտաշունչ ուղին հարթողներից,  
 Ինչպես չձոնեմ ջերմ, ցնծալի  
 Լիրիքական յերգ ու սրտի խինդ:

Ինչպես լուռվամբ մոտենամ քեզ,  
 Աշխարհը փոխող աննկաւն մարդ  
 Յեվ ինչպես քեզ հետ, յերգս ու յես  
 Գրահի չելնենք, չմղենք մարտ.  
 Ինչպես նայեմ յերջանկությանդ  
 Անկողմնակալ ու անտարբեր,  
 Ինչպես կարող եմ քո խնդրությամբ  
 Եյությամբ համայն չայրվել, չարբել...

Յերբ լայնարձակ, գոռ ովկիանում  
 Մեր նամին ե վարում հանձարը մեծ,  
 Ու ել վոչ մի խութ չի սասանում  
 Սուրացող նավը մեր հողմածեծ.  
 Յեվ յերբ անցնում ենք դժվար ուղին  
 Քայլերով հսկա ու մարտական,  
 Ինչպես չերգեմ մեծ հաղթողի  
 Թոփչքի թափը տիտանական:

Ու յերբ տեսնում եմ՝ արևակամ  
 Այս ջինջ որերի աչքերի մեջ  
 Անդրադառնում ե մեր ապագան  
 Իր փարոսներով վառ ու անշեջ.  
 Ահա փովում ե աչքիս առաջ  
 Լուսե գալիքը՝ վորպես ներկա,  
 Ինչպես չերգեմ բազմաշառաչ,  
 Մշտածիծաղ մեր ապագան...

✓ ԶԱՅՆԵՐ ԳԱԼԻՔԻ

Յես ամենուրեք լսում եմ պայծառ,  
Յերջանիկ կյանքի — դալիքի ձայներ...  
Տեսնում եմ, ահա, ըստու նորատունի ծառ,  
Արտեր լայնածիր, վոր նոր են ցաներ.  
Տեսնում եմ, ահա, անդուսպ գետերի  
Ջրերը սահճող բազմազդի մարդկանց...  
Ու ծիծաղում են լույսի լամպերի  
Կախված պարտեզներ՝ գլշերում ծաղկած:  
Տեսնում եմ, ահա, պիտներներ կայտառ  
Ու հերոսների այնքան արձաններ,  
Յեվ ամեն կողմից լսում անդադար  
Շողշողուն կյանքի — դալիքի ձայներ:

Տեսնում եմ, ահա, սաոցահատ նավեր,  
Վորոնք բացում են աշխարհներ անհայտ,  
Ստրատոստատն ե ճախրում դեպի վեր,  
Արծիվներից ել և վեհ, և հպարտ...  
Տեսնում եմ, ահա, նոր մարդիկ, նոր սեր  
Ու հին հույզերի անվերջ փլուզում.  
Վնիր դարն ե այսքան նոր յերգեր հյուսել,  
Այս ինչ ուրախ ե հնչում մեր լեզուն,  
Ի՞նչ գրոհ ե սա, ո՞, ինչ ցնծություն,  
Աշխարհն են փոխում անթիվ միլիոններ,  
Ու ամենուրեք լսում եմ իմնդուն,  
Արևոտ կյանքի — դալիքի ձայներ...

✓ ԱՊԱԳԱՆ — ՆԵՐԿԱ

Մի լեռնային լճի ափին  
Ու լայնանիստ սարահարթում,  
Ստվերի տակ ճերմակ ամպի՝  
Մի նոր քաղաք եր գղրդում:  
Հանդիպում են այդ քաղաքում  
Գնացքները արագընթաց,  
Ու սելսերն են զիլ զբնդում,  
Լուսաբացից մինչ լուսաբաց:

Անց են կենում կայարանից  
Ուզեուներ բազմահազար,  
Փողոցները — պայծառ ու մեծ —  
Աղմկում են գիշեր ու դոր...  
Ու քաղաքից դեպ մոտակա  
Հանքահորերն բազմաբեզուն —  
Սլանում ե ելեքտրական  
Նորակառույց յերկաթուղին:

Մարմարահատ բանվորների  
Յերգը հնչեղ ու հորդահոս  
Ցնցում ե սիրաը լեռների,  
Ինչպես հեղեղն վորոտախոս:  
Ձայնակցում ե այդ հաղթ յերգին  
Թանձր անտառը հողմահար,  
Ու նրանց հետ մի մեծ յերկիր  
Իր վերելքը յերգում ե հար:

Աղմկում են այդ քաղաքում  
Բյուր մանուկներ ժիր ու խաժուժ,  
Պատանիներ լայնաթիկունք  
Ու աղջիկներ արևանուշ:  
Այգիներում վարդեր, վարդեր՝  
Յեվ յերփներանդ, և՛ շողշողուն,  
Հեռվում ծիուն, հասուն արտեր —  
Ու վոսկեհասկ ծանը ցողուն:

Այս քաղաքը ժամանակին  
Կոչվել ե գյուղ — Յելենովկա,  
Չուր ե մտել արևծագին  
Ծեր պյուղացին — ձեռքին ուռկան:  
Յուր թշնամու, աւ ծովի դեմ  
Մաքառել ե — հացի համար...  
Այժմ կյանքը վառ կերտում են  
Հզորազոր բյուր կոմունար:

Լճի կապույտ ու պարզ ծոցից  
Խոր փորել են փրփուր մի գետ,  
Դարձել ե նա են որվանից  
Հորդ լույսերի հանգուցակետ:  
Ու հոսում ե ջուրը վարար,  
Իջնում ե լիճն — վեհությունից,  
Բարախում ե կուրծքը նրա՝  
Վորպես հուժկու, հանճարեղ սիրտ:

Թաղաքի դեմ կատարը ցից,  
Խնչպես գլուխը հովագի,  
Դուրս ե ցատկում ծովի ծոցից  
Կանաչազարդ մի հին կղզի:  
Հնադարյան բլրի լանջին,  
Ուր յեղել ե յեկեղեցի,  
Բարձրանում ե աչքերով ջինջ  
Շենք մի լուսե ու գեղեցիկ:

Իսկ ներքեռում — ծառուղիներ,  
Սանատորիան՝ լուսավարար,  
Շատրվանն ե ընդզում վեր՝  
Ցոթ գույներով գլորվում վար:  
Մարդիկ՝ շուրջը շատրվանի,  
Ծառերի տակ — նստած խաղաղ,  
Նայում են այդ ծիածանին  
Ու հրճվում են ջրի խաղով:

Ու աշխարհում մեր լեռնաստան,  
Ուր ձորերն են հանգուցվում խոր,  
Վորպես կանչը ուրախության,  
Ճիշն ե լսվում յերկաթուղու:  
Ծինելույղի անտառներից  
Ծուխն ե փովում լճի վրա...  
Քանի պոետ կա յերազած  
Այս որերը և՛ ջինջ, և՛ վառ:

Հասել եմ յես այս որերին,  
Ու արցունքի ել վոչ մի լար  
Զի ծանրանում իմ քնարին,  
Իմ քնարին՝ սրտիս պես վառ:  
Նրա համար եմ յես ինդուն,  
Ու քնարս չի տրտնջում.  
Ո՛, յերկիր իմ, քո վեհ յերթին  
Սրտապարար վողջույն, վողջույն:

Վ Ա Թ Ի Ֆ Ա

Յես ու Լաթիֆան—խաժակ քրդուհին,  
Մի հանրահոչչակ ճարտարապետ,  
Հեծած մե ձիեր, ձիերն ամենի,  
Կարում անցնում ենք սար, ճոր ու գետ.  
Ուղին դարիվեր, վոլորապտույտ,  
Ժայռերի շուշն ե ընկել վրան,  
Դիմացից՝ գեղի յերկինքը կապույտ  
Հասակն ե ցցվում խրոխտ լերան:  
Գարնան գիշեր ե, ցոլում ե վերից  
Լուսինը՝ վորպես հսկա գոհար,  
Կայծեր են ցայտում սուր հարվածներից  
Խճաքարերը սմբակահար:

Հանդարա գնում ենք Ստալինարադ,  
Հայրենի գյուղը ընկերուհուս,  
Լաթիֆան այնպես հուրհուրան, հպարտ  
Յերգում ե վճիտ ու սրտահույզ:  
Յերգում ե նա նոր քրդական մի յերգ՝  
Յել բազմահնչյուն, և՛ հորդաբուղի.  
Ո՞, այդ յերգում կա ցնծագին վերելք,  
Նոր մարդ, նոր աշխարհ, նոր կյանք, նոր գյուղ...  
Ո՞, այդ յերգում կա արենելյան բույր,  
Ու վեհությունը մեր լեռների.  
Սրտի ակունքից, դերթ հստակ աղբյուր՝  
Պոռթկում ե նա՝ կարկաչով լի...

Վառ գեղեցկությամբ մի լիալուսին  
Լողում ե յերկնի կապույտի մեջ,  
Յել նա հանդարտվում ու կարդում ե ինձ  
Իր կյանքի գրքից մի դյութիչ եջ:  
Նա պատմում ե ինձ, ինչպես մի գիշեր,  
Յերբ հողմն եր թակում դոները փակ,  
Յերբ մարել եյին ձրագի լույսեր,  
Ներսում վառվում եր բութարին բարկ,  
Ինչպես այդ գիշեր յերազուն նստած  
Պատկերել ե նա նախագծեր,  
Յել առավոտյան լույսը չբացված՝  
Նոր գյուղի հիմքն ե հաստատ գցել...

Ու հիմա այնտեղ, ուր կուտակվում են  
Կապարամպերը կայծակնածին,  
Ուր շղթան փշրած բքաշունչ քամին  
Թռչում ե ինչպես մոլեգնած ձի,  
Յել ուր գետերն իրենց սլացքին  
Վերահաս ցրտից համրանում են,  
Ուր ծաղիկների գորգերովն անգին  
Լեռները գարնան պճնվում են,  
Այնտեղ ընկած ե նորաշեն մի գյուղ՝  
Շենքերով շողուն ու բազմահարկ:  
Յերբ նոր եր շիկնում արել ծագող,  
Բնկերուհուս հետ այդ գյուղն հասանք...

\* \* \* \* \*

Ահա կանգնել ենք մի գեղածիծաղ,  
Լուսալի շենքի բուրոտ բակում,  
Մեր գլխի վերև մի հոյակապ ծառ  
Իր ճյուղերի տակ բակն ե ծածկում:  
Շենքից դուրս գալով՝ մոտենում ե մեզ  
Ալեհեր, ժպտուն մի ուսուցիչ,  
Զեռքս ե սեղմում հին ծանոթի պես՝  
Յել ջերմաղղաց, և՛ սիրալից:

Ու մենք միասին անուշ զըռւյցով  
Շրջում ենք բակումն այդ լայնարձակ,  
Չորս կողմը բուրմունք, ծաղիկների ծով,  
Իսկ ծաղկի ծովում — մի վեհ արձան:

Մինչ մենք շրջում ենք՝ հնչում ե զանգը,  
Ու դուրս ե թափվում խինդի հորձանք,  
Միրտս կապում ե, ինչպես յերկինքը,  
Դարնան զունագեղ մի ծիածան:  
Բակը նախշում են այնքան մանուկներ,  
Վառ պատանիներ — ուշիմ ու կիրթ,  
Նրանց սրտերում — կյանքի խարույկներ  
Աչքերը շողուն՝ ինչպես հակինթ:  
Իզուր չի կորչում և վոչ մի վայրկյան,  
Մկանում ե ահա ձկուն մարդանք...  
Կոլեկտիվ վողի, կոլեկտիվ կյանք,  
Սրեստ աչքեր, սրտի հուզանք,

Ներկա յենք լինում մենք Արևելքի  
Գրականության ուսուցչի դասին.  
Դասառու ֆաթման, մի նրբակերտ կիռ,  
Խոր վերլուծում և մեծ ֆրուտուն,  
Մայրենի լեզվով կարդում են նրանք  
Հատվածներ, յերգեր «Շահնամե»-ից,  
Ու վորպես գուլալ լեռնային վտակ  
Հոսում ե խոսքը ակունքներից:  
Ու Հայնեյին են յերեմն հիշում,  
Բաղվաճքներ բերում հոմերոսից.  
Ո՛, այս դեմքերը աստղանախշուն  
Յերկինքների պես — գերում են ինձ:

Ուր վոր նայում ենք՝ մաքուր և ու ջինջ,  
Դասարաններում՝ լույսերն առատ,  
Ու ներս են նայում պատուհաններից

Մեր վեհ լեռները անտառապատ:  
Մեղ առաջնորդող սևաչ քրդուհին,  
Վոր քիմիկոս և այս գպրոցում  
Առաջարկում ե այցելել մի հին,  
Հարուստ թանգարան — հին ամրոցում:  
Յերկինակամարում վոչ մի ամպի բիծ,  
Կապտավուն ծովով և վառվում անբոց,  
Յեվ մենք դուրս գալով գպրոցի բակից,  
Ուղերդում ենք գեղի ամրոց:

Թանգարանը գյուղի, հոյակապ մի շենք՝  
Ընկել ե բլրի ստորոտում.  
Յես ու ընկերս բարձրանում ենք՝  
Մերթ մտամոլոր ու մերթ ժպառուն:  
Լեռների վրա մեր այս բարձրաբերձ  
Դարունն ե փթթում խոր խնդությամբ,  
Ու արշալույսն ե բոցիլտաւմ անբիծ  
Գույների, շողի առատությամբ:  
Յեվ բորբռքվում ե սիրտը արեկի,  
Վորպես յերկաթի հոկա հալոցք,  
Կարծես թե մեկը կապույտ վերեկից  
Վոսկե շողեր և թափում խուրձակուրձ:

Պատմում ե նա ինձ այրող հուզմունքով  
Սիամանթոյի սիրս մասին, —  
Խաջեյին սիրել ու մաքառումով  
Հաղթել ե զոսող ել Աղասուն,  
Մենակ կովել ե տերերի դեմ,  
Հնչաղուրկ, անհող, այդ սեպ աղան,  
Անվրեալ նետով փշոել ե, ջարգել  
Իշխանագուներ, բեզ ու աղա,  
Ու բարձրացել ե Սիփանա քարին,  
Վայրի այծերին ընկերացել,  
Գերի յե գարձել Խաջեյի սերին  
Այդ կարիճ աղան — արծվացեղ:

Ո՛, պատմում ե նա մի հերոսավեպ՝  
 Ճորտի գրոհը տերերի դեմ,  
 Պատմում ե սրանց ու բուրումնավետ՝  
 Շնչավորելով ամեն մի դեղքը:  
 Պատմում ե այնպես հմայիչ վոճով,  
 Վոր ունի խոսքի այրող զյութանք.  
 Յես տարվել եյի անուշ անրջով,  
 Յերբ թանգարանի խորքը մտանք,  
 Ուր այնպես մոռայլ ու տիսրաթախիծ  
 Պատկերն ե բացվում մի աշխարհի,  
 Ու տարիների ծանրության տակից  
 Տխուր նայում ե անցյալը հին:

Ահա հին սայլը, արորը ծուռ վիզ,  
 Զեթի ճրագը — արցունքոտ աչք.  
 Ու լուծը զգին մի չալճակատ յեղ՝  
 Նայում են, զորպես մտաղատրանք:  
 Բայց իմ աչքերը ինչ վոր մի բանի  
 Մեխվեցին մեկեն նիզակի պես, —  
 Մահակը ձեռքին մի քյուրդ չորանի  
 Նկարն ե կտրել զիգզագ ճամբես...  
 Շորերը մաշված ու խայտարդեա,  
 Քոլողը՝ զորպես ձյունոտ կատար՝  
 Ջրուցում են իմ խոհուն մտքի հետ  
 Ու պատկերում են մի անցած դար...

\* \* \* \* \*

Շրջում եմ զյուղը ու խորազնին  
 Դիտում եմ դեմքերը նրբագիծ,  
 Ել չի գայլայլում յեղեփնյա շվին,  
 Իր լացող «լոլո»-ն դառնակսկիծ:  
 Ո՛, գարնանային այս լուսաբացին  
 Ժպտացող աչքեր այնքան, այնքան  
 Ցերգում են քյուրդ բանաստեղծի  
 Ցերգերը հուզիչ, հերոսական:

Նրանց լոնգության խենթ հորձանքներում  
 Պայքարի շեշտ կա, վերելքի թափ:  
 Հնչեղ զնդում ե նրանց յերգերում  
 Գալիքը այնպես պայծառությամբ...

Կոմունար քյուրդը մայրենի լեզվով  
 Հոմերն ե կարդում մտասուզված,  
 Ու աղջիկները հաճելի նազով  
 Աշխատանքի մեջ այնպես թրծված՝  
 Հետո խոսում են համաշխարհային  
 Խնդիրների շուրջ և պարզ, և խոր, —  
 Ուր են գյուղական ապշությունը հին,  
 Հարսները համբ ու գլխակոր...

Նրանք ել չկան, կորել են անհետ,  
 Ինչպես մի մոռայլ ամպամած որ,  
 Ու յերեկք, յերեկք ել չեն դառնա հետ  
 Այդ զորշ որերը — տխուր անցորդ:

Ուր են քրդական վրանաբնակ  
 Հովիվները խեղճ ու վաչկատուն  
 Ել չեն յերեսում, ել չկան նրանք  
 Մեր այս լեռների ստորոտում:  
 Ուր են, ուր կանայք — կեղտակուր, անտաշ  
 Յեվ անգրագետ, համբ ու լոին...  
 Նրանք ել չկան, անցել են անդարձ,  
 Ինչպես ձմեռը մեր՝ լեռնային:  
 Ուր են ցեղական վրիժառության  
 Սրամարերը արնավարար...

Ցերգիր, Լաթիֆա, յերգիր բարձրաձայն,  
 Ցերգինքը ջինջ ե, որերը՝ վառ...

ՏՈՆԱԿԱՆ ԳԻՇԵՐ

Պանրանիստ ուսերին ծեր Արագածի,  
Ինչպես ձյունափայլ կատարը լեռան՝  
Վեհությամբ հմայուն ու յերազածին՝  
Բարձրանում ե մի նոր աստղադիտարան.  
Մի գողարիկ ձեռակերտ, հոյակալ կոթող  
Ու ճարտար արվեստի հաղվազյուտ տիպար,  
Վոր այնպես դրավիչ, այնպես հոգեթով  
Նայում ե աստղերին — հաղթ ու տիրարար:

Ու այսոր տոնական նրա բացումին  
Խմբովին դալիս են նոր ռուխտավորներ»,  
Չորեղում թնդում են խենթ արքեցումի,  
Արեստ որերի նվազներ, յերգեր:  
Նստել եմ զովաշունչ մի պատշտամբում,  
Մանթաշի ծաղկառատ ձորի յեղերքին.  
Սարերի վերեռում յերկինքն ե ամպում  
Դեմքը մերթ մասյլում, մերթ պարզում կրկին

Մեղմորեն հանգչում ե վերջալույսը վաս,  
Ու հեռվում հովիքն ե սիրաբաղձ յերգում.  
Հիասքանչ աչքերով, հոտավետ, զվարթ  
Փովում ե Շիրակի չքնաղ յերեկոն:  
Մաքում խոների դինավառ գնդեր՝  
Յեւ ել եմ բարձրանում դեպի Արագած,  
Յերկու լավ ուղեկից ընկեր եմ գտել՝  
Մեզ հին կորսորդ, մյուսը՝ դառնարած:

Մեր ճամբին ընկած են սեպաձև ժայռեր  
Ժայռեր դարավոր, մամուպատ, մոայլ,  
Աստղերի հմայքն ե մեր հոգին այրել,  
Կարմղ ենք այս տոնին սառնասիրտ մնալ:  
Մաքառման կը ավետ վառ պահած՝  
Յելնում ենք ուղիով այս ոճագալար,  
Վերեկից նայում են լեռներ սիդապանծ,  
Ներքեմից՝ լայներախ անդունդներ խավար...

Վարսորդը պատմում ե մի արկածալից  
Ու հերիաթանման սիրո պատմություն.  
Վոչչսարի հստերն են մոտակա սարից  
Շորորան քայլերով վերադառնում տուն:  
Ու նախկին գառնարած աստղաբաշխը այս  
Յերկնքի աստղատառ սլոենի ե կարդում.  
Մերկալանչ լուսինը — սահուն, հեղանագ,  
Կախարդիչ կնոջ պես նայում ե, ժպտում:

Անցնում են նույն ճամբով ուսանող խմբեր,  
Յեկել են բանվորներ հանքերից մոտիկ,  
Գետինը դոփում են մի խումբ հանքափոր,  
Զլապինդ, առնական ու խրոխտ մարդիկ.  
Աստղերի աչքերն են մեր սիրաը զերել,  
Մաքերին տվել են արծվային թոփչք,  
Կարում են ձորերը խորախոր, անել —  
Վորպես պիրկ աղեղ՝ լարած ջանք ու ճիգ...

Ու ահա կանգնել ենք լայն հրամարակում,  
Ուր վեր ե խոյանում շենք մի սրածայր,  
Խնդության յերգերի հուրին ե համակում  
Գիշերը, աշխարհը ու սիրաս պայծառ:  
Իջնում են վերսլաց աշտարակից ցած  
Ու խտավոր չահեներ — զույգեր թևանցուկ,  
Մի սեաչ գեղսեհի այնպես ե հուզված,  
Վոր լուս թափում ե հրձկանքի արցունք:



Ճեղքելով բազմության անտառն ալեկո՞  
Յես վեր եմ բարձրանում կարոտով անդուսպ.  
Սրընթաց ընկնում ե լազուր յերկնքից  
Բոնկուն կայծելով հուրհեր մի ասուլ  
Ներսում եմ: Հոգիս լի հրճվանքի բոցով՝  
Դնում եմ աչքերս հեռագիտակին.  
Բացվում ե անսահման, հարաշարժ մի ծով —  
Աստղանախշ, նրբակերտ գորգը յերկնքի:

Հիասքանչ բնության վեհության առաջ  
Ուռանում ե հոգիս ու անհունանում,  
Հույզերս նոր ավյուն, նոր թևեր առած՝  
Այդ ժւը են, ժւը են այդպես սավանում:  
Տես, այդ ինչ հմայիչ աչքեր են փայլում,  
Ո՛, նրանք անծանոթ աշխարհներ են մեծ,  
Աստղեր են հեռավոր, հավետ թափառուն,  
Վոր այդպես հմայում, մաղնիսում են մեզ:

Սակայն այդ աչքերից ավելի դյութիչ,  
Ավելի գերող են աշխարհն այս պայծառ,  
Այդ գաշտերն անսահման, այս յերկինքը լինջ:  
Այս կյանքը, ո, կյանքը՝ ծաղկած դալար ծառ:  
Ու ահա իջնում եմ աշտարակից ցած,  
Նստում եմ մոտակա ձորակի ափին,  
Մտքերիս ալեծուփ ովկիանն ընկղմված՝  
Նայում եմ մեր կտրած խորդուբորդ ճամբին:

Հուշերիս ճեպընթաց պնացըը նստած՝  
Կտրում եմ պատմության վոլորուն ուղին.  
Բարձրանում ե իմ դեմ հավիտյան անդարձ  
Սնհունում խոր թաղված անցյալը մեր հին:  
Տեսնում եմ զղյակներ — ցքեղ, վասկեառ,  
Իշխաններ հայկական և փոքր, և մեծ,  
Տիկիններ փափկասուն, աղջիկներ մարմար —  
Ցոփության, վայելքի, կրքի ծովի մեջ...

Ու անվերջ հոսում ե թանկարժեք գինին.  
Յնձում են տերերը «յերջանիկ» յերկրի,  
Ո՞ւմ ինչ փույթ, վոր անթիվ տղամարդ ու կին  
Ապրում են հյուղերում կարիքին գերի:  
Ո՞ւմ ինչ փույթ, վոր անսեր, անշուք անկյունում  
Մեծաշուք ու շվայտ մի հին վոստանի  
Սովահար մեռնում են, գեղնում, թառամում  
Տիրադեմ, վոսկրացած հաղար պատանի:

Ո՞ւմ ինչ փույթ, վոր չարքաշ չութի գյուղացին,  
Վողջ տարին թափելով քրտինք ու արյուն,  
Միշտ կարոտ ե մնում մի պատառ հացի  
Ու կյանքում չի տեսնում ինդության գարուն:  
Ո՞ւմ ինչ փույթ, վոր ծեծի, ահի ճանկերում  
Անզատ ումիկն ե տառապում անլուր,  
Ո՞ւմ հոգն ե, վոր հարուստ, յերջանիկ յերկընում  
Մուրացիկ մարդիկ են շըջում ամենուր...

Պալատում, դղյակում — մոլի խրախճանք,  
Ճորտատեր վանքերում անզուսպ գեխություն,  
Խոկ կյանքի հատակում՝ մահացու տանջանք,  
Յել թափիծ, և կոկիծ, և հիվանդություն...  
Բայց մըստ, անարև, անթիվ հյուղերում  
Մեծանում ե ցաման, վրեժի վոդին,  
Վոր մի որ ընդվզի՝ յելնի — աններում,  
Վիրավոր վագրի պես՝ խենթ ու մոլեգին...

Ու ահա տեսնում եմ, վոր ուխտ ե գնում  
Այդ տանջված, ժրաջան, խավար գյուղացին,  
Վանքերին, սրբերին նվեր ե տանում՝  
Ծիծաղը խառնելով սրտառուչ լացին:  
Ո՛, մեկը տանում ե իր միակ մաքին,  
Մի ուրիշն՝ իր աղիղ յեզը սեաթույր,  
Տես, ահա, ծայրահեղ չքավոր մի կին  
Իր միակ չալ հաջու ե տանում սրբի դուռ:

Ո՛, անդարձ գնացած որել դժնդակ,  
Եղմւը եք հույղերիս գետը պղտորում.  
Յես հիմա ապրում եմ վառ արեի տակ,  
Մայիսյան վարդերն են սիրտս զարդարում:  
Յես հիմա լսում եմ յերջանիկ յերկրիս  
Տոնական գիշերվա յերգերը դվարթ,  
Յերջանիկ յերկրիս հետ ցնծում ե հոգիս,  
Հոգուս հետ ցնծում են սար, անտառ ու արտ:

Տեսնում եմ վասվաւմ են աստղերից ել վառ  
Լույսերի լամպերը՝ շողշողուն վողկույզ,  
Ու վորպես գիսաստղ, վարպես յերիվար՝  
Ելեկտրաքարչն ե թռչում դյուզից պյուզ:  
Ել չկա հայկական յեղասայլային  
Ու մահվան թափորի դանդաղկոտությամբ  
Իր արտը ակոսող չութի դյուզացին, —  
Նո հիմա հեծել ե ելեկտրական ձին:

Լույսերի լամպերը՝ կարմրավառ կակաչ՝  
Նախշել են խավարը կես գիշերային,  
Սակայն գեռ հնչում ե մեր քաղցրակարկաչ:  
Սպենդիարյանի չքնաղ հնդելին:  
Այդ յերգը հնչում ե դարձյալ սբառահույզ,  
Ինչպես մանկությանս ժամանակներում.  
Ո՛, վողջույն քեզ, վարպես մեծ ու նըբանյուս  
Այդ սիրտս ե կարկաչում քո ջինջ յերգերում:

Չորերում լսվում են հար ու անդադար  
Գեղանուշ ձայները տոնական յերգի,  
Աստղերով, արեսով ու իր խորությամբ  
Յերկինքը պոկել հնք ու թափել յերկիր:  
Աստղերի նվաճման տոնն ե այս գիշեր,  
Արվեստի, գիտության, հերոսության տոն,  
Ցնծության կրակն ե իմ սիրտը կիզել,  
Վաղջույն քեզ, գիշեր, գիշերն իմ խնդուն:

## Զ Ո Ն Ե Ր Գ

(Ղուկաս Ղուկասյանի հերոսական հիշատակին)

Աշուն ե: Բերքառաս, բերկրալի աշուն:  
Նատել եմ՝ պուրակում մտախոն ու լուռ.  
Մաքրաջինջ յերկինքը, վորպես մի անհուն,  
Անսահման ովկիանոս՝ խաղաղ ե ու լուրթ:  
Իմ շուրջն ամեն կողմ ծիծազում են արդ  
Ծաղիկներ, ծաղիկներ՝ և՛ զունեղ, և՛ վառ.  
Արել վերելից այնպես ձեռնառատ  
Վոսկեշաղ անձրև ե հորդում — թափում վար:

Պուրակի կենալունում աստղադիտարան,  
Իսկ շուրջը, շողշողուն շենքեր ու շենքեր,  
Մեզ հովից թփերը փարում են իրար,  
Առվակը կարկաչով ճամբա յե ընկել:  
Մոտակա ծառուղով անցնում են արագ  
Կենսաթինդ աղջիկներ, ջահելներ թիկնեղ,  
Բորբոքվում ե, վորպես դյութական մի այդ  
Իմ յերկրի առողյան մեծ ու փառահեղ:

Ու ահա խայտալով՝ զերթ պարող ալիք,  
Մշամավառ ժպիտը խոսուն աչքերում,  
Թեկի տակ պայուսակ, ձեռքին խաղալիք,  
Անցնում ե մի աղջիկ դանդրահեր, սիրուն:  
Անցնում ե աղջիկը... բայց մի այրող հուշ  
Տիրում ե մտքերիս, հույղերիս, հոգուս.  
Հիշում եմ քրոջս աչքերը խաժուժ  
Ու դանդուր վարսերը սևաթույր վողկույզ:

Հիշում եմ. Աղուն եր, սոսկալի աշուն:  
Ահհաց եր, անկըալ մեր խրճիթը խարխուլ.  
Հեկեկում եր քամին, ինչպես կույր աշուղ,  
Մեր յերգը լալկան եր, անարե, տիտուր:  
Ռազմադաշտ եր զնում քրտնաջան գյուղացին,  
Ել վոչ վոր չեր հերկում արտերը խոպան,  
Յերկերը կարստ եր մի պատառ հացի,  
Մարերում չեր յերգում և վոչ մի չորան:

Հիշում եմ այնպես վառ՝ կարծես յերեկ եր,  
Ունեյի մի չքնաղ, լուսաժպիտ քույր,  
Հայացքը գարնային խնդուն ցերեկ եր,  
Հոնքերը թռչնի թե, մազերը գանգուր,  
Ո՛, նոր եր կոկոնում, հասակ առնում նա,  
Յերբ բուքը մահաշունչ մեր դուռը ծեծեց,  
Ու սովը ժանտատես մի դողի նման,  
Մեր խրճիթը մտավ՝ վորպես կրծող ցեց:

Նիհարեց, գմգունեց իմ քույրը բոկոտն,  
Աշքերը փոս ընկան, հուրերը հանգան,  
Յեվ աշնան տերամած մի ցուրտ առավոտ  
Նա մտավ անկողին՝ հրվանդ ու անկար:  
Որերով տառապեց, անընդհատ հաղաց, —  
Խրճիթը խոնավ եր, հատակը՝ քարոտ,  
Ու յերկրիս հուրերան այգը չտեսած  
Մահացավ իմ քույրը՝ սե հացի կարստ:

Անխնա հնձում եր սովի գերանողին...  
Ո՛, քանի մանուկներ մեռան սովաճար,  
Իշխում եր բոռնցքը ժանտ խմբավետի,  
Մեր կյանքը գիշեր եր արնալի, խավար:  
Ու չկար վոչ մի վառ ապագա մեր դեմ  
Բոհության ճիրանն եր մեր շունչը խեղում,  
Մեր սրտում դառնորեն մահացող վարդեր,  
Չունեյինք վոչ ծիծաղ, վհչ սեր, վհչ խնդում:

Բայց ահա հուշերիս նժույգին նստած  
Մտքերս թռչում են հեռու, շատ հեռու.  
Հիշում եմ մի չքնաղ, մի վեհ լուսաբաց  
Այդ դժնի, մահահոտ և ցուրտ որերում:  
Հիշում եմ մայիսյան որերը Ղարսում,  
Նրան եմ վերհիշում այդ խիզախ հերոսին,  
Տերերի, հնի դեմ մարմացած ցասում  
Այդ խոհուն, խանդավառ մարտիկ Ղուկասին:

Աշուն եւ Վոսկեարս, ցնծալի աշուն,  
Ու առուն եւ յերգում մեղմ, քաղցրակարկաչ,  
Հիշում եմ Դուկասին, մեր այդ բոցաշունչ,  
Այդ բմբոստ, այդ կրակ ապստամբին քաջ:  
Հիշում եմ մայիսյան մարտն հերսուական,  
Որերը փոթորկոտ, անզուսպ, հողմածեծ...  
Հիշում եմ հարվածը մեր մասսայական,  
Վորն զաղիր, բարբարոս կարգերը ցնցեց:

Հիշում եմ կոփկը Արգինեյի մոտ,  
Ո՛, մարտը գաժան եր ու անհավասար...  
Ընկնում ե ահա, վիրավոր, արնոտ,  
Անվեհեր, անձնազոհ մի յերիտասարդ:  
Ընկնում ե Ղուկասը հեռավոր ձորում  
Թշնամու կրակի հորդ կարկուտի տակ.  
Ո՛, նրա բորբ վերքից արյուն ե ծորում,  
Մարում են աչքերը և դյուժիչ, և բարկ...

Ընդվզման կրակը վառվեց մեր սրտում,  
Փրփրաց, փոթորկեց ծովը ցասումի  
Յեվ ինչպես վոր գարնան գետերն են հորդում  
Փովեց մեր հոգում և արնավառ, կարմիր:  
Գյուղերում, հանքերում, գործարաններում:  
Մեծացավ ու կոփկեց պայքարի վոգին,  
Ու ըմբոստ գնդերը մեր խոր ձորերում  
Դարձավոր զայրույթով բարձրացան վատքի:

Ու յելան գրոհի հին աշխալհի դեմ,  
Փշեցին կարգերը բիրտ ու բռնակալ,  
Յեվ մինչև այսոր ել գրոհում են դեռ  
Մարտական շարքերը մեր հաստատաքայլ:  
Նոր պայքար, նոր կոփվ հին թշնամու դեմ,  
Մաքառում յերջանիկ գալիքի համար,  
Ել ով կարող ե մեր կերտածը քանդել,  
Հանգցնել մեր վառած կրակներն ահմար:

Ու ահա լոռում եմ յեշպը մուբձերի,  
Հզկում են վիթխարի գրանիտ քարեր  
Ինչ անուշ և հնչում կարկաչը ջրի,  
Ինչ ուրախ և այս ոռու վարպետն ալեներ:  
Նա զվարթ հարթում ե քարերը վայրի  
Յեվ նըանց տալիս և նոր տեսք ու նոր փայլ  
Վոր վաղը բարձրանա նըանց կատարին  
Սիրելի Դուկասը՝ վեհ ու հաղթաքայլ:

Ու ահա կանգնել ե կուռ պատվանդանին  
Դուկասի արձանը խրոխտ, տիրաբար  
Հասարակ, բայց վեհ մի դըոշակիր՝  
Աչքերով վառվուն ու արևափայլ  
Ու նայիր, ինչ համառ, ինչ հաստատակամ  
Դրոնի յե գնում հերոսն անվեհեր.  
Ո՛, այդպես —վեհորեն, այդպես հաղթական  
Լեռնային արծիքն ե ճախրում դեղի վեր:

Այդ բոցոտ, ռազմաշունչ սպարտակյանին—  
Քսանմեկ տարեկան Դուկասին պայծառ  
Հաղթական յերկիրս ձեռքով մարդկային  
Կերտել ե անխորտակ մի վեհ հուշարձան:  
Եր թեին հրացան, մարտական դիրքում,  
Արեստ աչքերը գալիքին հառած  
Յերջանիկ որերի կարստը հոգում  
Նա հաստատ հավատով նետվում ե առաջ...

## Ո Ա Զ Ի Ց Ե Զ Ն Դ Ի

(Պ Ո Ն Մ)

Մի գեղածիծաղ, աստղալի դիշեր,  
Հեռավոր, անհայտ, մոռացված գյուղում,  
Խաշնարած Զնդու հինավուրց հյուղում  
Լսվեցին լացող նորածնի ձիշեր,  
Ու աշխարհ յեկավ մի սեկաչ մանկիկ,  
Վոր այս պոեմիս հերոսը դարձավ,  
Ու մաքառումով լյանքի հատակից  
Լերան կատարը յելավ բարձրացավ,  
Վոր խիզախորեն իր նավը մղեց  
Բնդղեմ փոթորկի, ալեկոծության,  
Վոր... սակայն լսեք վիշտն ու խինդը մեծ  
Իմ այս տողերի նվազածության...

Խաշնարած Զնդու անշուք խրճիթում  
Ծնվեց մի տղա, անունը Ծաջի:  
Այն Զնդին ուներ մի շուն, մի կատու,  
Մի քանի վոչխար, մի սիրուն աղջկի:  
Այն Զնդին ուներ մի հոգեղմայլ  
Զնաշխարհիկ կին՝ անունը Զողան.  
Այն Զնդին ուներ մի ալեղարդ մայր  
Ու մի ողառավ տատ՝ անունը Սայրան:  
Լեռների լանջին, ժայռի ստվերում  
Մի արտ ել ուներ այդ հովիվ Զնդին.  
Ո՛, նա ուրիշի չութով եր վարսում  
Այդ հողամասը՝ ուժատ, անջրդի:

Հովիվ եր Զնդին հիսուն տարեկան,  
 Սակայն մազերում՝ վոչ մի ճերմակ թեր  
 Մանուկ որերից այդ պարթե հսկան  
 Լոկ փրփրացող թարմ կաթ եր կթեր  
 Ծծել լեռնային ողը կենսաբեր,  
 Աղբյուրի ջուր եր ըմպել անհագուրդ,  
 Մաղկի բույրով եր մեծացել, արբել  
 Այդ ծեր — ջահելք, այդ հովիվը քյուրդ:  
 Իր չոբան հորից ժառանգել եր նա  
 Նամուս, քաջություն, հյուրասիրություն.  
 Վոչ վոք չեր կարող չարաչք մոտենալ —  
 Զնդին իր հոտին հսկում եր արթուն...

Ահա այն որը, յերբ ձնվեց Ռաջին,  
 Նստել եր Զնդին սառն աղբյուրի քով,  
 Ականջ եր դնում ջրի կարկաչին,  
 Հիանում կապույտ — լաղուր յերկնքով...  
 Հովար փովել եր ծով կանաչի մեջ,  
 Այծերն եյին լոկ կոթնել ժայռերին,  
 Իսկ Զնդու կողքին նստել եր մի մեծ,  
 Հաստավիզ գամփո՞ն խիստ ու ահուելի:  
 Զնդու աչքերը հոնքերի տակից  
 Բոցկառում եյին՝ ինչպես զույգ խարույկ,  
 Բարձրանում եյին մտքի հատակից  
 Հուշեր սրբազն ու հավետ առույգ:  
 Յեվ հաջորդ որը Զնդուն լուր բերին,

Թե Զոզանն ծնեց մի թիւիկ տղա.  
 Ինչպես յերաշտից խանձված արտերին  
 Հանկարծ կենսատու հորդ անձրեւ տեղար,  
 Այնպես ել Ռաջու ծննդյան լուրից  
 Զերմ ջահելությամբ հուրհուրաց Զնդին...  
 Ո՞ւ, տղան վոր կա՛ ուրիշ ե, ուրիշ,  
 Հովիվը սիրում ե տղա հաջորդին.  
 Յեվ այդուս անվերջ սերունդից սերունդ

Կանցնի կեռ ցուլպը՝ անդին հիշատակ,  
 Հովիվ կղառնան Զնդիները քյուրդ,  
 Կապրեն կեղտակուր վրանների տակ...

Ռաջին ել բռնեց պապերի ուղին՝  
 Մանուկ հասակից դարձավ դառնարած  
 Ու սար եր տանում դառները գյուղի  
 Արևածագից շատ ու շատ առաջ:  
 Ո՞ւ, ամբողջ տարին բոկոտն, կիսամերկ  
 Իր գառների հետ շրջում եր Ռաջին,  
 Անուշ յերգում եր սրտառուչ մի յերգ  
 Բարձրաբերձ ու զով լեռների լանջին.  
 Մեծանում եր նա սալերի գրկում  
 Իր պապերի պես՝ բնության գերի,  
 Յեվ նրանց նման «լոլո» եր յերգում,  
 Յերանի տալիս յերկնի հավերին:

Նախանձում եր նա և բռւռն ատում  
 Թէ բեկ Բըոյին, թէ ուս Մուլապին.  
 Բըոն հարուստ եր, հզոր, մեծատուն,  
 Իսկ լնչ եր այն խեղճ խաշնարած Զնդին...  
 Բըոյի տղի շորերը քքեղ  
 Կողքին կապում եր արծաթապատ սուր,  
 Ել ինչով տոես իրեն չեր զուգել  
 Այդ չեռոտ Զայդոն՝ ցուրտ, մահասարսուռ.  
 Ինչեր չեր անում այդ փոքրիկ աղան,  
 Կարգում եր գրքեր անձանոթ լեզվով.  
 Թեկուղ վողջ գյուղը հաներ կախաղան՝  
 Նրա կամքի դեմ ով դուրս կպար, ով...

Ռաջին հաճախ եր նստում քարափին,  
 Անդունդին հառում աչքերը թաթճոտ,  
 Նայում վոլորուն գետակի ճամբին,  
 Զըերին փրփուր, հավերին անցորդ,

Համակա տարվաւմ եր զառ յերազներով,  
 Ոգում կասուցում չքնաղ դղյակներ,  
 Ու վորսյերազի հետքից վազելով՝  
 Քիչ եր մնում՝ խոր հեղեղատն ընկներ...  
 Յերբ սթափվում եր յերազուն Ռաջին,  
 Նորից նույն աշխարհն, նույն լեռները լերկ:  
 Ու այդ ահալի լեռների լանջին՝  
 Թափալի լացրդ սրինդների յերդ...

Բնության ծոցում — աճում եր Ռաջին  
 Ու կոկոնում եր, վարպես վայրի վարդ,  
 Յերբ պատերազմը՝ անդութ, ահածին՝  
 Արյունով ներկեց ձոր, անտառ ու արտ,  
 Յերբ տիփը հրեշ, սովու անտորույն  
 Մահվան մատնեցին յերկիրը համայն,  
 Յերբ մարդը մարդուն մորթում եր, մաշկում,  
 Նույնիսկ մի պատառ չոր հացի համար,  
 Յերբ ամայացավ ոյուղը վշաահեծ,  
 Ու ել հոտերը սար չբարձրացան,  
 Յերբ աղջիկները ու հարսները հեղ  
 Մի մեծ, վիթխարի վշտից համբացան...

Սոսկալի սովը՝ մի համաճարակ,  
 Սշխարհակործան հիվանդության հետ  
 Ներս մտավ նաև մի խարխուլ տնակ,  
 Ուր հառաջում եր պառավու ալեհեր,  
 Ուր մանուկները հաց եյին հայցում,  
 Ուր տնքում եր մի հաղթանդամ չորան,  
 Ուր մայրը գրկած դառնաբած Ռաջուն՝  
 Լացով հիշում եր հին կյանքի ճամբան...  
 Ու որեր անցան... հյուզում մնացին  
 Լոկ Ռաջին վորբուկ ու իր գորշ կատուն.  
 Բոլորը մեռան, անդարձ գնացին,  
 Իսկ տրտում Ռաջին մտավ մանկատուն:

Այդ մանկատունը խարիսխ եր զյել  
 Հին Գյումբու բերդից հաղար քայլ հեռու.  
 Դիմացը՝ վսեմ Արագածը ծեր,  
 Իսկ ինքը՝ տոչոր, վոչ ծառ, վոչ առու.  
 Դա մի ինքնիշխան փոքրիկ քաղաք եր  
 Իր որենքներով, տերերով, բանդով.  
 Կարծես այդտեղ եր յեկել, հավաքվել  
 Մի պարտված բանակ՝ վողջ ապարատով:  
 Վեհանիստ շենքեր, սե, մոայլադեմ,  
 Նրանք նման չեն Զնդու խրճիթին.  
 Քմահաճ բախտի նժույգը նստել  
 Պալմտ ե յեկել Ռաջիյե Զնդին...

Պալմտ, ինչ պալմտ այդ անհույս ձմռան...  
 Հին զորանոցներ՝ մոայլ, անժպիտ.  
 Վերից վար չափեց անդզեց նրան  
 Կառավարիչը և դաժան, և բիրտ.  
 Նրա նայվածքը խոցով եր ու չար,  
 Զեռքին բոնում եր միշտ դալար ճիպոտ,  
 Հին խմբապետ եր յեղել անպատճառ,  
 Այդ եր վկայում կղակը ճարպոտ.  
 Նրա հայացքից սարսած, սոսկաց,  
 Կարծես փոքրացալ, կծկվեց Ռաջին,  
 Եր սբառում ցավի դառն կսկիծ դկաց,  
 Բայց նա պատվարեց դետակը լացի:

Ռաջին մենակ չե, դալիս են ահա  
 Նրա պես ուժատ, նորանոր վորբեր,  
 Գալիս են անգելը հիվանդ, սովահար,  
 Աչքերում սարսափ, շրթներին՝ վողբեր  
 Գալիս են նրանք դաշտերից խոպան,  
 Գյուղերից ամա, քաղաքից ավեր...  
 Մեկի պալերը յեղել են չորան,  
 Մեկինն հողագործ, մյուսինը՝ բանվոր.  
 Յես հաղար ասեմ, դու՝ տառը հաղար,

Գալիս թափվում են մեկ մելի դլոին.  
Հյուծված են նրանք, սկսում են հաղաւ,  
Այտերը՝ աշնան տերեներ դեղին:

Ծեծն եր այդ բահտի ամենահղոր  
Դաստիարակը «անհիշաչար մայր»  
Ու ահա մի որ, աշնան լալկան որ՝  
(Այդ հուշը Ռաջին միշտ կպահի վառ.)  
Մի ինչ-վոր անմեղ չարության համար  
Շիլաչք Յեղորը «սաստեց» Թաթուլին.  
Չողը բարձրացավ, թափով իջավ վար  
Ուղիղ Թաթուլի վտիտ արմունկին.  
Ճչաց Թաթուլը, գալարվեց մարեց,  
Իսկ «դաստիարակ» Յեղորը զուաց.  
— Վերցրեք սրան, շուտ, հիվանդանոց...  
Ու ինքը անփույթ սուլելով գնաց...

Շաբաթներ անցան: Թաթուլը յելկավ,  
Բայց լոկ մի թե կար նրա ուսերին...  
Աչքերում վառվող կրակը չկար,  
Ծերության ճյունն եր իջել հույզերին.  
Ել չեր թովում մեր Թաթուլն աշխույժ,  
Նա խույս եր տալիս մարդկանց հայացքից,  
Թաթիծ եր իջել աչքերին խաժուժ,  
Սրտին՝ տխրամած ու դառնակսկիծ.  
Մի ուրիշ մանկիկ՝ անունը Արամ,  
Մստը Հոթորի ծեծի տակն ընկավ.  
Արամին վերցրին, ուշաթափ տարան,  
Ու նա ել յերբեք, յերբեք հետ չեկավ...

Վորպես մի հմուտ, «կլասիկ» ծեծող՝  
Հոչակ եր հանել Կնուտ Արտաշը.  
Ծեծում եր անհագ այդ արյուն ծծող,  
Այդ հանրածանօթ պարոն անտաշը.  
Մանկատներում չկար մի վորբուկ,

Վոր այդ կնուտից խույս տված լիներ...  
Գալիս եր հանկարծ ինչպես ձմռան բուք՝  
Մոայլ ճակատին կնճիռի լեռներ.  
Կնուտ Արտաշին ով չեր ճանաչում,  
Ո՞վ չեր ճանաչում ժանգոտ դահիճին.  
«Բարերարների» ինքնիշխան վորջում  
Դեռ ինչեր, ինչեր պիտ տեսներ Ռաջին...  
  
Ռաջին այդ անսեր, այդ մոայլ բանտում  
Ապրում եր՝ վորպես թեարեկ կաքավ.  
Ի՞նչ գուրեկան եր ջինջ, վճիտ ողում  
Շվի ածելով հոտի հետ ման գալ...  
Արհամարում եր, ատում եր Ռաջուն  
Կառավարիչը՝ «աղդային փրկիչ».  
Ռաջին հաճախ եր խորունկ հառաջում,  
Մորմոքում տխուր ու դառնակսկիծ.  
Թաթօծում եր Ռաջին, անսահման թաթօծում,  
Զեր գտնում աղիզ, ընկեր սրտակից.  
Վորպես մի ոտար, մոլորված անցորդ՝  
Այդ ի՞նչ խորթ, անգութ աշխարհ եր ընկեր...

Ռաջին չգիտեր հայերեն խոսել,  
Լոկ թոթովում եր մի կամ յերկու բառ.  
Իսկ քրդերմնը... արյուն կհոսեր՝  
Թե հանկարծ հնչվեր միամտարար.  
«Պետք ե մոռանալ թշնամու լեզուն,  
Քաջ կորյուն դառնալ հայ դատի համար,  
Մեծ ե մեր ցեղը, ցեղը Հայկազուն,  
Մեր ճամբից բացի՝ վոչ մի ճանապարհ.  
Այսպես եր ասում վարժապետ Արան,  
Այդ եր քարոզում նշան պատվելին, —  
Զի՞ վոր այդպես եր տվել հրաման  
«Ամենակարող» Կեսարը վերին:

Փոքրիկ հովիվը պապանձվեց, լոեց,  
Համբացակ՝ ինչպես մի սառած առվակ,

Ազատ ժամերին տիտուր, վշտահեծ,  
Մենակ թառելով — պատի, թմբի տակ՝  
Կամ մտնելով խուլ, ամայի անկյուն,  
Մտքերի ծովս եր ընկղմվում Ռաջին,  
Հիշում եր լեռներ, վտակ ու աղբյուր,  
Հիշում եր նույնիսկ իրենց չալ այծին,  
Հիշում եր մորք, տատին, քույրերին,  
Հիշում եր հորք՝ բարեսիրտ հովիվ,  
Ի՞նչ կարոտով եր հիշում գառներին  
Շվիի յերգը, իրիկվա հովին:

Ռաջին մենակ չեր. Նրա պես այնքան,  
Այնքան մանուկներ կային այդ բանառում.  
Ու ահա մի որ, վորպես բարեկամ՝  
Մտերմանում են Ռաջին ու Աթոն.  
Ինչ-վոր մանկական չարության համար  
Նրանց բոնեցին, բերին մանկատուն.  
Մթնում եր արդեն, ցուրտ եր ու խավար...  
Բուքը վոռնում եր, իրեն կտրատում.  
Այդ ցուրտ գիշերին նրանք յերկուսով  
Կրում եյին մի սոսկալի պատիժ, —  
Նրանց տանջում եր դաղված յերեսով  
Որիորդ Սանդութառ՝ անապատի իժ:

Սալահատակին ավագ եր փոված,  
Ավազի վրա՝ ծնկաչոք ու մերկ՝  
Աթոն ու Ռաջին, ճիպոտը բռնած՝  
Հսկում եր Հայրոն, այդ ստրուկը հեգ.  
Նրանք խոր ցավից գալարվում եյին,  
Բայց չեյին լալիս՝ չգիտեմ ինչու,  
Թեև պղտորվում, մշուշվում եյին  
Վճիտ աչքերը դառնարած Ռաջու.  
Իսկ Աթոն՝ այդ ժիր, այդ ըմբռստ տղան,  
Վոր շատ եր կրել այդպիսի պատիժ,  
Խոնուն աչքերը — վառ ու հուրհուրան  
Չեր հեռացնում դիմացի պատից:

Այդ դանձեական դժոխքում, սակայն,  
Զընկճվեց Ռաջու հուսավառ հոգին.  
Զանքերով համառ ու հերսոսական  
Տիրապետեց նա գիտության զենքին.  
Սովորեց կարդալ: Կարճ ժամանակում  
Ընտելացավ նա հայերեն լեզվին:  
Յերկար գիշերներ նստելով անքուն՝  
Գալիքի համար սրում եր սվին.  
Անվերջ կարդում եր մատչելի գրքեր,  
«Գիքորը» գիտեր համարյա անգիր,  
Համով յերգում եր գեղջկական յերգեր,  
Պատմում հեքիաթներ — վառ, հետաքրքիր:

Մի որ ել Ռաջին, յերբ մենակ նստած՝  
Որորում եր իր հուշերը աննինջ,  
Նկատեց մի բան, վորից և՛ սոսկաց,  
Ցեվ աչքին մթնեց ամեն, ամեն ինչ...  
Խոնավ նկուղից դուրս բերին մեկին՝  
Վոտքերին շղթա, ձեռքին ծանր գունդ...  
Ինչպես վոր ծովը հուզվի, մըրկվի՝  
Ալեկոծլեց մեր գառնարածը քյուրդ.  
Շղթայակապը՝ նրա սիրելի,  
Մտերիմ ընկեր անվախ Աթոն եր.  
Ռաջին մղկտաց, բայց բանտարկյալի՝  
Աթոյի համար կարծես մեծ տոն եր:

Վերից նայում եր ամռան բորբ արփին  
Անթիվ աչքերով, և՛ այբող, և վառ.  
Աթոն մտեցավ մի հողաթմբի,  
Շղթային կապած գունդը դցեց վար,  
Քլունգը վերցրեց, սկսեց փորել  
Ժանգոտ շղթայի զրնգոցի տակ...  
Հեռվում նստել եր, բեխերն վոլորել  
Մի հին կամավոր, մի «կտրիճ» պահակ:  
Ռաջին ուղղում եր մի հնար դունել

Ողջնելու համար թակարդն ընկածին,  
Յերբ գերթ ցնծություն ավետող ձայներ՝  
Ճաշն ազդաբարող զանգերն զնդացին:

Ռաջին շտապեց դեպի մանկատուն,  
Հիմնե, արագ մտավ ճաշարան.  
Ճաշը կուլ ավեց մի ակնթարթում,  
Հացը գրանեց, թափով դուրս թռավ...  
Զննիչ, խորամանկ չորս կողմը նայեց,  
Հետո սլացավ դեպ դերված Աթոն.  
Աթոն փորում եր, աշխատում անվերջ,  
Իսկ պահակը դեռ հսկում եր արթուն.  
Կիսաքաղց Ռաջին աննկատ, զգույշ  
Հեռվից իր հացը նետեց Աթոյին,  
Իսկ ինքը հապեալ, ճկուն, կուղեկուղ  
Ծլկեց՝ ինչպես այծյամն լեռնային...

Այսպես եր Ռաջին, յերբ մեր արնաքամ,  
Ավեր աշխարհում բռնկվեց մի այդ...  
Այդ, վոր գերթ մարտի փողփողուն վահան  
Վեր բարձրացրեց մի նոր դասակարգ,  
Այդ, վոր բորբոքվեց աշնան առավոտ,  
Նոյեմբերյան ցուրտ, ամպամած մի որ,  
Այդ, վոր այնքան ջերմ, այնքան փառավոր  
Մեր հողը գրկեց՝ ինչպես քնքուշ մոր...  
Այդ, վոր փողողեց մեր լեռները սեղ,  
Մեր ձորերը խոր, մեր սրտերը բաց,  
Այդ, վորի լույսով յեղերքից յեղերք  
Լցվեց յերկիրը ու խինդով ծփաց...

Ո՞, ինչ ցնծությամբ վողջունեց Ռաջին  
Այդ այգաբացը վառ, գարնանաբեր.  
Մեր պայծառ կյանքի այդ որն առաջին  
Նրա դեմ բացեց դյութական ափեր,  
Սակայն — մանկատան կարգերը դարձան

Ավելի մոայլ ավելի ճնշիչ.  
Ո՞, մսաբները բռնությամբ դաժան  
Բանակը ուղեցին մեր գալիքը ջինջ,  
Յանցեցին բանտը յերկաթալարով,  
Բոլոր կողմերում պահակներ զրին,  
Վոր մանաւկները անտես թելերով  
Չկապվեն կարմիր, կարմիր սրաերին...

Որեկան ուղիղ տասներկու անդամ  
Պետք և աղոթեր մեր վորբուկ Ռաջին,  
Սուափոտ կանուխ յերգով բարձրածայն  
Փառք ու պատիվ տար յերկնի արարչին.  
Նախքան թեյն՝ աղոթք, խմեցիր՝ աղոթք,  
Նույնպիսի կարգով ճաշին, ընթրիքին,  
Քնելուց առաջ՝ ճնկաչոք աղոթք,  
Ու այդպես անվերջ կրկին ու կրկին.  
Իսկ կիրակի որն աերտերը կդար,  
Շուրքով կմտներ նոր յեկեղեցին,  
Հայ ազգի մասին քարոզ կկարդար  
Յերանի՛ կտար «վոսկի անցածին»...

Բայց աշնանային մի խավար զիշեր,  
Յերբ ամպը ծածկեց և ասող, և լուսին,  
Յերբ քամին ճիշով սկսեց գուժել  
Դոները ճեծող ճմեռվա մասին,  
Յերբ խորասուղված կարդում եր Ռաջին,  
Ու բանտում լոեց, մարեց ամեն ինչ  
Այդ աթոները կաղմակերպեցին  
Մի լնդհատակյա, կոմյերիտ բջիջ.  
Այդ խիզախների բջիջն անդադրում  
Իր ծոցն եր առնում նորանոր մարդկանց,  
Ու այդ քչքչան գարնային առուն  
Գանդում եր մի գետ՝ խոր, արագնթաց...

Ռաջին ընդունվեց այդ ըմբռստացած  
Պատանիների քաջարի գնդում.

Ողջնելու համար թակարդն ընկածին,  
Յերբ զերթ ցնծություն ավետող ձայներ՝  
Ճաշն ազդաբարող զանգերն զնդացին:

Ռաջին շտապեց գեպի մանկատուն,  
Հեինե, արագ մտավ ճաշարան.  
Ճաշը կուր տվեց մի ակնթարթում,  
Հացը գրպանեց, թափով գուրս թռավ...  
Զննիչ, խորամանկ չորս կողմը նայեց,  
Հետո սլացավ դեպ դերված Աթոն.  
Աթոն փորում եր, աշխատում անվերջ,  
Իսկ պահակը դեռ հակում եր արթուն.  
Կիսաքաղց Ռաջին անհնկատ, զգույշ  
Հեռվից իր հացը նետեց Աթոյին,  
Իսկ ինքը հապանեպ, ձկուն, կուզեկուղ  
Ծլկեց՝ ինչպես այծյամն լեռնային...

Այսպես եր Ռաջին, յերբ մեր արնաքամ,  
Ավեր աշխարհում բռնկվեց մի այդ...  
Այդ, վոր զերթ մարտի փողփողուն վահան  
Վեր բարձրացրեց մի նոր դասակարգ,  
Այդ, վոր բորբոքվեց աշնան առավոտ,  
Նոյեմբերյան ցուրտ, ամպամած մի որ,  
Այդ, վոր այնքան ջերմ, այնքան փառավոր  
Մեր հողը դրկեց՝ ինչպես քնքուշ մոր...  
Այդ, վոր վաղողեց մեր լեռները սեպ,  
Մեր ձորերը խոր, մեր սրտերը բաց,  
Այդ, վորի լույսով յեղերքից յեղերք  
Լցվեց յերկիրը ու խինդով ծփաց...

Ո՞, ինչ ցնծությամբ վողջունեց Ռաջին  
Այդ այգարացը վառ, գարնանաբեր.  
Մեր պայծառ կյանքի այդ որն առաջին  
Նրա դեմ բացեց դյութական ափեր,  
Սակայն — մանկատան կարգերը դարձան

Ավելի մոայլ, ավելի ճնշիչ.  
Ո՞, մատըները բռնությամբ դաժան  
Բանտել ուղեցին մեր գալիքը ջինջ,  
Յանցեցին բանտը յերկաթալարով,  
Բոլոր կողմերում պահակներ դրին,  
Վոր մանաւկները անտես թելերով  
Զկապվեն կարմիր, կարմիր սրտերին...

Որեկան ուղիղ տաներկու անդամ  
Պետք ե աղոթեր մեր վորբուկ Ռաջին,  
Առավոտ կանուխ յերգով բարձրաձայն  
Փառք ու պատիվ տար յերկնի արարչին.  
Նախքան թեյն՝ աղոթք, խմեցիր՝ աղոթք,  
Նույնպիսի կարգով ճաշին, ընթրիքին,  
Քնելուց առաջ՝ ծնկաչոք աղոթք,  
Ու այդպես անվերջ կրկին ու կրկին.  
Իսկ կիրակի որն տերտերը կզար,  
Շուշով կմաներ նոր յեկեղեցին,  
Հայ աղդի մասին քարող կկարդար  
Յելանի՛ կտար «վոսկի անցածին»...

Բայց աշնանային մի խավար զիշեր,  
Յերբ ամպը ծածկեց և՛ աստղ, և՛ լուսին,  
Յերբ քամին ձիչով սկսեց գուժել  
Դոները ծեծող ձմեռվա մասին,  
Յերբ խորասուղված կարդում եր Ռաջին,  
Ու բանտում լոեց, մարեց ամեն ինչ,  
Այդ աթոները կաղմակերպեցին  
Մի ընդհատակյա, կոմյերիտ բջիջ.  
Այդ խիզախների բջիջն անդադրում  
Իր ծոցն եր ասնում նորանոր մարդկանց,  
Ու այդ քչքչան գարնային առուն  
Դաննում եր մի դեմ՝ խոր, արագնթաց...

Ռաջին ընդունվեց այդ ըմբոստացած  
Պատանիների քաջարի զնդում.

Գլխարկը հանեց, կանգնեց խոհարհած,  
Բջիջին տվեց սրբադան յերդում.  
Նա յերդվեց լինել միշտ առաջապահ,  
Յերեկ խուճապով հետ չնահանջել,  
Լավ որվա համար հարթել հանապարհ,  
Յեկ բիրտ թշնամու սրտին հարվածել.  
Ու մստրների, խմբապետների,  
Բյուր լրաւոների այդ վորջում խավար՝  
Վառվեց, բորբոքվեց մահու և կյանքի  
Մի հրաբորեաք, անինա պայքար...

Նոր թեեր առած բոցկլտուն Ռաջին  
Ղեկավարում ե պիտներ մի ողակ,  
Այդ ժանտատեսիլ խավարում ձղճիմ  
Հույսի, լույսերի հորձանուտ կոհակ:  
Խորունկ զիշեր եւ Յուրա սատնամանիք:  
Վերադառնում ե Ռաջին քաղաքից.  
Վերից նայում ե մի լուսնի մահիկ,  
Հեռվում ստվերը անքուն պահակի:  
Նա բանան ե բերում բոցաշունչ պլքեր,  
Նորաստեղծ յերդեր — հեղափոխական,  
Ել վոչ մի Կնուտ, պահակ կամ մստր  
Զի կարսդ մարել վառվող ապագան:

Հաճախ պատերին, դոներին բոլոր  
Փակցվում եյին մարտաշունչ կոչեր,  
Զեռազիր թերթեր՝ ահալի, բոցոտ,  
Վոր տալիս եյին խոր, անրուժ խոցեր...  
Ու խոցում եյին՝ զահիճ Սանդուխտին,  
Նշան պատվելուն՝ կեղծ-հեղահամբույր,  
Փետրահան անում և խմբապետին  
Յեկ մստրներին — կուշտ ու հաստափոր.  
Սուր ծաղրում եյին սողացողներին,  
Քամելիոններին՝ յերկերեսանի,  
Ու այդ բոլորին պինդ գամում եյին  
Խայտառակության զաղրելի սյունին:

Մստր Ողդենը՝ իսկական աղվես,  
Անսահման «բարի», «մարդասեր» ու «հեղ»,  
Վարդետ հետախույզ այդ ամերիկացին,  
Սուալու կանուխ նստում եր գորշ ձին,  
Ծայրից ծայր շըջում բանտն այդ ալեկոծ,  
Հրամայում եր վորբերին ցըել,  
Պատերից պոկում թռուցիկ ու կոչ,  
Մոայլվում՝ ինչպես փոթորկոտ ձմեռ...  
Հետո կահչում եր, բննում, բահտարկում,  
Բնդմիշտ աքսորում այդ «զրախտ» վորչից.  
Բայց ընդհատակում հրդեհ եր վասում  
Պատահեկական մի խիզախ բջիջ...

Ու որեր անցան: Բյուր շինարար ձեռք  
Բուժեց մեր յերկրի վերքերը անհուն,  
Ամեն կողմ հնչեց ուրախության յերգ,  
Խայտաց, կարկաչեց ծիծաղի առուն:  
Հին յերդիկները նորից ծխացին,  
Դաշտը հերկեցին գութաններն լայն խոփ,  
Ու սար բարձրացավ հովիվ զյուղացին՝  
Սրտում ցնծություն — ովկիանի պես խոր,  
Շոգեկառքերը ազատ փնչացին,  
Անուշ զնզացին ոելսերը զվարթ,  
Ու շշակները ուրախ ձչացին,  
Խինդով լցվեցին ձոր, անտառ ու արտ:

Կարիքը քիչ քիչ դիրքերը զիջեց,  
Մանկատները մնացին թափուր,  
Յերկիրը իրեն զրահով զինեց,  
Վարարեց, փրփլաց մեր զինին պուրապուր:  
Ու Ռաջին զարհան մի արևոտ որ  
Հրամեշտ տվալ իր «զրախտ» բանախն,  
Հետը տանելով մի քանի հատոր,  
Մի աղջկա նկար՝ ամենից անդին...  
Նոր հայրենիքը ընդունեց Ռաջուն  
Ինչպես հարազատ մայրը զավակին,

Նրա դեմ բացեց անսահման ջանքի,  
Բուռն աշխատանքի դաշտը հարածուն...

Վոսկեարս աշնան մի պարզ առավոտ  
Մեր Ռաջին մտավ համալսարան,  
Ճամբան գժվար եր, անհարթ, անձանոթ,  
Դեռ շատ հեռու յեր կատարը լեռան:  
Իր սրառում հույսի ծաղիկներ պուր պուր,  
Զեռքին՝ լենինյան անհանգչելի ջան,  
Վառեց մաքառման վագնորիչ հուր,  
Բունեց վերելքի ուղին տքնաշան:  
Գրոհի յելավ գիտության համար,  
Դիրք գիրքի վրա տիրեց, զրավեց,  
Մի որ ել Ռաջին խնդությամբ անմար —  
Բարձրագույն ուսումն ընթացքն ավարտեց:

Այլևս այն չե գաբավոր հովիվ,  
Այս աշխատավոր ժողովուրդը քյուրդ,  
Լույսով ե լցնում և՛ ձոր, և՛ հովիա,  
Յեզ միտք, և՛ հովի, և՛ խրճիթը մութ:  
Յելել ե կովի, ցրում ե ամպեր,  
Ամպեր խավարի, կրօնի զագիր,  
Նա բախտը վազուց, վաղուց ե կապել  
Մեր մեծ Միության դաշտերին անձիր,  
Ծովերին կապույտ, մեծ որտին անսաստ,  
Գործարաններին վիթխարահսկա,  
Ու նա ապրում ե իր յերիտասարդ  
Վերելքը հուրհուր ու հերոսական...

Յեռանդ ե Ռաջին, անհատնում յեռանդ,  
Պատմալան ե նա և լավ թարգմանիչ,  
Ունի նորածիլ պսեսի տաղանդ,  
Աչքեր՝ շողշողուն գալիքի պես ջինչ:  
Ու գիշեր ցերել համառ, անտրասունջ  
Այրվում ե Ռաջին, գրում, թարգմանում,

Սահեղում ե նոր, հյութեղ, լիաշունչ  
Յերգեր, պոհմներ, գրեկը բաղմանուն...  
Ուսուցիչ ե նա: Բոցավառ ջաներ,  
Նոր մարտիկներ ե տալիս քյուրդ գյուղին.  
Յել այսպես՝ Ռաջին դեռ այնքան ջաներ՝  
Անցնում ե իրա փառավոր ուղին:

Իմ այս առղերը գրելու ժամին  
Ռաջին նստել ե սեղանի առաջ,  
Դրսում յերգում ե բքաշունչ քամին,  
Քամին սանձարձակ ու դառնահառաչ:  
Ռաջին կարդում ե «Ֆառուս»-ի մասին  
Հետաղոտական մի ստվար հատոր,  
Դրսում պարում ե ձմռան ցուրտ քամին,  
Ներսում անսահման խաղաղ ե անդորր:  
Ռաջին կարդում ե, ընդգծում, զրում...  
«Դիքոր»-ից՝ «Ֆառուս», հովլից՝ զիտնական...  
Ու, մեր լայնարձակի, յերջանիկ յերկրում  
Հերոս Ռաջիներ ինչքան, ինչքան կան...

Յերեան  
1934 թ. ղեկանմբեր

✓

## Ա Յ Գ Ա Բ Ա Ց

Նոյեմբեր, ով զավակ մեծ Հոկտեմբերի,  
Թու տոնին եմ ձոնում յերգս այս սբառպին:  
Դու մեղ հիասքանչ դարուններ բերիր,  
Նոր ընթացք ավիր դու պատմության յերթին:  
Վերջ ավիր մեր լալկան, անհույս յերգերին  
Ու մեր գեմ բացիր այս չքնաղ ապագան,  
Մեր յերկրում վառեցիր լույսի ու շողքի  
Յերփներանգ ճաղիկներ այնքան ու այնքան...

Տես, Նորքի խոր ձորից դուրս գալով հողարտ՝  
Թռչում ե դնացքը ցնձության ճիչով,  
Ու վաղը Սևանից մինչև Սրաբատ  
Կծիա լույսերի անսպառ մի ծով:  
Ու վաղը ձորերում մեր անդնդախոր,  
Լեռներում բարձրաբերձ, դաշտերում անտփ  
Չես գտնի մի տուն, մի գոմ, մի ախոռ,  
Վորտեղ չշողա ելեքտրական լամպ:

Նոյեմբեր, յերջանիկ որերի այդարաց,  
Նոյեմբեր, պարարտ հող անսպառ բերքի,  
Ո՞, սիրոս քո բերած հրերով ե արբած,  
Նոյեմբեր, հորդ աղբյուր խնդության, յերդի  
Նոր արե, առավոտ գեղեցիկ խոսքի,  
Նոր հույզեր դարբնող հանձարեղ վարպետ,  
Նոր յերակ կենսատու, անհատնում հանքի,  
Շողողուն դալիքի լուսատես բամբեր:

Նոյեմբեր, դու պայքար, անվերջ մաքառում,  
Դու ճարտար շինարար, դու մեծ վորմնադիր,  
Ո՞, դու բույր, ջինջաղբյուր, դու անմահ դարուն,  
Դու դըռչ մեր մղած այս անհաշտ մարտի:  
Նոյեմբեր, ո, դու մայր նոր հույզի, յերգի,  
Դու հնի սրտի տակ վիթթարի ոումբեր,  
Յերջանիկ դարձրիր մի ավեր յերկիր,  
Մեր սրտի սիրելի, պայծառ Նոյեմբեր:

## ԶՈՂՎԱԾ ՀԵՐՈՍԻՆ

Մ. Շ.ԲՆ

Հիմա աշխարհում մեր անծայլածիր  
Հնչում են խինդի նվազներ, յերգեր,  
Վաղուց ե լոել մրմունջը լացի,  
Կյանքի գարունն ե մեր սիրաը զուգել.  
Ու համառ մարտում, մեր աշխատանքում,  
Թախիծի ժամին, թե ցնծության մեջ  
Մենք միշտ հիշում ենք կամքդ աննկուն,  
Աչքերդ վճիռ, և՛ վառ, և՛ անշեջ:

## ՓՈՔՐԻԿ ՅԵՐԳԵՐ

1

Մարդ, առանց քեզ ինչի՞ յեն պետք  
Տիեզերքի զարդերն անդին.  
Դու յես տալիս, և՛ կյանք, և՛ յերգ  
Այս անսահման մեծ աշխարհքին:

2

Ո՛, իմ մեծ, յերջանիկ, ազատ հայրենիք,  
Միլում եմ սրբազն հողդ համայնական,  
Դաշտերդ լայնածիր, լեռներդ վերձիդ,  
Արևոտ ներկադ, չքնաղ ազագադ:

3

Յես կյանքը սիրում եմ ամբողջ եյությամբ  
Ու ապրել եմ ուղում անվերջ, անդադար.  
Թող հոգուս յերկնքում չերևա ու ամպ,  
Իմ սրտում միշտ յերգի մի կանաչ անտառ:

4

Յես գիտեմ, վոր մի որ անխուսափելին —  
Այդ մռայլ, այդ տաղտուկ գորշ ծերությունը՝  
Հենված իր գարավոր, մաշված ցուպերին՝  
Պիտ մտնի իմ կյանքի արևոտ տունը:

5

Յես գիտեմ, վոր մի որ մահը ժանտաղեմ  
Դուռս կծեծի, վորպես անկոչ հյուր.

Բայց յես սիրում եմ մայիսյան վարդեր,  
Աղջիկներ գեղուն, դալիքը հուրհուր:

6

Արևի այրումին վերջ չկա,  
Եմ սիրան ել արելց եմ պոկել.  
Կրակ ե նայվածքը աղջիա,  
Եմ սրաի այրումին վերջ չկա...

7

Նայում եմ, ահա, Մասսի ձյունափառ,  
Վերսաց, անամու ու վեհ կատարին.  
Դեռ ենքան պիտի կտրեմ ճանապարհ,  
Վոր հասնեմ արվեստի Եվերեսա սարին:

8

Կյանքի ընթացքի սրընթաց գետում—  
Ով լողալ չգիտե, ով չի մաքառում,  
Ով վոր չի քանդում, և նոր չի կետում,  
Նա չի տեսնելու վայելքի գալուն:

9

Եմ անդարձ մանկություն, յես կարոտակեղ  
Հողով եմ վերհիշում, և մորս, և քեզ.  
Մանկություն, ոռու թեե վշտեր ես ունեցել,  
Սակայն անփուշ վարդ՝ սոխակն ել չի տեսել:

10

Ո՛, վաղը մեր պյուղը կլինի մաքրաջինջ,  
Չեն լինի հինավուրց խըճիթներ մեր հողում.  
Նայեցեք այս մանկան աչքերին հմայիչ՝  
Աղաղան նըանց պես կլինի շողողուն:

11

Յերազում եմ հաճախ սարեր բարձրանալ  
Ու անփույթ թափառել հովիվերի հետ,  
Բայց այնտեղ խեղդում ե ճանձրույթը մուայլ  
Ու այրող կարոտով յես դառնում եմ յետ:

12

Յես սիրո կախարդիչ զորության մասին  
Բաղմաթիվ գրքեր եմ կյանքումս կարդացել,  
Բայց միայն մի անդամ հոգիս անբասիր  
Այլվել և հուղմունքից ու դասն լացել:

13

Հույղերիս բաղենել, յես յերբեք, յերբեք  
Զեղ այնքան կոպտաբար չեմ փետրաթափի,  
Վոր հավետ դառնաքշզմուկ, թեարեկի...  
Հույղերիս բաղենել, վաղջուն ձեր թափին:

14

Քնար իմ, մենք շատ ենք, ո, շատ ենք յետ ընկել  
Տես, կյանքը թռչում ե վորպես մի ձեպընթաց.  
Ամրացիր, ով մուսս, սիրելիդ իմ ընկեր,  
Գլոհի պիտ դնանք նժույգները նստած:

15

Գալիս եմ դեպի ձեզ, արվեստի Մոնթաններ,  
Եմ ուղին կլինի չափաղանց դժվար,  
Սակայն յես անվհատ կրաքանամ վեր,  
Մաքառման կրակը միշտ պահելով վառ:

Յերեան

1935թ. մայիս

## ԼՈՒՅՍԵՐԻ ՀՈՎԻՏ

(ՊԱԵՄ)

## ՅԵՐԳ ԱՌԱՋԻՆ

### ՀԱՆԴԻՊՈՒՄ

Պատանեկական քմահաճությամբ  
Իջանք խոր ձորը, ուր գետն է շառաչում.  
Վերից նայում ե յերկինքն անամպ,  
Ու գարնան կանաչն է հաղթորեն աճում:  
Յերեք հոգի յենք: Մեկը ժիր, զվարթ,  
Առույգ աղջիկ ե, աչքերով խնդուն,  
Մեկը՝ բնապաշտ, նրբազզաց պոետ,  
Վոր վարդի մահը լացով է դիտում,  
Իսկ մյուսին դյութում, սրտանց գերթում և  
Պարն ալիքնելի՝ փրփրած ովկիանում,  
Յերբ նրանք հախուռն, խոլ գրոհում են,  
Յերկինք մղելով ջրերի սամում:

Ուղին ձղվում ե վոլորապտույտ,  
Սնցնում ե ծաղկած ծառերի տակից,  
Հուշերիս նավը այդ խճուղու հետ —  
Տանում ե հեռու և՛ սիրտս, և՛ ինձ:  
Պոետ ընկերս — աչքերում կայծեր,  
Յերբեմն մեր հին — մեծ պոետների,  
Յերբեմն Շիլլերի, Հայնեյի պայծառ  
Յերգերն ե յերգում այնպես սրտալի:  
Պոկելով շաղոտ, բուրյան ծաղիներ,  
Բնության ծոցում նորից մանկացած,  
Իմ ընկերունին — միր ու վոսկեհեր —  
Մի բարձր ժայուց սլանում ե ցած:

Զալե կողմում, ինչպես ձեռակերտ սյուներ,  
Բնության տաշած քարերն են ցցված:  
Սուրբսայր ըլուրն ե խոյանում դեպ վեր,  
Ինչպես ապստամբ ձեռքը — բոռւնցքված:  
Աջում յերգում ե հովից տարուրեր՝  
Մրգուն ծառերի մի փարթամ անտառ.  
Ու ծառերից վեր — այնպես տիրաբար —  
Բարձրանում են նոր տներ ու շենքեր...  
Իսկ այդ շենքերի պատերի ներքեւ  
Զրանցքն ե պարում արևելյան պար,  
Ու ավելի նազելի յերգով —  
Բոնել ե պատ, պայծառ ճանապարհ:

Ինչ վոր մի համույք — տանջող ու քաղցր  
Լցրել ե սիրտս ուղին այս խութոտ,  
Մեր վոտքերի տակ — քարեր սրածայր,  
Որը դառնում ե և այրող, և տոթ,  
Սակայն յերեքս Ալպերն բարձրացող  
Տուրիստների պես — խենթ ու քմահաճ,  
Թողած քաղաքը, գնացքը թռչող,  
Վոտքով կարում ենք շավիզը կանաչ,  
Զնդում ե Զանգուն, թռչում սրբնթաց,  
Ժիր ալիքները անհոգ պարում են,  
Իմ ընկերունին ցնծում ե սրտանց,  
Ու ծով հրճանքից կորցնում ե իրեն.  
Թեքվելով ճամբան, քայլերով դանդաղ  
Քանաքեսի հին ուղին բռնեցինք,  
Պոետը յերգեց յերկու տրաում տող  
Շվերք Հայատանի» վողբի յերգերից  
Ու նայեց Մասսի ալեհեր զլխին,  
Քարձավ ձորերին մեր անդնդախոր,  
Ինչ վոր բան հիշեց անցածից մեր հին,  
Ամպեց, մոայլվեց պոետը տիտոր:  
Իսկ ընկերունիս իր խրոխտ տոնով  
Արտասանում ե ցնծագին, կայտառ,

Փրփուր ջրերի լուռ դպրոցունով —  
«Մրրկահավի յերգ»-ից մի կտոր:  
  
«Լիրիքական» և այդ ջահել տղան,  
Կարդացել ե նա բաղմաթիվ զրքեր,  
Տեսել ե բացգող այգը շողջողուն,  
Սակայն իր սրատում վերքեր ու վերքեր:  
Նրա աչքերում ծիծաղն հազվագյուտ  
Մի շող ե — ձմռան խավար զիշերում.  
Սիրում ե դիտել աստղերը հակինթ,  
Աստղային դյութիչ ու պայծառ հեռուն:  
Անվերջ հիշում ե ժան-ժակ Ռուսսոյին,  
Տերյանը գիտե վողջ բերանացի,  
Սիրում ե խաղաղ ու յերազային  
Կոուտ Համսունի թաթիծը բոցեւ:

Անցնելով բանուկ մի լայն կամքջից՝  
Մտանք կոմունի ծաղկառատ այգին.  
Դանդաղ գալիս եր այգու վերեկց  
Ծեր, կորաքամակ, զառամյալ մի կին:  
— Բարեն, նանի ջան, կարող եք ասել,  
Ուր ե գանվում տունն Արովյանի:—  
Պառավը կանգնեց, ինչպես մի հին սել,  
Կարծես գիպչելով ինչ վոր մի բանի:  
Միքիչ մտածեց, հետո հորանջուն,  
Դողդոջուն ձայնով պատասխանեց մեղ, —  
— Արովինց տունը... Հրեն, բալա ջան,  
Են բարդի ծառը, վոր կա՝ տենում ես....

Ու շաբունակեց իջնել դեպի ցած,  
Իսկ մենք բոնեցինք նշած մեր ուղին...  
Արեք արդեն շատ եր բարձրացած  
Ու սուր նայում եր Քանաքեռ գյուղին,  
Յերբ բակը մտանք, ուր անց ե կացել  
Մանկությունը այն սեաչ պտերի:

Ահա նկուղը, ուր այնքան լացել  
Ու սպասել ե նոր տռավոտին,  
Վորտեղից հաճախ կարոտով անափ  
Նայել ե Մասսի ձյունոտ կտտարին,  
Հառել ե տենչող աչքեր հրցայտ  
Հեռվում նշմարվող իր ճանապարհին:

Ահա իբրձիթը, ահա նկուղը  
«Իր ժամանակի մեծագույն հայի».  
Մտիր, ընթերցող, առանց յերկուղի  
Ու քո շոշողուն աչքերով նայիր  
Այդ վողբերդական պոետի կտրած  
Ուղին քարքարուս ու զիզզագալի,  
Նայիր այդ մարդուն՝ թևերը կտրած,  
Աչքերում՝ արցունք, սիրաը՝ վշտալի:  
Լավ նայիր նրան, այդ հակասական,  
Այդ գժվարալույժ բարդ յերեսույթին,  
Նա յել ե անցել մի հերոսական  
Դժվարին ուղի... Սակայն ում ոգտին:

Գուցե դարմանաս, ընթերցող ընկեր,  
Վերջին խոսքերիս հարցական տոնից,  
Գուցե քեզ թվա, վոր դուրս եմ յեկել  
Յես այս առավոտ... մի զինետնից:  
Զե՞ վոր այդ մարդու բրոնդյա անդրին  
Կանգնած ե այսոր նոր Յերեանում:  
— Նա մերն ե, — կասես, — մերն ե լիովին,  
Թե չե՞ ինչո՞ւ յենք նրան մեծարում,  
Ինչո՞ւ յենք այս մեր սոցիալիստական  
Քաղաքն զարդարում նրա արձանով,  
Գուցե կարծում ես, իմ նոր բարեկամ,  
Վոր մենք դնում ենք նրա կածանով:

Բայց զա սլամ ե, հիմնավին սլամ,  
Թյուրիմացությամբ չտարվես, ընկեր,  
Այդ առթիվ չարժե վոչ լալ, վոչ սղալ,

Այլ ոլեաք ե դրա պատճառը գտնել:  
Ո՛, նա, այդ մարդը վաղակարկան  
Ուղի յե բացել իր դասակարդի  
Արշավի համար և պոետական  
Խոսքեր ե ձոնել նրա գալիքին:  
Ու նա անգրանիկ աղդարարն ե մեր  
Գյուղում, քաղաքում արմատներ կցող  
Մի ժանա հրեշի, վոր մեծանում եր  
Որ որի վրա քայլերով ցնցող:

Հակասական ե այդ մարդու ուղին,  
Նա մերթ ընկնում ե անզունդը ինավար,  
Ուր ծունկ ե չոքում «հերոս» հաղթողին  
Դովերդում ցարի սուրը «փրկարար»,  
Ուր ներբողներ ե ձոնում բռնակալ  
Մադաթովսերին, Պասկևիչներին,  
Հերոս ե կարծում Յերմոլովին — գայլ,  
Ազատության շունչ, փրկիչը վերին:  
Ուր այնքան նվաստ, հետադեմ ձոնով  
Կյանքի յե կոչում հայ միապետին,  
Լացող աչքերով, աղերսող ձայնով  
Կանչում ե, կանչում չայկին, Տրդատին:

Բարդ ե այդ մարդու «Ղերքը» — վողբերդու,  
Յեկը բաղմերանդ ե, և հակասական,  
Մերթ նա դրոց ե հայդուկի ձեռքում,  
Վորպես մի ձեռնարկ «սուրբ աղատության»,  
Մերթ մի ծանրամիտ, կույր հնապաշտի  
Հիացմունքին ե լոկ արժանանում,  
Ու մերթ հնի հետ հավետ անհաշտի  
Սիրո հույզերի վունջն ե բաժանում...  
Նա մերթ այսպես ե ու մերթ ել այնպես,  
Սակայն նա ունի մի հիմնական զիծ,  
Վորի համար ե իջել առպարեղ,  
Ու շաղանակներ հանել կրակից:

Ո՛, խորդուբորդ ե այդ մարդու ձամբան,  
Նա մերթ լուսավոր ջան ե իր զարում,  
Վոր սրառվ, հոգով, նյարդերսպան անգամ  
Աշխարհաբարի պայքարն ե վարում:  
Վոր սխոլաստիկ, հին գպըցի դեմ  
Դրոշը պարզած յելնում ե կովի,  
Ու ձայնը նրա հնչում ե արդեն,  
Վորպես գարնային կարկաչը առվի:  
Այդտեղ ե աճա, իմ լավ բարեկամ,  
Վոր մենք հարգում ենք սևաչ պոետին,  
Մենք, վոր թագել ենք և' թագեր, և' դան,  
Յել «վոսկեկուռքը», և' միապետին:

Մենք տիրանում ենք մի մասին միայն  
Նրա բաղմադան ժառանգությունից,  
Այդ ել մեր դարի բոցաշունչ քուրան  
Մաքրում ե փոշուց, ժանդից ու թույնից:  
Հին սերունդների կերտած կուլտուրան  
Մենք ժառանգում ենք անդերջ, անընդհատ,  
Բայց ձեռք ենք տալիս, մոտենում նրան,  
Վորպես փորձագետ, հմտւալու վիրահատ:  
Կտրում թափում ենք՝ ինչ վոր անպետք ե,  
Ինչ վոր փայլուն ե, բայց վեստակար,  
Ու ժառանգում ենք այդ առատ բերքից՝  
Ինչ վոր գեռ կապրի յերկար, շատ յերկար...

Մինչ այս մտքերիս յետեից ընկած՝  
Խոսում եմ քեզ հետ, ընթերցող ընկեր,  
Նեղ պատուհանից լսում եմ հանկարծ  
Պատանեկան ցնծալի յերգեր:  
Ո, այդ յերգերով լցվում ե հյուզը  
Ինչպես զնողանը՝ արևի լույսով.  
Այդ յերգերում կա թովչանքը հողի,  
Կա գարուն, վարդեր — բուրավետ, բոսոր:  
Ու այդ յերգերի հնչյունների տակ  
Դիտում եմ հյուզը — ամայի, անշուք,

Վաղուց ե դարձել տխրալի, դատարկ  
Այդ լորձիթը հին ու արևադուրկ...

Խարիսուլ մի սենյակ — խոնավ ու անլույս,  
Նման վանական ձանձրալի խուցի,  
Այստեղ ե, աճա, այնպիս լիահույս  
Ստեղծագործել այդ Քանաքեռցին:  
Խուցն այդ մոտենելիս՝ իմ դեմ ծառացան  
Բիրտ ֆարբաշները ինքնակալ խոնի,  
Նորից հուշերիս շարքերովն անցալ  
Արծիվն պիշտատիչ ու յերկութանիւ  
Շահնշահերի իրանը քնկուտ  
Իր հարեմներով, հարձերով բազում  
Մարիս աշխարհի մշուշումն ազստ  
Յելնում ե գահին ու ծանր բազմում:

Մաքերիս շարքերն իրար բազիթելով՝  
Ծառացավ իմ դեմ մի մոայլ ժանգամ,  
Խեց ինձանից՝ խիստ կոխումելով  
Զեռքիս վարդերը և' կարմիր, և' թարմ...  
Որերի փոշու հաստ շերտի տակից  
Բերդերով մոայլ ու միջնադարյան  
Մահապարտի պես՝ պատմության խորքից  
Բեմ և բարձրտնում ճորտատիրական  
Բիրտ Ռուսաստանն իր կախազաններով,  
Հարկանաններով դահճի պես դաժան,  
Վոչ պակաս վատթար, քան իր խաներով  
Ու ֆարբաշներով մի հին Պարսկաստան:

Նրանց հետ մեկտեղ, նրանց նման խիստ  
Գալիս են աճա բեղերն հայկազուն.  
Յել, նրանց ձամբին թէ ծիծաղ, թէ իբնդ,  
Յել ծաղկաստաններ, և' արտը հասուն,  
Ինչպես խորշակից՝ գեղնում են, թաշնում:  
Գալիս ե նաև վաշխառու Սերգոն  
Ժանտախտի պես չար, վորպես գամփու շուն,

Աղոհ, խորամանկ ձեր բկին չոքում:  
Գալիս են ահա դեմքերով մռայլ  
Մարդիկ հաստավիզ ու փարաջավոր,  
Գալիս են նաև մի Մելիք ժիրայր  
Սեվ ձիուն նստած՝ միշտ առաջավոր...

Հանկարծ դնդում ե ձայնը ծիծաղի,  
Արձագանք տալիս այս խուցումն անշուք.  
Իմ ընկերուհին ձայնով ծնծղայի  
Խփում ե ուժգին ծիծաղի թմբուկ:  
Իսկ ողուն, ինչպես տաճարը մտած  
Մի հավատացյալ յերկյուղածությամբ,  
Հոնքերի վրա փոթորկաբեր ամպ՝  
Իր շուրջն ե նայում լուս, մտասուղված:  
Նա համարում է մեծագույն հանցանք  
Վրդովել քունը այս խաղաղ խուցի,  
Այսուղից են առ դիտել լայնարձակ  
Դաշտն Արարատյան — փառքը անցածի...

Ահա կանգնել ենք Քանաքեռպեսի  
Հենց գլխավերեմ, մի փոքրիկ բլրին,  
Սրտիս մեջ զարնան գետերը հույզին  
Նայում եմ ներքեւ անխօս ու լոին:  
Ինչպես վիթխարի հսկա բառքար՝  
Բլրի լանջերից ձգվել են դեպ ցած  
Հաստ խողովակներ: Մի աստղարիբ,  
Շողշողուն շենք ե բարձրանում ձորից.  
Այդ չքնաղ շենքի հաղթ պատերի տակ  
Գոտեմարտում են վերևից թափվող  
Ջրերը փրփուր ե արագարագ  
Մզում են առաջ սանձարձակ թափով:

Բլրի լանջերին — գետին զուգահեռ  
Դեռ մնում են մի հինավուրց առվի  
Հետքերը տիուր, մի զույգ սիրահար,

Իրարու կարու յերաղուն ուսի,  
Ու աղեղնաձեւ մի բարակ կածան,  
Վոր ուղեկիցն ե այդ նեղնուն առվի,  
Ո՛, այդ կածանով — մենավոր անձայն,  
Ո՞վ ե ժպատակ դարնան արեին. —  
Դա հին զյուղացու, չութի գյուղացու  
Վոտնատեղերի հետքն ե մնացել,  
Գեղջկական կյանքի և լաց, և ցնծում  
Հերթով յեկել են այդ ճամբով անցել:

Յեվ գուցե, գուցե ուսկներն ջուխտակ  
Սյունեղ անկել ե մի ծեր ջաղացպան,  
Ու նրանց անուշ զով սավերի տակ,  
Իր կաթն ե ըմպել մի խրոխտ չոբան,  
Յեվ գուցե նրանց ստվերում թաղուն —  
Հին աղաթներին հլուհնազանդ՝  
Սիրահալները որերից մեկում  
Իրենց գտել են կապանքից աղատ.  
Յեվ գուցե հենց այդ ծառերին կալած՝  
Փշել են գանգը իենթ ըմբոսաների,  
Մինչեւ ծաղել ե պայծառ այդաբաց  
Մրոս, ընչաղուրկ մութ խրճիթներին:

Յեվ գուցե, գուցե այնտեղ, ուր հիմա  
Հիղընկայանի շենքն ե բարձրանում —  
Յեղել ե խարիսուլ, խղճուկ, հնամյա  
Մի հին ջրաղաց — անհուշ, անանուն,  
Յեվ գուցե այնտեղ, ուր ծանրածանը  
Տուրիններն են ննջում մի խոր վեհությամբ,  
Գյուղացին բռով գարի յե ցանել,  
Վերից նայել ե կարկտաբեր ամպ  
Ու սպառնացել... Յեվ սրտում սարսափ,  
Աչքերի առաջ սև հետանկար,  
Նա տուն ե գարձել — տիսուր, անսփոփ,  
Իր յեղների հետ — իր նման անկար:

Ինչեր, ո, ինչեր չեն հուզում մարդու  
Հավիտյան ծարավ — հարցասեր հովին,  
Ինչեր չես հիշում, չես մտաբերում,  
Յերբ կանգնած ես այս փոքրիկ բարձունքին:  
Այստեղից, ինչպես հեղեղն հաղթարշավ  
Անցել են անզուսպ հորդաները բիրտ,  
Միփական Հայկից մինչև Մանթաշով՝  
Չի վառվել, սակայն, այնպիսի մի խինդ:  
Այս ջրերի պես, այս ջրերի հետ,  
Ինչեր չեն հոսել մեր այս ձորերից...  
Բայց նայիր ահա, ի՞նչ անուշանոտ  
Բուրմունք և բղբեռմ ծաղկած ծառերից...

Տարված դյութական այս տեսաբանով՝  
Զնկատեցի՝ ինչպես արել,  
Վորպես հրկիրված մի զրահանալ՝  
Անցնելով հանգարս գլխիս վրայով՝  
Սուզվեց ամսերի ալիքների տակ.  
Զնկատեցի՝ ինչպես պոեաը  
Էնկերուհուս հետ — ինձ թողած մենակ՝  
Բլրի լանջերից ձորակը մտան:  
Զնկատեցի՝ ինչպես մոտեցալ  
Հին ընկերուհիս, անկեղծ Նաղերան  
Լենինգրադից նոր վերադարձած՝  
Դիտության բեռը հոնքերի վրա:

Մանուկ որերի ընկեր եյինք ջինջ,  
Սրտով մոտ եյինք — յես ու նաղերան,  
Զեյինք խնայում վոչինչ և վոչինչ,  
Նույնիսկ կյանքը — նա ինձ, յես նրան:  
Իսկ մեր հայրերը հնաւց կարեկից  
Հանքահորերի բանվորներ եյին,  
Կյանքը տխուր եր ու դառնակուիծ,  
Ողբ՝ հեղձուձիչ ու դժոխային:  
Զուրլ եյինք նույնիսկ մանկական խաղից, —

Պետք եր վաստակել մի քանի դոժօնական  
Ո՞հ, այդ սբերը և տերաթախիծ,  
Յել մոայլ եյին, և հողի պես զորշ:

Մեծանում եյինք յես ու նաղերան  
Վիշկաների լիւտ անտառների մեջ,  
Ամառ՝ այրող շեկ ավազներում  
Թափառում եյինք ձանձրույթով անվերջ  
Ու միրդ վաճառում ծովափին պառկած  
Անփույթ ու շվայտ, անհոգ, փափկասուն  
Ու աղնվազարմ անաշխատ մարդկանց...  
Բայց մի որ, ինչպես ջրային հաստ սյուն,  
Քաղաքի բոլոր լայն փողոցներում  
Ծառացան մարդկանց շարքերը վարար  
Ու վարդի պես՝ կարմիր փողփողուն  
Յել ծածանվեցին դրոշները վաս:

Ու ինչպես ծովը նավաբեկության  
Ահալոր ժամին՝ այնպես ել անքուն  
Խոր մանչում եր ու խուլ դզրում,  
Թնդում եր ահեղ, ապստամբ Բագուն...  
Տուն եյինք դառնում յես ու նաղերան:  
Այրող կեսօք եր: Յել ահա հանկարծ  
Սուլելով ճշաց մի սուր համազարկ...  
Մի մարդ ընկնելով՝ աղեխարշ տնքաց...  
Յել մենք շնչասպա՝ պլատերի տակով  
Մոտենում եյինք մեր բակի դռան,  
Յերբ տան անկյունից մեկը գնդակով  
Խոր խոռոչ բացեց ճակատիս վրա...  
Այդ որը հայրս չվերադարձալ,  
Զահել մորս հետ մնացինք մենակ.

Մեր տունը դարձավ մի մութ քարանձալ՝  
Անհաց, անարկ, անկույս, անկրակ:  
Ու որեր անցան... Վերքս լավացավ,

Սակայն ճակատիս մնաց մի սպի,  
Մի գնդակի հետք, վսր սուր սուրլցով  
Արձակեց վրաս մի ճերմակ սպա:  
Ու փոխվեց կյանքը: Յեղավ կոմմունա,  
Հայրը Նազիրի կոմիսար դարձավ,  
Նորից ծածանվեց խնդության անմահ —  
Կարմիր դրոշը մեր լուսապայծառ...

Բայց կարճ ապրեցինք յերջանիկ որեր, —  
Գլխատվեց Բագվի խիզախ կոմմունան,  
Այդ ինչ սոսկալի, ինչ սև տերուոր եր,  
Վոր մարդ եր հնձում գերանդու նման:  
Հեռու հեռավոր խուլ անապատում  
Թշնամին թաղեց կոմմունի վոգին,  
Ու մեր վոտնահար, ավեր աշխարհում  
Արնադունչ սովը բարձրացավ վոտքին  
Մեր գեղատեսիլ չքնար կովկասում  
Իրար դեմ յելան ազգերն հարեան,  
Ու գետերի պես արյուն եր հոսում  
Հնդվող Բագվից մինչև Յերեան...

Այդ որից սկսած՝ յես ու Նազիրան  
Կորցրինք միմյանց կյանքում անեղերք,  
Սակայն ճակատիս, ինչպես խառնարան՝  
Մնաց գնդակի պատմական մի հետք:  
Իմ ճամբան անցավ լայն ստեղներից,  
Վոլգան չափեցի մի քանի անգամ,  
Խոր վերք ստացա սպիտակներից,  
Բայց յես մնացի միշտ արիակամ:  
Ու շատ մարտերի մասնակից յեղա,  
Ստացա փառքի մի շքանշան, —  
Դեռ փոքրիկ եյի, վասվուն տպա,  
Բայց կովում եյի անվախ, անսասան:

Սրտիս հնոցում վասվում եր անմար  
Սրբազն հուրը վոգերության,

Ո՛, յես դիտեյի, թե ինչը համար  
Մենք մարտ ենք մղում այդպես հաղթական:  
Դիտեյի և այն, վոր մարտումն այդ մեծ  
Նույնիսկ թոփում և հայրը իր վորդուն,  
Ու հոգիս ձուլված միլիոնների մեջ  
Բմպում եր մարտի վոգերություն...  
Ո՛, այս աշխարհում կա՞մ մի ուրիշ բան,  
Վոր լինի այնքան փառվուն, բոսոր,  
Կան հուրը, հուրը վոգերության:

Վոգերություն, դու հերոսության  
Ամենաաղղու — գարավոր գինի,  
Ով վոր քեզ ըմպի, հար ու հավիայան  
Զահել ու փարթամ նոճի լլինի:  
Վոգերություն, գրոհի յելած  
Հոծ մասսաների անառիկ դլուշ,  
Վոգերություն, քո հյութը ըմպած  
Խեղծ մահկանացուն՝ դառնում և հերոս:  
Վոգերություն, դու հանճարների  
Սրաերում վասվող բոցաշունչ խարույկ,  
Վոգերություն, ըմպած քո գինին՝  
Հոգիս ցնծուն և ու հավետ առույդ...

Ծծելով մաքուր ողը լեռնային՝  
Չըույց ենք անում յես ու Նազիրան,  
Ինչպես Ոթելոն Դեղզեմոնային՝  
Կյանքիս վիպակը պատմում եմ նրան:  
Նա ել իր հերթին — փոխադարձաբար,  
Անուշ խոսքերով — կարճ ու համաստ,  
Ինչպես գարունքվա կարկաչուն աղբյուր,  
Ինչպես նորածագ կապույտ առավոտ,  
Մերթ կարմրելով, մերթ վոգերված՝  
Կարդում և իրա կյանքը — մի ոռման,  
Իսկ յես ուշադիր, և լուս, և գերված,  
Աշակերտի պես լուս եմ նրան:

Իր այդ հասակում — դեռ յերիտասարդ՝  
Ինչեր չի տեսել այս մեր նազիրան,  
Ո՛, տես, սեաթույր նրա մաղերում  
Փայլում են արդեն թելերը արծաթ:  
Վոտով կտրել ե արյունի մի ծով,  
Նայել ե մահվան լափող աչքերին,  
Անցել Դանտեյի դժողբի միջով,  
Կախված ե տեսել իր ընկերներին:  
Բայց անընկճելի հույսը վառ պահած՝  
Նա դուրս ե յեկել մի ուրիշ աշխարհ,  
Վորի լեռները այնպես սիրապանձ,  
Զորերը այնպես՝ և վեհ են, և խոր...

Վորի գաշտերը լայն, անծայրածիր  
Յեկ անտառները — անսահման ու մեծ,  
Որերով գնա, թորի ու անցիր,  
Բայց մեզ ես... նորից նույն գաշտերի մեջ:  
Նույն ատամատանում, ուր հորիզոնդ  
Անսահման, անհուն, վեհ ու լայնարձակ,  
Ուր կուրծքդ այնպես ջնջում ե աղատ,  
Սրտումդ ծաղկում գարնան արեծագ:  
Ուր վոր ցնծագին ու արևակամ՝  
Զիլ զրնդում են — դիշեր ու ցերեկ  
Ռեւսերը կյանքի — սոցիալիստական՝  
Յերգելով մի վեհ, հավերժական յերգ:

Նա դուրս ե յեկել մի ուրիշ աշխարհ,  
Ուր, տես, ականջ դիր, ընթերցող ընկեր,  
Չորը լցվել ե լույսերով վարար,  
Ոդում ծաղկել են շուշան — լամպիկներ:  
Ի՞նչ հիասքանչ տեսարան ե սա. —  
Լույսերի հորձանք, գույների յերանգ,  
Սա վոչ հեքիաթ ե և վոչ ել յերազ,  
Այլ մի դյութական չքնաղ արեծագ,  
Սա այգարաց ե, — բայց արել նոր

Մահիճը մտավ... Ո, վոչ, սիրելին,  
Դա մեր մոլեպնած, հորդահոս ու խոր  
Գետերն են վառվում, վորպես արշալույս:  
Ո՞ւր եք, Եյ, մւր եք, Վարդենց ու Լենա,  
Բլրի գաղաթը յելեք — բարձրացեք,  
Տեսեք, բորբոքվում, վառվում և անա,  
Ելեքտրական ձեռնակերտ մի ծեզ...  
Ու ահա նորից խմբով կանգնել ենք  
Քանաքեռդեսի հենց պլխավերեն,  
Լույսերն են ծփում ալիք առ ալիք —  
Ու շողջողում ե մի անշեշ արե...  
Զորը, ուր առաջ ուշ յերեկոյան  
Մարդը կասկածով, ահով կմտներ,  
Այժմ զրկել ե մի հիգրոկայան  
Յեկ ձերմակ ու ջինջ աներ ու տներ...

Լարված դիտում ենք ու չենք կտանում,  
Բայց ուշ ե արդեն, պետք է հեռանալ,  
Թեեւ պոեաը շատ ե վշտանում  
Ու չի ցանկանում ել առաջ գնալ:  
Ծանոթանում են փոխագալձաբար  
Լենան, Նազիրան ու Վարդենցը մեր,  
Յեկ բորբ խնդությամբ ընկած ձանապարհ,  
Զիլ զրնդում կութամբ ընկած ձանապարհ,  
Չորը հեռու չե: Մոտիկ բլրակից  
Աչքերն հառել ե խորախոր ձորին,  
Նա և առաջինն իր բարձունքներից  
Վողջունում բացվող այգի բոցերին:  
Փշում ե շոյող մեղմանուշ քամին  
Ու սվավում են բարդիները վեհ,  
Յերբ մենք մտնում ենք մի հինգհարկանի  
Լուսավարար շնչք ու բարձրանում վեր:  
Նախ այցելում ենք մի կոկիկ սենյակ,  
Ուր վերջալույսն ե իր վոսկին թափեր

Ուր կարկաչում են՝ գերթ զարնան վտակ,  
Ծիծաղ, խնդություն ու ցնծուն ծափեր;  
Այստեղ խաղում ե մի կայտառ սերունդ,  
Կոմմունի հույսը, նրա ապագան,  
Այնքան մանուկներ, աչիկներ սիրուն,  
Ո՛, ինչ արեշող, ինչ արխակամ:

Երնեկ, ո, երնեկ մեր նոր սերնդին,  
Մեր մանուկներին այս լայնաճակատ,  
Ո՛, չի ծանրացել նրանց սըտերին  
Սնցյալը և ցուրտ, և անճառագայթ.  
Նրանք ծաղկել են մեծ յերկնջի,  
Մեր ջինջ կապույտի կամարների տակ,  
Նրանց սնել ե մի արեսաչ կին,  
Մի գուրգուրող մայր — անունն աշխատանք:  
Դրա համար են նրանց աչքերը  
Այնպես վառվուն և ուշագրավ,  
Դրա համար են այդ մանուկները  
Վեհ, ինչպես ճախրսղ մի մըրկահավ...

Խաղը փոխելով ընթերցանության՝  
Հանգստանում ե սերունդը անբիծ,  
Յերբ հյուրընկալի առաջնորդությամբ  
Մանում ենք մի նոր, լայնարձակ դահլիճ:  
Լայնարձակ սրան, մաքուր սեղաններ,  
Ջունից ել ձերմակ սփոցները ջինջ,  
Ու սեղաններին կան ծաղկամաններ  
Յել բուրումնավետ, և գեղաժպիտ:  
Խմբով նստելով մի սեղանի շուրջ  
Իրար պատմում ենք առօրյա դեղքեր, —  
Մինչ բորբոքվում ե մի աշխույժ զրույց,  
Դահլիճ են մտնում նորանոր դեմքեր:

Գալիս են ահա մեկը՝ դյուտարար  
Ալեհեր բանվոր ու մարտի վարպետ,  
Մեկը՝ պարտիզան ու ճարտարապետ,

Մեկը՝ հին բժիշկ, մեկը՝ խոհաբար,  
Միաժամանակ բանջարանոցի  
Հմուտ ղեկավար... գալիս են, շարվում  
Սեղանների շուրջ: Ահա կանացի  
Դեմքեր նրբակերտ: Աչքեր են վառվում  
Մոգսկան բոցով: Յեղ իրար հանդեպ  
Հարգալից ու լուրջ — ընթրում են հանգիստ,  
Մեղմիկ շուրջով... «Մշակներ» հանդի,  
Հանքի ու լույսի՝ այնքան բարեկիրթ:

Ծանոթանում ենք լոկ անմիջական  
Մեզ սեղանակից մարդկանց հետ մի խումբ,  
Ինձ զրավում ե մի թուխ աղջկա  
Հասակը պարթե, հայացքն ալեծուփ:  
Պոետը, նույնիսկ այդ սակավաթոս,  
Այդ լսիկ տղան, — գարձել ե գարնան  
Քչչչան աղբյուր: Ռ, փոթորկահույզ  
Աղջիկը գերել, գերել ե նրան:  
Խոսում ե հաճախ մեծ առողյայից,  
Սիրս մասին ե յերեմն ակնարկում,  
Մերթ աչքի տակով մարկ անում ինձ  
Ու վարդի նման շիկնում, կարմրում:

Այստեղ ե, ահա, վոր ծանոթացանք  
Շատ հետաքրքիր մի նորեկի հետ.  
Նա հստել եր՝ զերթ բրոնզյա արձան՝  
Աչքերը լոռուն, զլուխն ալեհեր:  
Նա հենց առաջին իր մի հայացքով  
Ուշագրությունս ու միտքս գերեց.  
Նրա զիմացը, նույն սեղանի քով,  
Նստել եր մի կին՝ գեր ու բարձրաբերձ:  
Մերթ ամպում եր նա, մերթ թեթև ճպում,  
Իսկ կինը անվերջ պատմում եր մի բան.  
Նա յերկարատե ճաշի ընթացքում  
Արտասանեց լոկ մի կամ յերկու բառ:

Սերգոն (այսպես եր անունը նրա)՝  
Սպասել չավեց, նազ չարեց յերկար,  
Մի քանի խոսքով — հույզերով վարար—  
Մեղ պատմեց նա իր անցյալն ու ներկան։  
Յերկաթուզային բանվոր և յեղել  
Դեպոյի բանվոր, — այսպես ել ասաց.  
Յերբ մեր աշխարհը նոր եր հեղեղել  
Մեծ զոկտեմբերի հուրը փառապանձ,  
Ու յերբ Շերակում առաջին անդամ  
Զբահապատը յերկաթամկան՝  
Վորպես վիթխարի մի մըրկահամ՝  
Բացում եր կյանքի մի նոր ճանապարհ...

Սերգոն մայիսյան այդ վառ որերում  
Կարմիր գրոշն ե բարձր ծածանել.  
Պատանեկության կրակն իր սրտում՝  
Յելել և ընդդեմ կարգերին ծանր,  
Ընդդեմ շառաչող դաժան մտրակի,  
Ընդդեմ «ծովից ծով» ցնդաբանության։  
Սակայն... պարտություն։ Ու անա կրկին  
Գահ և բարձրացել բռնության արքան։  
Բայց ով կարող ե հեղափոխության  
Հեղեղի առաջ կայուն պատ շարել.  
Նոյեմբերն յեկավ, պայքարով յեկավ,  
Նորից ցնծացին մեր զաշտն ու սարեր։

Դուրս յեկավ Սերգոն սիրտ կրծող բանտից...  
Դիմացը՝ բացվող պայծառ այգաբաց...  
Ու այդ սրվանից նրա ջինջ, անրիծ  
Հոգու աչքերում վառ խինդը ծփաց,  
Նա նոր յեռանդով լծվեց վիրավոր  
Շոգեքարշերի բուժման մեծ դործին։  
Ու մեր յերկրի հետ սուրաց դեպի վեր՝  
Միշտ հավատարիմ լենինյան զդին։  
Տարիներ անցան... ինչ որեր անցան...

Մաղերին իջավ արծաթյա փոշին,  
Հները մեռան, նորեր բարձրացան,  
Բայց նա միշտ մնաց դիրքում հերոսի...

Ընթրիքից հետո մանում ենք մի լայն  
Ու արեակող ծիծաղուն սրահ.  
Դիմացի պատից, ինչպես մի Մոնթան՝  
Հայացքն իմաստուն, աչքերն հուրհրան  
Նավավարի պես հառել և հեռուն  
Արծիմ լեռնային — հանձարը — լենին,  
Յեկ կարծեք նրա հոնքերին խռհուն —  
Յերկրագունդը ծանրացած լինի:  
Իսկ վարպետ նկարված և մի  
Զյունագագաթ լեռ ու անառիկ ժայռ,  
Վորի կատարին նույնիսկ այծյամի  
Թեթև վոտքերը հազիվ բարձրանան։

Անսանձ յեռանդն ե դահլիճը լցրել,  
Տեսնում եմ նըանք սպասում են մի  
Ինչ վար նոր բանի: Թնդում են ծափեր,  
Ու հանդարտ մեկը յենում ե բեմին,  
Հայտարարում ե որվա համերգի  
Ծրագիրը ճոխ, ու նորից ծափեր,  
Ծափեր ու ծափեր, լսվում ե զանգի  
Ղողանջը աղջու, դուրս ե գալիս բեմ  
Մի սեւչ աղջիկ, հասակը բարդի,  
Բնության նման հասարակ ու պարզ,  
Շրթունքը — նման կարմրավառ վարդի,  
Աչքերը վճիտ — մի անուշ յերազ։

Ծփացող ծափերն փոխվում են հանկարծ  
Լարված լոռության... Ու յերգում ե նա,  
Մերթ՝ ինչպես ծովը — հուզված ալեկոծ,  
Մերթ՝ ինչպես կահաչ անտառը դալնան,  
Մերթ՝ վորպես ջրերն կապուտակ լճի,

Մերթ՝ ինչպես առուն սառցի շերտի տակ,  
Ու նայում ե նա գերված դահլիճին  
Աչքերում — մի զույգ ամրան արեղակ:  
Ո՛, նրա յերգը լեռը բարձրացող,  
Գետերին նոր հուն, կյանքին նոր յերանդ,  
Նոր բուրմունք տվող, մըրիկը սանձող  
Մարտիկի յերգն ե, խիշախի խոյանք:

Ու յերգում ե նա մի հայ հանճարեղ  
Կոմպոզիտորի մեծ ոպերայից  
Մի հաղթական եջ: Արծիվը ե ճախրող —  
Այդպես վայր նայում իր բարձունքներից:  
Յերգը այդ ջինչ ե, ինչպես կապուտաչ  
Լիճը լեռնային, ինչպես յերգողի  
Աչքերը պայծառ, ինչպես ծաղկի աճ,  
Ինչպես բուրմունքը անձրեստ հողի:  
Ահա կանդ առավ: Մի պահ լուսթյուն,  
Ու հետո... Հետո նորից անդադար  
Ծփուն ծափերի կենսուրախ թնդյուն,  
Շարժվող ձեռքերի մի ստվար անտառ:

Յերգչունուց հետո ջութակը ձեռքին՝  
Առաջ ե գալիս լեռնացած կըծքով  
Մի յերիտասարդ. կողքիս մի ծեր կին  
Նայում ե նրան անհուն հրձվանքով:  
— Մայրն ե, — ասում ե մոտիս ընկերը,  
Յեղել ե հեռու, հեռու Սիրիուտ,  
Այժմ ել պահում ե իր շղթաները  
Մի անկիդելի, մեծ պահարանում:  
Իր այս մինուճար յերաժիշտ տղան  
Ծնվել ե հենց այդ դժիկմ աքսորում,  
Հորը հանել են տանջող կախաղան,  
Ցուրտ սիրիական մի մութ դիշերում...

Ո՛, մեր կոմմունի հիմնադիրն ե նա,  
Այդ պառավ կինը, այդ հերոսուհին,

Որեր, տարիներ կըպահն կսահեն,  
Բայց նա միշտ անմահ, անմահ կմնա:  
Տես, ծերացել ե, արդեն դողոջուն,  
Արդեն վատուժ են ձեռքերը նրա,  
Յեկ գուցե շուտով պառկի ցուրտ հողում,  
Ու մի ծանը քար բարձրանա վրան,  
Բայց մենք կարոտով նրան կհիշենք  
Ու սերունդներին կպատմենք նրա  
Հերոսությունը... Դեհ, այժմ լսեք՝  
Վանց ե նվազում մեր ընկեր Արան:  
  
Յեկ մինչ ուշագրավ ու հետաքրքիր  
Լսում եյի յես կողքիս ընկերոջ,  
Վորի լայնանիստ ու խըսիտ կըծքին  
Շող եր արձակում «ցյուտարար հերոս»  
Նշանակը վառ... Բեմ են դուրս գալիս  
Հասարակ մարդկի, բոլորը, սակայն,  
Անցել են ուղին մի մեծ պայքարի  
Ու մարտ են մղել, մարտ հերոսական:  
— Նրանք բոլորն ել մեր կոմմունայի  
Տղերն են, — ասաց դարձյալ ծանոթու.  
Այ, տեսնո՞ւմ ես զու այդ թուրք Մամոյին,  
Բարհատ ենք այժմ թե նա, և թե յես...

Մամոն — այդ քարհատ, աժդահա մալզը  
Սիրով զրկել ե մի նոր վիտոնչել,  
Կարծես դնում ե փաթորկու մարտի,  
Կարծես ուղում ե բերդեր նվաճել:  
Յեկ ահա ալվավ մարտական նշան  
Արան — զեկավարն այդ գողարիկ խմբի,  
Դուցե յերգում են տրտմադեմ աշնան  
Տերեաթմավը, կամ մեռնող արփին...  
Բայց լսիր. այս ի՞նչ ձայներ են վարար,  
Ի՞նչ գետ ե այգպես պառթկել ափերից,  
Այդ ի՞նչ նավեր են այդպես հողմավար  
Դուրս յեկել իրենց առորյա ձամրից...

Հորդում և հնչում մեծ Բեթհովենի  
 Սիմֆոնիան — յերգորդ կամ հերոսական,  
 Ո՛, այդ համերգում յելած զրոհի —  
 Արշավում և վեր հաղթ մասսա հսկան:  
 Նա զրոհում և Բաստիլի վրա,  
 Մարտակոծելով ամբոց ու պալատ...  
 Վոչ վոք չի կարող կաշկանդել նրան,  
 Նա և՛ հպարտ ե, և՛ վեհ, և՛ անպարտ:  
 Ու այդ յերգի մեջ յես լսում եմ դեռ  
 Մորեսովերների ձայները ցասկոտ,  
 Տեսնում եմ վասվող դոյցակներ, բերդեր  
 Ու անվերջ թափվող գնդակե կարկուտ:  
 Մի կարճ անտրակտից, հանդստից հետո  
 Լսվում ե բարձր կանացի մի ձայն.  
 Խոսում ե ուղիոն — հակիրճ ու հատու,  
 Յեվ ձայնը նրա տալիս ե հորձանք:  
 Ինչպես պերձախոս, բոցաշունչ պսեռ՝  
 Պատմում ե ուղիոն, թե ինչպես հորդուն  
 Մասսաները հոծ հուզված ալեծուփ  
 Հիմքից քանդելով ամբոցները հին  
 Յելել են վերջին, վերջին զրոհի  
 Կարգերին ընդդեմ և արնոտ, և ցոփ,  
 Ինչպես հնչում ե նրանց հաղթական  
 Սիմֆոնիան և՛ վեհ և հերոսական...

Պատմում ե՝ ինչպես մեր այս անեղերք  
 Աշխարհում յելում բարձրանում ե մի  
 Վեհ ու հոյակապ յերջանկալի շենք,  
 Ու միլիոններ են մեծ մաքասումի  
 Ուղին հարթելով զրոհում դեպ վեր:  
 Տեսնում են նրանք, վոնց ամենուրեք,  
 Նույնիսկ Սիրիոսում — ցուրտ ու հեռավոր  
 Շողշողում և մի մշտավառ արեք:  
 Յեվ առևնդրաներում, նույնիսկ հյուսիսի —  
 Յերեմի ամայի, անմարդաբնակ

Հարթություններում — այժմ ուս ուսի  
 Գլոհում և մի ամբակուռ բանակ:  
 Լսում են՝ հեռու տափաստաններում,  
 Հանքերում ածխի ու բաղմահաղար,  
 Գործարաններում՝ վոնց են համերգում  
 Քլոնդիներ, մուրճեր, կոմբայններ համառ  
 Ու այս բլբակից — հեռու հարավում,  
 Ուր մի ժամանակ և՛ տկլոր, և՛ վորը  
 Մի ժողովուրդ եր սովից տառապում, —  
 Նայում են նրանք իրենց լուսավոր  
 Աչքերով՝ այնպես կայծկլտուն ու բորբ —  
 Դեպի գալիքը — ավելի հուբանուր,  
 Ավելի պայծառ, քան մեր այս ներկան,  
 Քան վարդեր կարմիր, քան գինին պուրպուր...

Սիրելի մուսսա, յեղիր համարձակ,  
 Նավապետի պես դուրս արի բաց ծով,  
 Թող քեզ հմայի վեհ ու լայնարձակ  
 Ովկիանոսն անհուն իր մոնչոցով:  
 Թող նավիդ բաղնիկն ալիքները սար,  
 Ու փրփուր թափեն քո գանդուրներիդ,  
 Սակայն դու բարձր պահիր քո բոսոր  
 Դրոշը, ինչպես հերսոն կոմյերիտ.  
 Ու զնա առաջ — յերկրեցերկիր,  
 Դեպի նոր ափեր — գեղ վոտք չդրած,  
 Թող քո թոփչօքը ովկիանը յերգի  
 Ովկիանը վսեմ ու լայնատարած...

Ներիր, ընթերցող, վոր ընդհատեցի  
 Զբույցս քեզ հետ, ու մուսայիս դեմ  
 Վազուց լուռ կտրած իմ սիրտը բացի,  
 Վոր նըան մի քիչ, մի քիչ խրատեմ:  
 Ահա մենք նորից քեզ հետ միասին  
 Կանդնած ենք զբեղ մի պատշաճբում,  
 Կապույտ յերկնքից մի լիալուսին՝

Շուայլ աղջկա պես՝ արծաթ և թափում,  
Արծաթ և թափում այդ ծիծաղառատ  
Աղջկը վերից և ժայռը — անդամ  
Այդ մռայլաղեմ ծերուկը անթարթ  
Նայում և հբան, վորպես բարեկամ:

Ո՞, այս գիշերը — այսքան աստղալի,  
Այսքան լուսավառ, այսքան գունադեղ,  
Վայել և միայն մեր մեծ աշխարհին,  
Զորերին ծաղկուն, սարերին շքեղ...  
Քեզ, գարնան գիշեր, այս պատշգամբից  
Ուղարկում եմ մի տեհչալի համբույր,  
Քո ճերմակ գինուց — լուսնյակի լույսից —  
Լցնում եմ և սիրտ, և վոսկի սափոր:  
Քո շրթունքներին, ո՞, գարնան գիշեր,  
Հզում եմ սրտիս շուրթերն անբիծ  
Ու վայելում եմ և հաճույք, և սեր  
Զընաղատեսիլ այս պատշգամբից...

Ինչքան եմ ուզում, վոր ժամանակի  
Ընթացքը մի քիչ գանդաղի այսոր,  
Ու այս գիշերվա յերթը ցնծաղին,  
Վայրկյանը անդամ դառնա գարավոր:  
Ուղղակի շնչում, ասլրում եմ յես այս  
Մարդկանց ինքնաբուղիս խնդությամբ անմեռ,  
Չեմ ուզում քնել... Բայց արագահոս  
Զըների նման — թռչում են ժամեր:  
Յեվ արշալույսն և մռտենում արդեն,  
Բոցավառվում են դռներն գիշերվա,  
Պատռհանհներից թափում են վարդեր —  
Արև սիրուհիս — հենց բարձիս վրա:

Ո՞, այդ գիշերը այդքան ցնծալից,  
Այս առավոտը — վառ, լուսավարպը,  
Այս շքեղ շենքը, վոր կանաչ բլրից  
Ծիծղուն աչքերը սմեռել և վար,

Այս մանուկները — փրփրուն ջրվեժ  
Ուժով, հմայքով, կախարդանքով լի,  
Այս հերոսները և ուշիմ, և վես,  
Վոր բարձրացել են լեռան կատարին,  
Ո՞, այս բոլորը հոգիս կհիշե,  
Վորպես վեր ճախրող արտուտների յերգ,  
Յեվ քեզ, նազիրա, իմ առաջին սեր,  
Յես չեմ մռանա յերեք ու յերեք...

## ՅԵՐԳ ՅԵՐԿՐՈՐԴ

### ՖԱՌԻՍՏՆ ԱՐՁՆԵՈՒՄ

Խմբով գնում ենք դեպի Արգնի.  
Մեղ հետ և նաև մի ծեր ուսուցիչ.  
Դերող վաղորդյան հաճելի քամին  
Փշում և մոտիկ լեռան լանջերից:  
Հարթելով հունը խորդ ու բորդ ու ծուռ,  
Մազելով անվերջ ժայռերն աժդահա,  
Խաղում և Զանգուն: Զրերը փրփուր,  
Մտիկ տուր, յերգում, յերգում են ահաւ  
Յերգում են նրանք. ու նրանց յերգին  
Ականջ են դնում ժայռերը տիտան,  
Ո՞, այս ձորերում և՛ մարդ, և՛ յերկիր  
Ապրում են հույզը շինարարության:

Անցնում ենք խորունկ, մութ ու անհատակ  
Մի ձորի յեղբով: Լուռ ենք բոլորս.  
Ուզ և ջինջ ե, և շոյող, և տաք,  
Ինչպես արթնացած հին-հին հուշերս:  
Ու ամեն մեկս ինքն իրեն ներսում  
Խոսում ե կարծեք իր մաքերի հետ  
Յեկ իր հուշերից հեքիաթ ե հյուսում,  
Հեքիաթ վոսկեղեն ու արևավետ:  
Հեքիաթ՝ նոր մարդու, նոր հսկաների,  
Նոր չոմերսի, կոլումբի մասին,  
Վորոնց նալերի յերթը քաջարի  
Մի որ կհասնեն հեռավոր Մարսին:

Լենան, վոր ընավ տանել չեր կարող  
Ու ախոյանն եր խաղաղ լուսյթին,  
Իր սովորական խայթող հումորով  
Վեճի մեջ քաշեց ամպած պոկտին:  
Խոսքը մեր արդի գլուխանության  
Սահմանից անցավ հեռու, շատ հեռու,  
Մի Սայաթ-Նովա, Նաղաշ Հովհաննա,  
Մի Նարեկացի, Քուչակ հուբնիքան,  
Դարձան մաքերի, հույրերի բաղեման,  
Կովող կովմերի նշանակետեր...  
Մենք վիճում եյինք, թե նրանց նման  
Ո՞վ և այնքան վառ, վառ յերգեր կերտել:

Ծեր ուսուցիչը, այն մեր Քուչակին  
Մեծ եր համարում քան մի Հոմերոս,  
Քան մի Թիրդուսի, ու նույնիսկ Պուշկին,—  
Այդ վճիս, այդ ջինջ, այդ հանձարը ոսւս:  
Սայաթ-Նովային յերկուպատում եր,  
Պաշտում եր, ինչպես քուրմը մեծ Զևսին,  
Պատանու նման աշխատ յերգում եր  
Վարդի գովերդու բլուր Հավեզին:  
Հայ պոետներից նա ամենաշատ  
Սիրով գովում եր հայը Ալիշանին,  
Տերյանի գրքերն թողել եր կիսատ,  
Վորպես անարե ու մշուշային:

Պոետը նրան խիստ հանդիմանեց,  
Վորպես աղքային ու սահմանափակ,  
Վոր մոռանում ե համարները մեծ  
Ու տաղանդներին լոկ տալիս ե փառք:  
Վոր խունկ ե ծլում մանը սրբերին,  
Տաճարը թողած՝ մտնում ե մատուռ,  
Վոր մոռանում ե համաշեարհային  
Թախիծը յերգող մի տրութագուր:  
Յեկ իր աղքային սնափառության

Զոնդուընք ե գովում նա աշուղական,  
Ու չի հօսառում վարդերը միշտ թարմ,  
Հավետ բուրավետ ու հավերժական:  
  
— Զգվել եմ, — ասաց, — ծեր սոմաններից,  
Կերակուըներից այդ միատեսակ.  
Մինչ իմ կարդացած բաղում գրքերից  
Լոկ մի քանիսում յես արվեստ տեսա:  
Իսկ մյուսները տեղի անտեղի  
Կիս կամ աղջիկ են բերում ներս խոթում,  
Ու գտնելով մի պատահած տղի,  
Աղջիկը նրա վղին փաթաթում:  
Հետո լաց ու կոծ, դավաճանություն  
Ու վարժություններ գերասաճական,  
Վերջը նրանցից մեկը խմում թույն,  
Մյուսը՝ զանում ե մի նոր սիրեկան...

Այսպես ե յեղել բոլոր դարերում  
Կանոնը վեպի: Յել այժմ գերի  
Այդ կանոններին՝ դուք չեք դադարում  
Նույնը ներշնչել ձեր նոր յերգերին,  
Ձեր նոր յերկերին — նոր մարդու մասին...  
Ծանոթ եմ մոտից մեր պոետներին,  
Նրանց խոհերին, նրանց յերաղին,  
Անկերծությանս գուցե չներեն...  
Նրանք նստել են ձեռքերը ծալած,  
Մաղերը սանրած հանճարների պես,  
Նրանց թվում ե կյանքը մի անլաց,  
Անվերջ խնդության դիմակահանդես:

Թե վարանում ես, փառատ ես պահանջում,  
Կարդա նորագույն մեր վողջ լիրիկան,  
Արաքսի նման խոր ու շառաջուն,  
Արարատի պես և՛ վեհ, և՛ հոկա  
Լոկ մի պոետ կա, զոր հունն իր ուղու  
Հարթել ե ինչպես լեռնային մի գետ,

Յեվ զաշա ե լջել լեռներով բեզուն,  
Ջրերով լայնհուն և՛ լուրսւնի, և՛ էլենի:  
Իսկ մյուսները մաքսանենզությամբ  
Զկան փոխարեն վարսում են բառեր,  
Դըում են բալագ գբում են սսնետ,  
Գրում են դագել ու նման բաներ...

Բայց յես հոսանքի հոբձանքի գեմն եմ  
Վարում իմ նավը: Ի՞նչ ուրախություն,  
Ինչ ցնձություն ե զգում սիրալ իմ,  
Յերբ հանդիպում եմ ժայռի ու խութի:  
Ուռչում ե կուրծքս, ինչպես հողմերից  
Բարձրացած կոհակ: Յես այդ բոպեյին  
Մի կորսիկացի նապուեն եմ մեծ,  
Վոր ահ եր աղդում վողջ Յեկբոպային:  
Ինձ գուր ե գալիս, յերբ իմ նավակին  
Բաղթվում ե մի բան, յերբ վոր ջերում  
Փրփուր կա ու յեռ, յերբ հողին, հողին  
Հարթում ե ուղին աղատ, ինքնուրույն:

Ինչպես բոցավառ ճառ արտասանող  
Նարողնիկական ջահել հսկուր,  
Սանձելով մաքի նժույդը թռչող  
Պոետը գարձավ ծովի պես անդորր:  
Զեռքով դեն տարավ փունջը մաղերի,  
Վոր սավերել եր աչքերը անտակ.  
Բացվեց ճակատը. ճերմակ մարմարի  
Քնքուշ, նբաւակերտ մի չքնաղ քանդակ:  
Մինչ մենք վորոնում, ջանքեր ենք թափում  
Զաթաթաթիչ փաստեր գտնելու համար,  
Լենան պոետի սրտին ե լոփում  
Ավելի դիպուկ, ավելի համառ:

— Վարդենց, ո, Վարդենց, հերիք ե քայլես  
Մաշված, տրուված ճանապարհներով,  
Այդ քո խոսքերը մւմ են դուր գալիս

Իրենց վերամբարձ «սլացու մնալով»:  
 Ինչու յես նորից այս մեր որեղում  
 «Հարություն» տալիս հին մեռելներին,  
 Ում ես նինջ բերում, մւմ ես որոշում  
 Յեվ մի ե լուսմ այդ քո որորին;  
 Ինչու յես ներկում այդ խոսքերդ հին  
 Քնքուշ շպարով նորածեսւթյամբ,  
 Ում ես մագնիսում քո հերիաթոյին,  
 Ունայնապատիր սնափառությամբ:

Դու պոետների կանաչ անտառում  
 Տեսնում ես միայն մի հզոր կաղնի  
 Յեվ Ստավրինյան բոցաշունչ դաբում  
 Փչում ես աշնան վողբալի քամի:  
 Իբր թե ցալում ես մեր պոեղիայի,  
 Մեր արվեստների «կործանման» համար,  
 Այդ մասին նույնիսկ մի յերազյին  
 Պոեմ ես կերտել խոսքերով մարմար...  
 Յեվ դու հորդառատ կոկորդիլոսյան  
 Արցունք ես թափում «մեր բախտի համար»,  
 Գոռում ես, գոռում դիլ ու բարձրաձայն  
 «Արվեստն լորտակվեց, աման, վայ, աման»...

Ո՛, այդ մտքերդ հին են, բարեկամ,  
 Թիթեղյա խոսքեր՝ բայց վոսկեջրած,  
 Նըանք լոկ սնանկ, չարկամ, ապիկար  
 Բարբաջանքներ են՝ նոր դիմակ հագած:  
 Դա վագուց պարտված, ընդմիշտ ջախջախված  
 Մի «անսություն» ե, մի մեռած դիակ  
 Ու այժմ նըա թևերից կախված՝  
 Բարձրացնում ես, աղմուկ աղաղակ,  
 Թե իզուր ենք մենք աշխատանք թափում,  
 Իզուր ենք կերտում մենք մեր կուլտուրան,  
 Թե՝ «մեր անցողիկ, խառնակ ետապում  
 Ժամանակ չկա այդ բանի համար»...

Անսպասելի այդ հարձակումից  
 Պոետ վարդենցը սաստիկ շփոթվեց,  
 Բայց ուժ հավաքեց բոլոր կողմերից  
 Ու շփոթմանքը քիչքիչ փարատեց:  
 Փարատեց, սակայն, ինձ թվում եր թե  
 Նա խուսափում ե բաց դաշտը դուրս դար,  
 Այս խնդրում զանե, լենայի հանգեղ  
 Իրեն զգում եր և թույլ, և տկար:  
 Յեվ նա փոխանակ ուղղակի հարցին,  
 Հարձակումներին պատասխանելու,  
 Հեծավ մտքերի, հուշերի ու ձին  
 Գնաց պատույտի հին աշխարհներում:

Նա խոսվահաւյդ դիմեց իբ սիրած,  
 Հավետ պաշտելի պանդուխտ պոետին,  
 Կարծես վասկում եր, հրդեհվում սրտանց,  
 Կարծես կանգնել եր լեռան դագաթին:  
 — Բայրոն, ո, Բայրոն, կախարդիչ պոետ,  
 Սիրում եմ յես քո հպարտ Մանֆրեդին,  
 Արել կմարի, կկորչի անհետ,  
 Բայց զեռ կվառվի սիրաը Հարուդիդ:  
 Վաչ մի հանճարեղ նկարիչ այնպես  
 Դեռ չի նկարել զեմքը բնության:  
 Ինչպես պատկերել ու քանդակել ես  
 Շնչուն տողերով՝ գարնան պես փարթամ...

Զարձակեցի յես զարմանքի ձայներ  
 Յեվ վոչ հիացքի ճիչեր սրտագին.  
 Հաճախ եմ լսել այդպիսի ձոներ,  
 Զոներ՝ նվիրված մեծ սոմանափին:  
 Յեվ ամեն անպամ, յերբ նա Բայրոնից  
 Կարդում եր մի բան — մի յերդ, մի պոեմ,  
 Արբում եր, կարծես նըանց վառ բույրից  
 Ու նստարանք դառնում եր մի բեմ:  
 Յեվ բեմ եր յելնում վարդենցը ջանել

Արտասահնում եր ձո՞ներդն իբա...  
Իսկ մյժմ... Այժմ ուսուցիչը ծեր  
Զարմանք հարցումով — դիմում ե նրան.

— Ինչու Բայրոնին այդպես կարոտով  
Հիշեցիր, տղաս, չո՞վոր նրանից  
Ավելի հսկա ու մեծ տաղանդով  
Շեքսպիրն ե մեծ նայում դարերից:  
Չո՞վոր Բայրոնը մի մեռնող դասի —  
Ազնվականի փառքն ե գովերդել,  
Այ, ինչ եմ ասել բլբուլ ֆերդուսին,  
Հենց նրան պետք ե ընդորինակել:  
Սակայն ուսուցչի խոսքերը հանկարծ  
Համբացան ոդում ինչպես շանթահար,  
Պոեմը ցասկու ու խիստ սրտնեղած,  
Բայց սուր վեճի անծայր ճանապարհ:

Հարգում եմ յես քեզ, անծանոթ ընկեր,  
Սակայն կարծիքիդ յես համաձայն չեմ,  
Շեքսպիրը գրել ե հանձարեղ յերկեր,  
Բայց միշտ կապվել ե կյանքին այս ճդճիմ:  
Նրա տիպերը մարդիկ են մեղ պես,  
Կապված են հողին ու չեն բարձրանում.  
Խանդոս Ոթելլոն, Դեղդեմոնան հեղ՝  
Միրում են մեղ պես, մեղ պես վշտանում:  
Ու Յագոների մի անթիվ վոհմակ  
Վիստում ե շուրջը և նրա, և քո.  
Միայն սիրում եմ Համլետի անհապ  
Միաքը խուզարկու ե հալերժ դժոն:

Այլ ե Բայրոնը: Վերցնենք թեկուղ  
Մանքրեզը նրա: Դա մի անսահման,  
Հավիտյան անքուն ու փոթորկահույդ  
Հոգու տրտունջ ե, վոր հոգմի նման  
Խորտակում ե իր ճամրին պատահած  
Ամեն մի արդելք: Ալպյան լեռների

Արծիվն այդ հզոր, վոր թևատարած  
Ճախրում ե աղատ, ըմբոստ ու արի,  
Նա մեղ նման չե — սողոսկող ու խեղճ,  
Նա արեի պես և' մեծ ե, և' վաս,  
Նրա բողոքը՝ մի ահեղ հեղեղ,  
Վոր խորտակում ե ամեն մի պատվար:

Ծեր ուսուցիչը, վոր համբերությամբ  
Տանում եր նրա ոմբակոծության  
Համազարկերի ճիշն արագաթափ, —  
Սկսեց հանդարտ ու խրատական.  
— Սակայն դա վշտի, հոռետեսության  
Վայը հջքն ե, տղաս, դա Մանֆրեդ կոմսի  
Լոկ անհատական մի հերոսության  
Պոեմն ե, տղաս: Մասսայի մասին  
Չկա վոչ մի խոսք: Անիմաստ են այդ  
Մենափոր մարդու քայլերը հակա,  
Դա մի ուղի յե դեպի մի անհայտ,  
Անորոշ, անհույս, տխուր ապագա:

— Մասսա յեք ասում, մասսա ու մասսա,  
Զգիտեք, սակայն, վոր նրա նման  
Զկա ավելի արնախում գաղան,  
Վոր նա կողպում ե և սիրտ, և' թերան:  
Զգիտեք, վոր նա ծանը ժայռի պես  
Կախվում ե մարդու մտքի թերից,  
Յեվ դահճի նման խիստ ու ժանտատես,  
Մեղ կախում ե մեր դարի սյուներից:  
Դուք աշխատում եք ժխտել անհատի  
Ամենակարող ուժն ստեղծագործ,  
Կարում եք, կարում թերը մարդու  
Վորպես մի դաժան, մի ժանտ մսագործ:

Ո՞ Զօրդանոներ, Նյուտոններ խիզախ,  
Նստած ողանավն իրենց ուղեղի,  
Մեղնից շատ առաջ գտել են լուսնին,

Աստղերին հասնել — անցնելու ուղին:  
Նրանք վշտել են այս հողագնդին  
Կապող զղթայի ողերը ժանդու  
Ու բարձրացել են լեռան գաղաթին  
Արևի նման ու արել մոտ:  
Ամբոխը ուժով ուղել են նրանց  
Այդ բարձրությունից անդունդը քաշել,  
Բայց տեսեք, տեսեք աստղերն անանց  
Ինչ վառ են փայլում դարնան այս դիեր...

Իսկ մենք, հողեղեն արարածներս,  
Վոր մի փոր հացի համար ենք տհքում,  
Վոր վոչխարների հլու հոտի պիս —  
Միայն ուտում ենք ու հանգիստ քնում  
Յեվ կարծում ենք, թե ստեղծել ենք մի  
Յերջանիկ ու շեն յերկրային դրախտ,  
Մեղ վարակել ե մի հաշիշային,  
Ամեն ինչ լափող ու բախության ախտ:  
Այլ և Բայրոնը: Խիզախ ծովանեն,  
Իր դարի ընդում մարմնացած բողոք,  
Վոր հարություն ե տալիս անցյալին  
Իր պոետական հմայուն փողով:

Անցյալի վայրկյանը ապագա դարեր  
Յեվ նույնիսկ ամբողջ գալիքը արժե,  
Գալիքը կգա, անցյալն հետ բերել  
Դեռ չի հաջողվել և վոչ մի ուժի: —  
Ո՛, նայիր ձեռքիս այս ժամացույցին,  
Տես՝ ինչ արագ ե սլաքը թուչում,  
Այդ մեր կյանքն ե, վոր ձեռքը ծոցին  
Կայրկյան առ վայրկյան գնում ե կորչում:  
Թե քաջ ես, հզոր, վերադարձու,  
Հետ տուր ինձ անցած վայրկյանն այդ չնչին,  
Ո՛, զու անզոր ես, զու մժղուկ, զու լու,  
Վոր տեր ես կարծում քեզ ամեն ինչին:

Մի որ ուղղակի քարին եմ իսպել  
Ու փշել ձեռքիս ժամացույցը չար  
Յեվ սկսել եմ ինքս ինձ իսպել,  
Վարպեսպի մոռնամ՝ և մահ, և աշխարհ:  
Չե վոր ամենից պկնհայտ ու հեշտ  
Մեղ ցույց ե տալիս սև փոսի ուղին  
Սլաք սրիկան, վոր այդպես անհետ  
Փախչում ե հապճեպ ու գաղտագողի:  
Փշել եմ սակայն մի այլ ժամացույց  
Ավելի պարզ ե ուղին ցույց տալիս,  
Նայիր մաղերիս, տես, ինչպիսի ցուրտ  
Զմեռ ե իջնում զլիսիս, քունքերիս...

Իր վերջին խոսքը հաղթական տոնով  
Շեշտեց պոետը ու առավ դադար,  
Ինչպես լողացող առագաստանավ՝  
Հեռվից զալիս ե մի ամպե անտառ:  
Իսկ ընկերունիս, վոր թվում եր ինձ,  
Թե չի լսում այս արյունոտ կովի  
Սրերի ձայնը ու լոկ անթախիծ  
Ունկնդըռում եր կարկաչը առվի,  
Կամ ձանապարնին աչքերը նրա  
Դիտում են կանաչ արտերը անծիր,  
Հանկարծ պոետի դիրքերի վրա  
Կապեց անվրեալ մարտի գնդացիր:

— Թեև ակներե, բայց պետք ե ասեմ,  
Վոր մեր բարձրագույն ուսումնարանից,  
Դիտությունների այդ արսենալից  
Դու դուրս ես յեկել բոկսան, անզեն:  
Դու մնացել ես նույն հեղեղիստը,  
Ֆրիդրիխ Նիցշեյի ջերմ յերկրագուն,  
Ու չես վողջունել բարի գալուստը  
Աստղալի կյանքի — այս մեր աշխարհքում:  
Դու միշտ պիտի ես, թե կորսիկացի

Նապոլեոնից ել վեհ անուն չկա,  
Թե՞ մենք ունենք լոկ մի Նարեկացի,  
Վորին չի հասնի և վոչ մի հսկա:

| Իրերը դիտում ես կանգնած վիճակում,  
Չես տեսնում նրանց ընթացքը հոսուն,  
Դու վողջ աշխարհից մի խուց ես ջոկում,  
Փակում ես մեջն ու յերգեր հյուսում:  
Յեկ հնադարյան ձզնավորի պես  
Անձք ես կարդում մարդկանց շառաչուն,  
Սրբնթաց թափին: Դու փափազում ես  
Ասպել լոկ՝ ինչպես մենավոր թռչուն:  
Զգիտես, սակայն, վոր մեր այս դարում,  
Ուր — քո ասածով բացվել են արդեն  
Ուրդիներն — դեպի աստղային հեռուն,  
Մարդիկ մենակ են լոկ մութ դադաղում:

Ներրողում ես գու ուժը ալիքի  
Ու մոռանում ես ովկիանի մատին, —  
Դրա համար են յերգերդ դառնադին,  
Անզոր, անկըսակ, արցունքոտ ու սին:  
Հին արժեքներին գու ծունկ ես չոքում  
Ինչպես հին քուրմը — բազինի առաջ,  
Սակայն չես տեսնում — ինչպես են ծաղկում  
Նու պարտեզները մեր մշտականաչ:  
Բայց, տես, այս գետի վազքը սրբնթաց,  
Կարմու ես մենակ շուռ տալ դեպի հետ...  
Մյուսես ել կյանքը հին, անվերադարձ  
Ել չի դառնա յետ, ել չի դառնա յետ:

Հաղթանակ տարած Կյուլեյի նման,  
Վոր պարտված կարծից մեծ Սենթիերին,  
Քայլում եր հապատ — սրտաջինջ լենան  
Հայացքը հառած հեռու լեռներին:  
Իսկ ուսուցիչը, ինչպես Հոռմի  
Մի ազնվագարմ ճերակուտական,

Վոր հանկարծ լսած զեկորը ուազմի —  
Բյուր սարուկների ապստամբության,  
Գլուխը կորցրած ու սարսափահար,  
Հարձակում կրած մի մարդու նման,  
Սկսեց նորից մեղմ ու հայրաբար  
Շոյող խոսքերով խրատել նրան:

— Արհամարհում ես բազմությունների  
Ուժն ամենազոր: Չգիտես, սակայն,  
Թե ինչ ե արել բազում դարերի  
Խիզախ հերոսը — մեր մասսա-հսկան:  
Սյստեղ — այս ձորում, ուր մի ժամանակ  
Կային լոկ հյուղեր — մութ ու գետնափոր,  
Սյստեղ — այս դաշտում, ուր լոկ մի առվակ  
Լալիս եր տրտում ու սրտակտուր,  
Սյստեղ, այս լեռան ծաղկավետ լանջին —  
Ուր մի ժամանակ — անողոք ու խիստ —  
Շաշում եր տիրոջ ջլապինդ դամչին —  
Այժմ խփում ե մի ազատ, մեծ սիրտ:

Պոետը հարմար խոսք եր վորոնում,  
Վոր ուսուցիչին տա հականարված,  
Մի քանի բուկե, կարծեք վարանում,  
Կարծեք սրտումը ծնվում ե կասկած.  
Նա չի հավատում իր թույլ ուժերին, —  
Նրան տանջում ե մի անբուժելի,  
Անդամալուծող հին հիվանդություն,  
Վորի անունն ե հոռետեսություն:  
Վորոնում ե նա պայթուցիկ խոսքեր,  
Խոսքեր թունավոր ու խռովարար...  
Մինչդեռ, մեր լենան ծաղիկներ գրկել —  
Կենսատու հյութ ե սրսկում նրան:

— Վարդենց, սիրելիս, այս մեր յերջանիկ  
Կյանքը կերտել ե հենց հերոսը այդ,  
Այս մեր լիրակերը, ժայռերն անառիկ

Զեր կարող տիրել և վոչ մի անհատ:  
Ո՞ւ, մասսաների թռիչքի դիմաց  
Քո հերոսները խեղճ են ու անհար,  
Բայց նրանց առաջ՝ կաղնու պես կանգնած՝  
Այդ զեկավարն ե մեր բազմահանձար:  
Տանում ե նրանց նա մեծ գրոհի  
Հանուն աշխարհի վերափոխության,  
Ու նրանցով ե ինքը հաղթարի,  
Յեվ անպարտելի, և հսկա տիտան:

Լուս և պոետը... Իր մտքի հանքում  
Կարծես լսվում ե ձայնը քլունդի...  
Նա վերհշում ե անցյալի միզում  
Մշուշված գեմքեր, գեպքեր սրտագին:  
Մտնում ենք ձորը: Վերեր՝ քարափ,  
Վորից կախվել են — ժանիքների պես  
Ահավոր ժայռեր: Հեռվում մի քաղաք  
Աչքով ե անում ու կանչում ե մեղ:  
Ու մոխրի բարակ շղարշով պատաճ՝  
Հուշ-խարսույկների շեղը խառնելով՝  
Մերթ ամպոտելով, մերթ պարզ, սրտարաց  
Պատմում ե պոետն հուշեր խուռներամ...

— Հիշում ես, Լենա, հին պրոֆեսոր,  
Այդ կարճլիկ ու հաստ քնած «Ամպրոպին»,  
Խոսում եր սակավ, սակայն պաթոսով  
Մերթ-մերթ յելնում եր բարձր ամբիոնին:  
Հիշում եմ: Մի որ լսարանը մեր  
Փրփրած գետի պես՝ յելած ափերից՝  
Քրքրում եր մի հանգուցված խնդիր:  
Նա ծանրածանր, հորանջուն, քնկոտ,  
Կլր միւռուքը շոյելով խաղաղ —  
Տոնական ու վես տեղից բարձրացավ. —  
Տղերք, ինչու յեք, ինչպես աքաղաղ  
Մեկ-մեկու տալիս սուր — կտուցի ցավ:

Հարցը պարզ ե, պարզ, գարնան արևոտ  
Յերկնքի նման: Բոտ իմ կարծիքի  
Սյապես և լուծվում հանգույցը «կնճոռոտ»:  
Սպասում եյինք «թեավոր» խոսքի:  
— Տղերք, — ասաց նա, — կասեմ մի կարծիք,  
Թե համաձայն չեք՝ մի ուրիշը կա...  
Հիշում ես, ինչպես պայթեց խուլ աղմուկ  
Ու դահ բարձրացավ ծիծաղի արքան:  
Քրքջում եյինք և դառն, և սուր,  
Ծիծաղեց նույնիսկ Ամալիան անխոս,  
Ու լսարանը դարձավ անսովոր  
Փոփուկների իսկական քառոս:

Իսկ Համդոն, այդ շեկ, այդ կաղնեհասակ  
Դյուրավառ տղան, այնպիսի բարձր  
Մի ծիծաղ ուներ, վոր ինչպես հորձանք՝  
Լցրեց միշանցքը ու արշավեց վեր...  
Հիշում եմ նաև, ինչպես մի անգամ  
Իր չկարդացած գրքերի մասին  
Մեր մի ընկերը խոսեց յերկու ժամ,  
Իսկ դասախոսը զեկուցումը սին՝  
Գտավ բավարար: (Յեվ պետք ե ասել,  
Վոր դասախոսը մեր այդ անվանի  
«Քննադատ» եր մի, և պետք ե հիշել,  
Վոր և վոչ մի գիրք նա դրած չունի):

Ունեյինք նաև մի քանի գրքի  
Սահմանից չանցած մի գոցենտացու,  
Խոսում եր անվերջ, կրկին ու կրկին  
Նույն հարցերի շուրջ.. Միթե՝ չեր զգում,  
Սիրելի լենա, այդ խեղճ տիրացուն,  
Վոր մենք նոր զարի, հեղափոխության,  
Գնացքն ենք նստել, վոր զիլ են զնզում  
Թոչող գնացքի ուկսերը խնդուն:  
(Արտասանում եր հայերեն բառեր,

Բայց հայերենի մի նշույլ չկար,  
Նա մեր մաքերին դարձել եր մի բեռ,  
Իսկ մեր մեջքերին, ծանր, ճղմիչ քար...)

Հուշերիս ամպոտ ու մութ յերկնքում  
Կայծակի նման լուսավորելով  
Խորունկ խորշերը փոթորկուն հողուս —  
Իմ դեմ ե յելնում իր վեհ հասակով  
Ու իր ճակատով — ովկիանի պես լայն  
Մեր դիալեկտիկ մատելիալիզմի  
Դասախոսը սեգ: Նայում եմ նրան,  
Սիրելի լենա, կարծես հենց հիմի  
Խոսում ե հետո, ու յես զգում եմ,  
Տեսնում եմ նրան ճակատի դաշտում  
Ու արտահայտիչ անհուն աչքերում  
Ինչպես ե սուլում վշարի խենթ քամին...

Անսահման սիրով լսում եյի յես  
Այդ մարդուն միայն: Նա իմ մեջ վասեց  
Գիտության հուրը, վորին թե լցնես  
Ովկիանոս մի ջուր՝ չեր կարող մարել:  
Սակայն յես նրա տեսակետին ել  
Համաձայն չեյի: Նա ներբողում եր  
Միշտ նույն հերոսին. (դե, ինչպես տանել,  
Յերբ քարկոծվում են քո հին աստվածներ):  
Բայց սիրում եյի — ժպիսով ժլատ  
Ու խիստ քննադատ — այդ պայծառ մարդուն,  
Նա մի արև եր — մուժ ու միզապատ  
Խեղճ մարդուկների այդ մթնոլորտում:

Ո՞, այդ որերը ինձ տվել են թույն,  
Սիրսա կտրել են մի բութ սղցով,  
Ինչու յես հոգուս մակընթացության  
Ահավոր ժամին — դուրս գալիս բաց ծով:  
Փայփայում եյի և աղջիկ, և վարդ,  
Ու գրում եյի սիրո պոեմներ,

Վորոնում եյի մենավոր մի վանք,  
Մի խաղաղ անկյուն — անձայն, անընկեր:  
Բայց այլ եր, այլ եր, սիրելի լենա,  
Այդ ժամանակի բացարձակ վոդին,  
Ու բարձրանում եր հարկն հարկի վրա —  
Քո այս մարմարյա, այս լուսեղ շենքի:

Ու յերդում եյին, բոլորը յերգում.  
Նավաստին՝ ծովում, բանվորը հալած  
Յերկաթի առաջ ու խորունկ հանքում,  
Կոլխոզնիկը՝ լայն ու համատարած  
Ծփուն արտերում, զինվորը — կարմիր՝  
Մեր անձայրածիր սահմանի վրա՝  
Ու պոետները — պոետները մեր  
Յերգում եյին լոկ վերելքը նրա:  
Իսկ յես վայրենի վարդենիների  
Մահն եյի լալիս, ինչպես Բաղդադի  
Մեծանուն պոետ — վշտու Մահարին՝  
Զենքը զրի վար ու վախա մարտից:

— Վարդենց, ո՛, Վարդենց, դրա համար ել  
Այդ շենքի նման ու այդ շենքի նետ  
Պոետներ են նոր յելել — բարձրացել,  
Իսկ դու մնացել, մնացել ես նետ:  
Դու յեղասայլի թափով ես վաղում  
Մեր սուր — սլացող գնացքի յեաքից,  
Դու հին հայկական հեքիաթ ես ասում  
Յեկ յերդախան, և զառնակուիծ:  
Չես տեսնում, սակայն, վոր շատ են փոփովել  
Մարդիկն ու աշխարհ, սարեր ու ձորեր,  
Վոր մաքառումով, բարձրանում են վեր  
Յեկ յերիտասարդ, և' մանուկ, և' ծեր:  
Դու այն Մանչացի Գոն-Կիխոտի պես՝  
Զեռքումդ նիզակ ու ասպետական  
Սաղավարտ զլիլոդ՝ յեկել ես հանդես,

Ո՞, խղճուկ Վարդենց, չգիտես, սակայն,  
Վոր հերոսական մեր արագ վազքի  
Թռչող գնացքից դու վայր ես լնկել,  
Դարեր են անցել... Զարթնել ես կրկին,  
Յերգում ես վաղուց մոռացված յերգեր:  
Դու խիստ զայրույթով դատապարտում ես  
Մեր ժողովները... Տանջող ձանձրույթով  
Նստել ես լսել... Անիծել ես մեղ  
Ու միշտ խոռվ ես յեղել դու սրտով:

Գանդատիւմ ես, թե շատ եյինք խոսում,  
Բայց յերբեք գարնանամուտին  
Տեսել ես, ինչպես սառցային մի սյուն,  
Գահավիժում ե, զլորվում գետին:  
Ու սկսվում ե անզուսպ մի ձնհալք,  
Յերգում են հազար — հազար առուներ,  
Գետը վաղում ե կոհակ առ կոհակ,  
Ու կարկաչում են անթիվ աղբյուրներ:  
Լսվում ե ճախրող թոշունների յերգ,  
Գտաների մայուն, ձիերի խրխինջ,  
Գարունն ե գալիս, զարթոնք ե, զարթոնք,  
Գալիքը վառ ե, և դլութիչ, և ջինջ...

Կարնող ես, կարնղ զարթնող բնության  
Առաջը առնել, — ո, վոչ, չես կարող,  
Նա գարնան համար բոցուն ցնծությամբ  
Ուզի յե հարթում ճիզով, պայքարով:  
Այդպես ել, Վարդենց, նոր, ո, նոր կյանքի  
Զարթոնքի ժամին դու չես կարենա  
Առաջը առնել խոսքի, հըճվանքի  
Վարար հրսանքի: Ինքնարուղիս և նաև  
Վորպես լեռներից պոռթկող հորդ աղբյուր,  
Վորպես սիմֆոնիա մեծ թէթնովենի,  
Իսկ դու սիրում ես մի թէթն բամբիո  
Ու նոճի ծառեր — քեզ ամպհովանի:

Յեվ դու լսել ես այդ մեծ սիմֆոնիան,  
Վորպես դերվիշը արեկելացի,  
Սիրուհուց խոցված պատանու նման —  
Վորպնել ես լոկ շեշտերը լացի,  
Չես դտել, ավանդ... ու տառապել ես...  
Իսկ այդ սիմֆոնիան բերդեր՝ զրավող  
Մասսաների պես և՛ հպարտ, և՛ վես,  
Հնչել ե անվերջ մարտի զբոհով:  
Ու գրոհել են մասսաները հոծ  
Բարձունքից բարձունք, գագաթով — գագաթ,  
Իսկ դնւ... դու վորպես ճահճային մի ոճ՝  
Լացով ես դիտել այդ յերգը զվարթ:

Սերգոն, վոր մինչ այդ ծանրախոհ ու լուռ  
Լսում եր վեճը մեր հետաքրքիր,  
Իր խորազնին աչքերը հուրհուր,  
Հանկարծ սմեռեց պոետի գեմքին:  
Ու նրա այրող հայացքի առաջ,  
Վարդենցն ակամա գլուխը կախեց.  
Բայց նա գետի պես՝ հորդած, վարարած  
Յեվ ափ, և պատվար խորտակեց, քանդեց:  
Անդիջում, ամուր՝ զերթ պողպատ անթեք՝  
Կրքոտ, բայց զսպված Սերգոն եր խոսում:  
Նրա խոսքերը՝ զերթ թունավոր տեղ,  
Խոր մեխիսվում եյին պոետի սրտում:

— Մեծ համբերությամբ, հուզված ասաց նա, —  
Լսեցի յես ձեր վեճը «իմաստուն».  
Թույլ տվեք այժմ լինել անխնա՝  
Ինչպես հասուկ ե կոմունիստ մարդուն:  
Չե վոր հանճարեղ իլյիչն անմահ  
Ու մեր պողպատե առաջնորդը մեծ  
Մարտում յեղել են գածան, անխնա,  
Այդպես ել կոել ու կոփել են մեղ:  
Չե վոր փառապանձ մեր կաւսակցության

Հողուց մի մասնիկ կա նաև իմ մեջ  
Ու չե՞ վոր նա յե տվել հոգուս թափ,  
Մաքերիս՝ թոփչք փառահեղ ու մեծ:

Դու, ընկեր Վարդենց, խոսում ես հուզված,  
Զոկված խոսքերով ու դառնակովիծ.  
Սակայն մտքերդ հին են, դղողված  
Ու փոխ առնված այս կամ այն զբքից:  
Կյանքն ե ահա շունչն ամեն ինչի,  
Վոր պակասում ե այդ քու մտքերին,  
Դրա համար են խղճալի, չնչին,  
Յեվ յերազներդ, և մտքերդ հին:  
Դու «վարպետորեն» ու «տաղանդավոր»  
Փայլուն տողեր ես շարում կողք-կողքի,  
Բայց ստացվում ե լալկան, սգավոր  
Մի մահվան քայլերդ՝ անհույս, անհողի:

Այսպես որինակ՝ Շոպենհաուերյան  
Անհույս, անկրակ հոռետեսությամբ  
Դու մեր այս չքնաղ կյանքը հուրհուրան,  
Մեր վերելքը մեծ ու արագաթափ  
Համարում ես լոկ մահվան մի թափոր,  
Իսկ մեղ՝ հնազանդ վոչխարների հոս...  
Դու ամեն ինչին նայում ես թափուր,  
Անարկ սրտով ու աչքերով խորժ:  
Բայց միթե այստեղ կա ճշմարտության  
Գոնե մի հյուլե, մի չնչին մասնիկ...  
Դրանից ել բութ, անձիշտ, անատամ  
Մեղադրանք կա նոր մարդու մասին:

Մենք, վոր յերեք մեծ ու աշխարհացունց  
Հեղափոխության առաջամարտիկ  
Զինվոր ենք յեղել, մենք, վոր մահացու  
Հարված ենք տվել թշնամուն վամպիր,  
Մենք, վոր փոխում ենք հունը զետերի,  
Աստղերի անհաս աշխարհն նվաճում,

Վոր շունչ ենք տալիս անապատներին,  
Ուր վարու հասկն ե խնդությամբ աճում.  
Մենք, վոր անդադար վերափոխում ենք  
Յեվ մարդ, և աշխարհ, և հողի և սիրա,  
Հլու հնազանդ վոչխարներ ենք մենք,  
Ուրիշն եր արդյոք, թե այդ դժու ասիր:

Անարիխստի պես մոտենալով վողջ  
Համաշխարհային գրականության՝  
Ընկար մտքերի լարիրինթի մեջ,  
Ու հակասության փակուղին մտար:  
Խարույկի վրա բարձրացրիր դու  
Արվեստի Մոնրան մեծ Շեքսպիրին,  
Միայն Բայրոնին, այդ անհույս մարդուն,  
Հասցըրիր հեռու, հեռու աստղերին:  
Ի՞նչն ե պատճառը քո այդ անհեթեթ,  
Քո այդ «ինքնատիպ» մտքերին, ընկեր,  
Իդուր յես թափում արցունքի հեղեղ,  
Մեզ ինչի՞ յեն պետք այդպիսի յերգեր:

Չե՞ վոր մարդկության հանճար մեծագույն  
Համայնապարփակ Մարքսը վեհ ու մեծ  
Անհուն սիրով և սիրել հմայուն  
Շեքսպիրին ջինջ ու արևամերձ:  
Չե՞ վոր դեռ վոչ մի մեծ արվեստագետ  
Հոգու հանճարեղ ճարտարապետ մարդ  
Չի կերտել մի նոր իմաստուն «Համլետ» —  
Աստղալի յերկինք, և վճիտ, և բարդ:  
Չե՞ վոր դեռ վոչ վոք այնպես բաղմերանդ  
Չի արտացոլել կյանքն իր դարի,  
Ինչպես արել և խիզախ վողբերդակ —  
Շեքսպիրը վեհ, մեծ ու վիթխարի:

«Նա պատկանում է բոլոր դարերին»  
Ասել ե մեկը վիլյամի մասին,  
Թեև ընդհանուր ու տարերային

Խոսքեր են դրանք — բոլոր միասին,  
Վորովհետեւ մեր ափեղերքի մեջ,  
Ամեն ինչ հոսում, փոխվում է անվերջ,  
Բայց պետք է ասել, վոր այդ ընդհանուր  
Խոսքերումն ել կա ճշմարտության հուր,  
Մարդկային հոգու մեծ ճարտարապետ,  
Վոր կառուցել է շենքեր վիթխարի —  
«Մակրեթ», «Լիր արքա», «Ոթելլո», «Համլետ»  
Չի պատկանում լոկ է լոկ իր դարին...

Զիս տևանում, միթե, մեր նոր արվեստի  
Բարձրացող շենքը վիթխարանսկա,  
Նա կարիք չունի վոչ քո գովեստին,  
Վոչ քո քնարին, հույզերին մրական:  
Նա մեր անսահման մեծ հայրենիքի  
Հող ու ջրից է կյանք առնում, առում.  
Դու այդ շենքի մեջ կլսես յերգի,  
Նվազի ձայներ՝ և՛ բազմահնչյուն,  
Յեկ բազմալեզու, և՛ վեհ, և՛ խնդուն:  
Այդ շենքի համար, լսում ես, ընկեր,  
Վորպես քար, ցեմենտ, աղյուս ու բետոն՝  
Մենք դուծածում ենք հույզեր և յերգեր:

Դա շենք չե, այլ մի հոյակապ համերգ,  
Վոր հորինել ե վոչ թե մի վագներ,  
Վոչ թե Բեթհովեն — դարերով անմեն,  
Այլ աշխատավոր ժողովուրդը մեր:  
Սակայն վոչ միայն ժողովուրդը մեր,  
Այլ և շատ ու շատ այլ ժողովուրդներ,  
Յուրաքանչյուրը իրա ազգային  
Զեն է հազօրդել այդ վեհ հսկային:  
Սակայն այդ ձեզ հագեցած ե վեհ  
Սոցիալիստական բովանդակությամբ,  
Ու այդ յերգով ե սուրում դեպի վեր  
Մեր յերկիրը մեծ ու արագաթափ:

Ու մասնակցում են այդ մեծ համերգին  
Թե քո ակնարկած պոետը հուբահուր,  
Թե այլ պոետներ մեր նորոգ կյանքի,  
Վոչ վորպես ոտար, կամ մի որվա հյուր,  
Այլ ամեն մեկը իրա գործիքով,  
Իրա յերգերով — կենսախինդ ու նոր,  
Յեկ հորինվում է բոլորի ձիրքով,  
Բոլորի ձեռքով այդ յերգը հանուր:  
Գուցե իմ խոսքը այսքան չերկարեր,  
Թե վոր չզգայի, վոր մի պինդ ճակատ  
Ուզում է այսոր մեր դեմ պայքարել  
Զենքերով և՛ հին, և՛ բութ, և՛ ժանգպատ:

Սերգոյի խոսքը հնչում եր վստահ՝  
Ինչպես հնի գեմ գրոհող բանակ.  
Ինչքան ձգնեցի, մի բառ չգտա,  
Վոր հիացմանքիս փակ լեզուն բանամ:  
Այլ մարգու խոսքում կար ստալինյան  
Անդրդպելի կամք ու արիություն.  
Հենց այդ եր, այդ եր, վոր իր ջելմությամբ,  
Յեկ համոզում եր, և խորը դյութում:  
Հենց այդ եր, վոր իր ձշմարտավատում,  
Փաստառատ վրճով, կենսուրախությամբ  
Պոետի դեմքին ամպեր եր բարդում,  
Գորշ, արձիճ ամպեր հուսաբեկության:

Բայց նրա խոսքը դարձավ ջախջախիչ,  
Ավելի հատու, անսողք, դաժան,  
Աչքերը՝ շանթոտ, շարժումները՝ թիստ,  
Հոնքերը ծանրացան, ինչպես մոայլ ժայռ  
Յերբ նա վերլուծեց պոետի հոռի,  
Անլույս մաքերը, գալիքի մասին,  
Յերբ նա անխնա մատնելով հրին,  
Քանդեց պոետի տաճարները հին:  
Յերբ նա ծառացավ Վարդենցին ընդդեմ,

Վորագես իսկական խիզախ լենինիստ,  
Վոր պիտե հինը արմատից քանդել,  
Թշնամու դեմ միշտ անսասան և խիստ...

Դու, — ասաց Սելզոն, — ներկայից դժուն,  
Գալիքից անհույս, անհեռանկար,  
Մինչուկտեմբերյան անցյալի դժույն  
Ու նույնիսկ նրա եջերը մռայլ  
Զարդարում ես վաս, վոսկեպույն շորով,  
Մետաքսյա քող ես գցում յերեսին,  
Յել թվում ե, թե որոր ու շորոր՝  
Յեկեղեցի յես տանում նոր հարսին...  
Դու յերազում ես, փիլիսոփայում,  
Զոներդ ես կարդում այդ նորահարսին,  
Զերմ գուրզուրում ես, սիրով փայլիայում  
Յել անուրջներով և մտքերով սին:

Ճիչ չես խնայում փրկելու համար  
«Վոսկի մակույկը» այդ խորասուզվող,  
Յել ատելությամբ, զայրույթով համար,  
Աչքերիդ մեջ թույն ու սրտիդ մեջ վոխ —  
Դու մեր գալիքը ժխտում ես իսպաս,  
Ներկան թաղում ես, զերթ ստար մեռել,  
Ու վորոնում ես մի նոր ճանապարհ,  
Բայց մւր... գեղի վեհ, բարձրաբերձ լեռները,  
Դեպի աստղալի աշխարհը անհայտ,  
Դեպի նոր ափեր, նոր Մարսել դյութիչ,  
Ո՛, վոչ, քո ուղին ե՛ հեշտ ե, ե՛ հարթ,  
Քո վորոնածը՝ արցունքոտ թարթիչ:

Քո ճանապարհը վոչ կոլումբների,  
Վոչ նյուտոնների ուղին ե, ընկեր,  
Դու տիուր ճայնով ու կարստալի,  
Լոկ յերգում ես հին ու տաղտուկ յերգեր,  
Հեծած պապական յերջանիկ եշին՝  
Դու մեր հայկական հին առապարով՝

Բարձրացնելով դարավոր փոշի,  
Յելզելով վաղուց մեռած բարբառով՝  
Յետ ես դառնում, յետ, վորպես նահանջող  
Վիրավոր, անգեն, վշտահար ասպետ...  
Յեվ քեղ թվում ե, վոր դառն զողանջով  
Վողջ բնությունը վողբում ե քեղ հետ:

Անցյալ մի բոպեն թանգ ե քեղ համար,  
Քան թե մարդկության ամբողջ ապագան,  
Իսկապես ասած՝ չեմ դանում մի բառ,  
Վոր լավ վորոշեր քո այդ ապիկար,  
Քո այդ այլանդակ միաքը սնափառ...  
Իհարկե, անցյալն մենք ամբողջովին  
Զենք ժխտում այնպես բիրտ, վանդալաբար,  
Ինչպես մոտեցար մեր ապագային...  
Անցյալն ել ունի ուսանելի բան,  
Մենք ժառանգում ենք այդ ուսանելին  
Ու կոփում, կոռում մեր ջինջ ապագան  
Ներկայիս զնգուն, պողպատե սալին:

Ու չե վոր նույնիսկ միջնադարի լուռ,  
Խավար գիշերում կան լույսի փնջեր —  
Սերվանտես, Թանտե, Գալիլեյ հուր-հուր,  
Վոր այնպես խանդով, գեղուն, սիրաջերմ,  
Յերազել են վեհ զալիքը պայծառ,  
Տենչացել են նոր այգաբացը վաս...  
Մենք յերեք, յերեք վոչ վոքի չենք տա  
Մարդկային մաքի և վոչ մի տիտան:  
Մեր հայացքը միշտ ուղղված ե առաջ,  
Իսկ քո աչքերը միշտ յետ են նայում.  
Այդ քո յերգերով — սև, դառնահառաչ՝  
Այդ ում ես, ում ես, ում ես հմայում:

Սերգոյի խոսերը կայծակների պես  
Ողում գծեցին հարցական նշան,  
Իսկապես ասած՝ պոետը ամպեց,

Հոնքերին իջան յերկու ծանր ժայռ:  
Լենան ուրախ եր, վոր իր կողքին կա  
Սյովիսի թելոք, խիզախ զինակից:  
Բայց ինձ թվում եր, վոր դժոխ ե նա  
Նրա մահացու ամեն մի զարկից:  
Կուռ ենք: Փչում ե դուրեկան մի հով,  
Մասրենիներն են համբուրվում ձորում...  
Ու ահա Սերգոն անհուն խնամքով  
Լենային բոնած ուղին ե «ծոռում»:

— Յես քեղնից զո՞ն չեմ, սիրելի Լենա,  
Դու շատ քնքուշ ես դեպի թշնամին,  
Դու հիմնականում մերն ես անպայման,  
Բայց մերթ դառնում ես աննյութ, անմարմին:  
Շեղվում ես ուղուց մեծ առաջնորդի  
Քաղքենիության հաճիմը սուզվում,  
Յերես ես տալիս դյուրաբեկ սրտին,  
Թշնամու ցալով շատ շուտ ես հուզվում...  
Սիրելի Լենա, սիրելի Լենա,  
Հաղթել ես ուզում ճակատամարտում, —  
Թշնամու հանդեպ յեղիր անխնա  
Յեվ սրտին շատ քիչ, շատ քիչ յերես տուր:

Հուզված եր Սերգոն, անսահման հուզված,  
Անխնա եյին գարկերը նրա,  
Տեսնում եյի յես՝ ինչպես բորբոքված  
Գրավում ե նա դիրք դիրքի վրա:  
Յեվ գուցե վեճը շատ հեռու դնար,  
Դառնար խակական սրտամարտություն,  
Թե վոր Արգնին հանկարծ չերեար  
Շենքերով շողուն և ջինջ, և խնդուն:  
Յետես թողնելով ամբարտակը հաղթ,  
Վոր դեմ ե կանգնած Զանգվի ջրերին,  
Խանդավառությամբ մեր մշտադվարթ  
Խմբով մտնում ենք չքնար Արգնի:

Յերկար շրջում ենք: Կեսոր և արդեն,  
Գարնան արել մաղում ե վոսկի...  
Ո՞, այնքան վարդեր, վարդեր ու վարդեր,  
Բազմերանդ, գունեղ, թիվ չկա իսկի:  
Ճաշելուց հետո քիչ հանգստանում,  
Ճետո գտնում ենք իմ մի ընկերոջ.  
Նա ուրախությամբ մեղ տանում ե տուն,  
Ծառուզով կանաչ ու նորաբողբոչ:  
Նկարիչ ե նա ու նկարչական  
Մուզեյի վարիչ՝ մի զգայուն մարդ.  
Հայացքը նրա նման ե մանկան,  
Թեև մաղերում կան թելեր արծաթ:

Նստում ենք նրա գողտըիկ պարտեզում,  
Զանգվի ձախ ափին — խնձորենու տակ,  
Տեսարանը մեզ զյութում ե, հուզում՝  
Վորպես ծփացող լիճը կապուտակ:  
Տարիներ առաջ, ցուրտ ձմբան մի որ,  
Յերբ նոր եր դրվում հիմքն ամբարտակի,  
Յեղել եմ այսաեղ՝ վորպես մի ճամբարդ,  
Մի թափառական մենավոր վոգի...  
Ինչ փոփոխություն, ինչպիսի թոփչք,  
Կարծես դարեր են սահել ու անցել.  
Ո՞, ինչ աշխատանք, ինչ յեռանդ, ինչ ձիու,  
Այս ի՞նչ շողշողուն ճամբար յենք բացել...

Սերգոն ինձանից խնդրում ե մի պիլք:  
Տալիս եմ նրան իմ «Սեր» պոեման.  
Ճետաքրքիր ե, շատ հետաքրքիր,  
Նրա կարծիքը, ճաշակն իմանալ:  
Վելցնում ե դիրք, անունը կարդում,  
Մի քանի բոպե թերթում մտախոհ.  
Ինչվար տողերին նայում ե ժպտում,  
Ճետո ծածկում ե... ինձ թվում ե՝ դոհ:  
Ու բաժանվում ե, հեռանում մեղնից,

Առանձնանում ե, պառկում ծառի տակ,  
Կարգում ե «Սեր»-ը... նայում ե վերից  
Յերկինքը՝ կապույտ աչքի պես հստակ:

Մինչ յես հուշերիս զիրկն եյի ընկել,  
Գանգումս խշում եր մտքերի մի հողմ,  
Պոետն ու Լենան, վորպես մոտ ընկեր,  
Կամքջից անցան Զանգույից այն կողմ:  
Ու հկարելչը նայելով նրանց,  
Մի հոգոց քաշեց սրտի խորքերից,  
Տիուր աչքերով պարզ ու սրտարաց  
Մտերիմի պես այսպես զիմեց ինձ.  
— Լսիր, Արմենակ, պատմելու յեմ քեզ  
Վաղուց պատահած մի դեպքի մասին,  
Մի աղջկա մասին — ջինջ ու վոսկեղես՝  
Ուղում ես լսել — Շատ սիրով՝ ասի:

Սրարշավ գետը թռչում ե առաջ,  
Վորպես սահմարձակ փրփրաբաշ նժույզ,  
Ու ալիքները թե ու թափ առած՝  
Ուրախ պարում են մերթ մենակ, մերթ դույզ:  
Հանգիստ նստելով կանաչի գորգին,  
Վոտները կախած զովաշունչ ջրում՝  
Ու խորաստուզված ովկիանն իր մտքի՝  
Մի պահ լուսմ ե ու խոր անըջում:  
Հետո պատմում ե մի տխուր գրույց  
Յեզ պատկերավոր, և պարզ, և դունեղ,  
Ո՞ւ, նա պատմելիս այնպես սրտառուչ,  
Այնպես տիրալի մի հայացք ուներ...

## ՅԵՐԳ ՅԵՐՐՈՐԴ

ԽԱՎԱՐ ԶՆԴԱՆԻՑ ԴԵԹԻ ՀՈՒՐ ԱՐԵՎ

«Մայրս հացթուին եր, հայրս ջաղացպան  
Սուրեն Սերգեյիչ Տերթովմասենց մոտ,  
իսկ մեծ յեղբայրս — մի պարթև չոբան,  
Աչքերը — մագնիս, դեմքը թխամորթ:  
Քաջ եր յեղբայրս: Ո՞ւ, քանի, քանի,  
Գայլի բերան եր գաշույնով ձեզել,  
Կուրծքը — անծիր գաշտ, հասակը — կաղնի,  
Ու բայաթիներ դիտել նվագել:  
Շատ եյին սիրում հովիվներն բոլոր —  
Կտրիճ յեղբորս՝ ջինջ ու սիրապանձ.  
Ու չափում եյինք ձոր, անտառ ու լեռ՝  
Յեղբայրս — հովիվ, իսկ յես գառնաբած:

Ունեյինք նաև մինումար մի քույր,  
Մի հուրական մի նորաբողբոջ  
Կենսալի աղջիկ, մազերը գանգուր,  
Ինքը թռվուն, մի շողշողուն բոց:  
Զարմանում եյին, վոր մեր աղքատիկ  
Հարկի տակ այդպես աղջիկ ե ծնվել:  
Ու մեծանում եր իմ քույրը բորիկ  
Պատուած շորերով, ամառ ու ձմեռ:  
Յեզ, ինչպես կանաչ յեղմնին աճում,  
Հասուկ ե առնում նույնիսկ ձյունի տակ,  
Այնպես ել քույրս բացվում, բողբոջում,  
Հասունանում եր մաշված չթի տակ:

Գարնահամուտից մինչ ձմեռնամուտ  
 Տուն եյինք պալիս մենք շատ հաղվադեպ,  
 Բոյ եյինք քաշում — պարզ ու միամիտ,  
 Կյանքից անտեղյակ, անուսում, անդեմ:  
 Զմեռն մեղ համար Պետրոպավլովյան  
 Բերդ եր ուղղակի Դեհ, աղաս ողում,  
 Լեռների լանջին, հորիզոնում լայն  
 Ապրածմեծացած անկաշկանդ մարդուն,  
 Վորը խմում ե աղբյուրներից հորդ  
 Յեկ վայելում ե ծաղկունքը գունեղ,  
 Միթե դուր կցա գոմի աղբահոտ,  
 Մթնոլորտը մութ ու յերդիկը նեղ:

Հանգույի ափին — հին Յերևանի  
 Հնագույն վայրում — խուլ Զորագյուղում,  
 Այնտեղ, ուր հիմա մի արեւնի  
 Հիդրոկայան ե հպարտ, շողովում,  
 Այնտեղ, ուր այնպես պարթե հասակով  
 Շենքեր են այժմ վաղող ջրերին  
 Վողջունում սիրով, ուր լալկան սուզով  
 Ել չի յեղերդում մենավոր ուսին,  
 Այնտեղ, ուր չքնաղ մի պահոբամա  
 Շուքով բացվում ե հանկարծ առաջիդ,  
 Այնտեղ ունեցինք մենք մի հնամյա,  
 Ցոթը պապերից ժառանգած խրճիթ:

Հաղիվ մի քանի վոտնաչափ հեռու —  
 Գտնվում եր հենց ջրաղացը այն,  
 Ուր որ ու գիշեր, անվերջ, անդադում  
 Պտավում եյին քարերն տերաձայն:  
 Ուր հայրս մանկուց մինչ խոր ծերություն,  
 Մինչև մագերը դարձան լույս ճերմակ  
 Զյուն ալյուրի գույն, ապրեց անթենդում  
 Աչքերում թաթիծ ու զարմանք, զարմանք.  
 Ուր դույդ քարերից՝ վսկու փոշու պես,

Ալյուր եր թափառէ ծով առատությամբ,  
 Ու այդ փոշիով — գեր ու հաստավիզ  
 Աղբում եր աղաս անհուն ցնծությամբ:

Իսկ ջրաղացի գեմ հանդիման,  
 Գլուխը հենած մի սեպ քարափիի,  
 Ֆեոդալական ամբոցի նման  
 Սուրենի տունն ե միքրալել ճամբին:  
 Յեկ խուլ հյուղերի խեղճ դպրշության մեջ,  
 Բարձել եր շենքը այդ վսկեմաշուր,  
 Ինչպես հորթերի խղճուկ նախը մեջ  
 Յուլն ե բառաչում հպարտ, լիաթոք:  
 Կանգնել եր տունը, վորպես նոր Բաստիւ  
 Ու նայում եր վար գահիցն բարձրադիր  
 Իր վոտքերի տակ խրճիթներ — հորտեր,  
 Ինքը՝ ֆեոդալ, և' արքա, և' տեր:

Այժմ ել հիշելիս մանկությունը իմ,  
 Զիմանեմ ինչու՝ ամենից պայծառ  
 Ու անջնջելի, զերթ գարնային  
 Յերկենքը կամրջող ծիածանը վաս,  
 Յելում ե զեմս իմ քույրը դանդուր,  
 Ազգատի բաղչում կոկոնած մի վարդ,  
 Ու սիրոս ե կրծում ժանտ, ամենակուլ  
 Յերբեք չնչջող խոր վշտի մի վորդ:  
 Յերը հանդիպեցի ձեր այս Վարդենցին,  
 Նորից զարթնեցին հոգեմաշ հուշեր  
 Ու ավելի խոր անցյալս ատեցի,  
 Անցյալն՝ մի մութ, մի մռայլ զիշեր:

Մայրս հիվանդ եր, — ասաց վերջապես  
 Հին բարեկամս, — լուր եր ուղարկել,  
 Վոր սարը թողնեմ ու դամ նրան տես,  
 «Քեզ կարոտել եմ, ուղում եմ զրկել  
 Մի վերջին անդամ» — ասել եր մայրս:  
 Յեկ մի առավոտ, յերբ վոր լեռներում

Դեռ նոր եր բուրում մի չքնաղ մայիս,  
Գտններս հանձնեցի իմ ընկերներին  
Ու մի տանջալի անհամբերությամբ —  
Վոտքով բոնեցի քաղաքի ճամբան: —  
Յս քայլում եյի պիրկ, արագաթափ,  
Մոռացման տալով ամեն, ամեն բան:

Ու քաղաք հասա՞յ յերբ դեռ արեի  
Շիկացած գունդը նոր եր մայր մտնում  
Սարերի յետև Գուռը բաց արի  
Դողդոջուն ձեռքով ու մտա մեր տուն:  
Արագ մոտեցա տնքացող մորս,  
Այրող կարոտով զրկեցի նրան.  
Վառվում ե, կարծես, դեռ մինչև որս  
Նբա համբույրը այտերիս վրա:  
Ո, թաղել եր նա գլուխս իր զրկում  
Ու համբուրում եր անվերջ ու անհագ,  
Պատուհանի տակ գետն եր աղմկում,  
Ծիծաղում եյին ջրերը անհոգ:

Ներկայությունս բուժիչ դեղ գարձավլ  
Հիվանդ, դժողունակ մայրիկիս համար,  
Նեղիկ թիկունքն ու արծաթածամ  
Դլութը նրա — ել այնպես համառ,  
Այնպես ցավալի ու հար անհանդիստ  
Չեյին թավալում անկողնուն, բարձին,  
Յերբեմն նստում եր նա՝ լուսաժպիտ —  
Նայում եր գարնան բորբ լուսաբացին —  
Ու տեսնում եյի, վոր կամաց-կամաց,  
Թխանում եյին այտերը դեղին,  
Յեղ բազուկները անարյուն, սմբած,  
Ուժ եյին առնում, ամբանում կրկին:

Յեղ մի առավոտ, յերբ մայրս նորից  
Գնաց իր գործին՝ թույլ կիսակազմուր,

Գիրքը թեկ տակ, աչքերի մեջ բոց,  
Մեծ մարդու նման և լուրջ, և ազգու,  
Մեր տունը մտավ քո ընկերը այս,  
Մեր տիրոջ տղան, մեր աղան փոքրիկ...  
Հիշում եմ հիմա, այնպես, այնպես պարզ,  
Կարծես յերեկ եր, յերեկ, հենց յերեկ:  
Քրոջս տեսնելով — նա ուրախացավ,  
Նայեցին իրար խորամանկ ժպտով,  
Յեղ այդ ժամանակ մաքովս անցավ,  
Կոր նրանք մոտ են հոգով ու սրտով:

Ճիշտ այնպես, ինչպես բանտից ազատված  
Դատավարայալը — արեսոտ մի որ —  
Նայելով բանտին — իր հրավառված  
Պայծառ աչքերով... զգում ե սարսուռ  
Յեղ ուրախություն միաժամանակ,  
Բայց կարոտով ե հիշում բանտային  
Իր ընկերներին, վորոնք զլիահակ —  
Լսում են միայն յերգը շղթայի,  
Վորոնց հետ մինչև հատակն ըմպել,  
Ծծել ե թույնի բաժակը տանջսղ  
Ու կարոտով ե զրկել փայփայել  
Անցքից ներս ընկնող շողերը դողդոջ:

Այնպես ել այժմ — այս մեր արեսուն  
Կյանքի վեհանիստ կատարներից, յերբ  
Նայում եմ դեպի անցյալի հեռուն,  
Ուր անհրապույր, տանջալի ու վորբ  
Անցել ե կյանքս պատանեկական,  
Կարոտով եմ յես հիշում շատերին,  
Վորոնք ընկել են ու հիմի չկան...  
Ու բարձրանալով լեռան գագաթին՝  
Հոգուս աչքերով նայում եմ հեռուն —  
Անցյալիս մութին գտժանատեսիլ...  
Մի պահ խոռվում, հուզվում են անհուն  
Հոգիս խնդալից, սիրտս անբասիր:

Պատմածս միայն մի տխուր վեպի  
 Առաջաբանն եր, և ուրիշ վոչինչ.  
 Բայց ինչու, ինչու անձրենը ամպի  
 Ստվերը ծածկեց քո աչքերը ջինջ:  
 Գուցե անշնորհք վիպասանի պես,  
 Զարաշանելով համբերությունդ,  
 Իմ այս հնացած ու մանրակրկիտ  
 Լալկան զրուցով ձանձրացրի քեզ.  
 Գուցե... Բայց լսիր, մինչև վերջ լսիր,  
 Անվախ աչքերով նայիր անցյալին,  
 Եւ չես տեսնելու այդ ժանտառեսիլ  
 Ոչերը միգոտ, և՛ մոայլ, և՛ հին...

— «Զրուցյից հետո — քույրս մեն մենակ  
 Մնաց խբճիթում, իսկ մենք յերկուսով  
 Իջանք գետափը: Որը — պարզ, հստակ  
 Որը շոյող եր, և՛ բույրոտ, և՛ զովի:  
 Նստեցինք հանգիստ մի սաղալթախիտ  
 Ու ծաղկեիթիթ սալորենու տակ,  
 Չպիտեմ ինչու — անսահման մի խինդ  
 Սրտիս խորշերում տալիս եր հոբանք:  
 Ու թեև յերկչոտ, շփոթ եյի յես,  
 Բայց փոքր աղայիս այդքան մտերիմ —  
 Այդքան սիրալի կատակները հեղ  
 Թե տվին իմ խակ, իմ պարզ մտքերին:

Յեվ ամեն մի խոսք ասելուց առաջ  
 Մի քանի անգամ — մտքիս մեջ, թագուն,  
 Յես կրկնում եյի, հետո սիրտ առած  
 Հարց եյի տալիս, խոսում կատակում:  
 Բայց արտասահմած խոսքերս յերբեք —  
 Ճիշտ նույնը չեյին, ինչ վոր մտածում,  
 Յանկանում եյի... Իմ դյուրաբորբոք  
 Հուշերի լիճը հանկարծ քարկոծում,  
 Ալեկոծում եր անծանոթ մի ձեռք.

Ու մոռանալով բաղմաթիվ անգամ  
 Մտքումս կրկնած բառերն ու մտքեր —  
 Խոսքս գառնում եր շփոթ ու անկատ:

Նա ուշիուշով և համբերությամբ  
 Պատմություններս լսելուց հետո,  
 Գետնից վերցրեց — փութկոտ ու շտապ —  
 Մի հաստափոր պիրք, մի ստվար հատոր:  
 Մինչ խորհում եյի, թե քանի տարի  
 Կարսող և մեկը այդ գիբերը կարդալ  
 Թե ինչեր, ինչեր ել չեն կատարի  
 Այս աղաները մեր վսեմափայլ —  
 Նա գիրքը հանգարա թերթում եր անձայն,  
 Կարծես ինչ վոր բան վնատոելու լիներ,  
 Ու հանկարծ կանգնեց, ինչպես մի արձան՝  
 Ճակատի վրա խոհերի լեռներ:

Պաթսոով կարդաց ու նստեց կողքիս՝  
 Իր ձեռքի գիրքը դնելով գետնին,  
 Ո՛, նա ապրում եր մի փոթորկահույզ  
 Վոզելության գագաթնակետին:  
 Նա բացված գըքի մի եջին գծված  
 Նկարի վրա ուշքս բեռնեց,  
 Խոսում եր սահուն ու ալեկոծված,  
 Սակայն ինձ անհայտ, անհայտ բաներից:  
 Նրա սսածից համարյա վոչինչ,  
 Վոչինչ չմնաց հուշիս դրյակում,  
 Բայց այդ հակարի պատկերն անջինջ  
 Յերկար ապրում ե, կանչում, ակնարկում...

Մի շղթայակապ հոգնած հանքափոր  
 Իր բանին կոթնած՝ լուռ մտածում եր,  
 Հուրը վասփում եր աչքերումը խոր,  
 Թեև մտքերին իջել եր ձմեռ:  
 Տարիներ հետո, յերբ կարդում եյի

Պուշկինի ձո՞ւլ — դեկարբիստներին,  
Հենց նույն հատուրում, միենույն եջին  
Աչքերս դիպան այդ հին նկարին...  
Չեյխ հասկանում, չեյխ ըմբոնում,  
Թե ինչո՞ւ աղաս գիրքն այդ կարդալիս, —  
Ինչպես թռչունը իր բանդված բնում՝  
Յեվ զայրանում եր, և անդոր լալիս...

Արեւ վերից այլում եր արդեն,  
Յերբ զբուցելով մոտեցանք մեր տան,  
Զեռքներիս կային մայիսյան վարդեր,  
Վարդեր ծիծաղուն, և՛ ճոխ, և՛ փարթամ:  
Յես հպարտ եյխ, վոր աղայի հետ  
Այդքան մոտիկ եմ, այդքան հավասար,  
Մոռացել եյխ և սարերն, և հոտ,  
Յեվ ծաղկեղորդը, և ջրերը սառ:  
Զարմանքով եյխն բոլորը նայում  
Ինձ ու աղայիս — այդպես մտերիմ, —  
Դեհ, նվ եր տեսել այդ մեր աշխարհում՝  
Գայլը գուրգուրեր հեղիկ դառներին:

Մինչ գուռը մնում եր հաղիվ յերկու քայլ,  
Յերբ ներսից լսվեց մի սոսկալի ճիչ.  
Աղան այլայլից այդ անակնակալ  
Ողնություն ինդրող ահավոր կանչից:  
Դառն ել և մայում, յերբ արնածարավ  
Դայլի ժանիքն և նրան հոշոտում,  
Ծնող մոր կանչը խայթող ոճերով  
Լցնում ե սիլար, հոգին կրծոտում:  
Ծիան ել և ճշտմ, յերբ քաղցած ուրուն  
Թափով ընկնում և նրա յետեից,  
Իսկ շանթահարը... Սակայն իմ ուրում  
Դեռ չեյխ լսել այդպիսի մի ճիչ...

Քիչ շփոթվեցի, սակայն բնաղդմամբ  
Նետվեցի դեպի մուտքը դիմացի,

Ամբողջ մարմնով ու արագաթափ  
Զարնվեցի դոան և ուժով բացի:  
Բացի, ինչ տեսա... կավ ե, վոր լոեմ,  
Թող չառնե թաղլած հուշս այդ հարություն,  
Յեվ ինչու, ինչու վշտովս վրդովեմ  
Խաղաղությունը դալիք սերնդի...  
Հուշս այդ ահարկու, վորպես Արտավագդ,  
Վոր տառապում և Մասսի վիճերում,  
Թող մնա անմահ, բայց պինդ զղթայված,  
Վոր ել չերևա այս մեր աշխարհում:

Իսկ յեթե շատ ես խնդրում, թախանձում,  
Ուզում ես լսել այդ դեպքի մասին,  
Յես կվրդովեմ քո սիրաց ցնծուն,  
Ու կտիրես դու ինձ հետ միասին...  
Յեվ այդպես: — Բացի դուռը — պինդ փակված  
Ու քամու նման արշավեցի ներս,  
Տեսնելով քըոջս — այլանդակ պառկած —  
Ասելների պես ցցվեցին մաղերս...  
Իսկ յերբ նայեցի քիչ հեռու կանգնած  
Արնոտ աչքերով աժդահա մարդուն,  
Իմ հոգում զարթնեց մութ՝ ահաղնած  
Յեվ կատաղություն, և՛ սոսկում, և՛ թույն:

Իսկ տղամարդն այդ բարդեհասակ,  
Բոնելով կոթը իր մառվերի,  
Վրաս նետելով մի հեղնոտ հայացք,  
Դուրս յեկավ դոնից՝ նման մի սարի.  
Ո՛, այդ ջենթլմեն, լայնալանջ սպան —  
Հաղած ձյունաթույր, ճերմակ ձեռնոցներ,  
Դուրս պրծավ ինչպես մի մարդասպան՝  
Աչքերում կատաղած ամառվա ոճեր:  
Քույրս տնքում եր ու խոր մորմոքում՝  
Աչքերն առած իր ափերի մեջ,  
Մի վողջ աշխարհ եր այրվում իմ հոգում, —  
Յես վհնց մարեյի այդ հրդեհը մեծ...

Այդ ապշեցուցիչ դեղքն անողատում,  
 Մի վայրկյան կարծես, ինձ շանթահարեց,  
 Կանգնել եյի յես չոր անապատում  
 Այրող ավաղի հուզված ծովի մեջ:  
 Միբաս նման եր անծիր սրբիալից  
 Թափով դուրս թռած մի մոլորակի,  
 Իսկ գանգս, գանգս՝ այդ խիստ ցնցումից  
 Նման իր գժից յելած գնացքի:  
 Մեծ դժվարությամբ ու խռովաճույղ  
 Հավաքեցի խենթ մտքերս ցրիվ,  
 Ո, այդ ըսպէյին իմ սիրտը անհույս —  
 Կոցահարում եր մի սոված արծիվ:

Քույրս չեր խռոսում, բայց հեկեկում եր  
 Այնպես տերապին ու դառնակալիծ...  
 Այդ հեկեկանքն ուժին պոռթիում եր  
 Ու դուրս եր թափում ավերակ կրծքից,  
 Հարցերիս բնավ չեր պատասխանում,  
 Տեսնել չեր ուզում փոքրիկ աղային,  
 Մտքերս հուզելով — իրար եր խառնում,  
 Բար լությունը այդ դժոխային:  
 Ու սիրտս, սիրտս զուցե պոռթկար,  
 Թի մայրս հանկարծ տունը չմտներ,  
 Ներս մտավ մայրս — ուժահատ, տկար,  
 Զեռքին — յերկու հաց, աչքերը մթնել...

Որ ուի վրա քույրս նիհարում,  
 Դառնում եր անխռոս, անկրակ ու ցուրտ,  
 Ել չեր կարկաչում յեռանդի առուն,  
 Ել չեր ծիծաղում մի կենսաթինդ սիրտ:  
 Այդ դեպքից հետո — քույրս հուրհրան,  
 Հաճախ եր հիվանդ ընկնում անկողին,  
 Դժունում եյին այտերը նրա,  
 Ինչպես ուշ աշնան տերեւ դեղին:  
 Ու նստում եր նա գետի յեղերքին,

Մենմենակ, վորովես մի ոտար անցորդ  
 Յերկար նայում եր պարող ջրերին  
 Յեկ մտացրիվ, և մելամաղձոտ:

Իսկ գիշերները անվերջ դառանցում,  
 Քնից վեր թռչում — սոսկալի ձիչով,  
 Ո՛, այդ ձիչը իմ գահովը ցնցում,  
 Հոգիս լցնում եր հալած արձիմով:  
 Մայրս դարձել եր մտազրադ, անքուն,  
 Ու խռոյս եր տալիս մարդկանց հայացքից,  
 Հաճախ եր մենակ, հիվանդից թագուն  
 Արտասկում տիսուր ու դառնակսկիիծ:  
 Իսկ հայրս շատ ուշ, շատ ուշ իմացավ  
 Մեր դժբախտության — մեր վշտի մասին,  
 Չուզեցինք ծանր այդ մեր վիշտըսար  
 Բառնալ նրա թույլ ու ծերուկ ուսին:

Ո՛, գեղջուկ քույրս յերկար տառապեց,  
 Փոսն ընկան նրա աչքերը լճակ,  
 Փոշու մեջ կորան դանգուրները բոց,  
 Ու սրտում մարեց մի արեածագ:  
 Նա կամաց կամաց դարձավ անզգա,  
 Հիշողությունը իսպառ թռլացավ,  
 Աչքերում մեռավ և՛ սեր, և՛ կրակ,  
 Կրծքում բուն դրեց ժանտ բարակացավ  
 Յեկ մի ուշ գիշեր — ջարդեց ապակին —  
 Նեղ պատուհանից ձիչով զուրս պլրծավ,  
 Այն որից այս կողմ ել քույրս անդին  
 Մեր հին խրճիթը չվերադարձավ...

Յեղուրս պատմեցի մանրամասնությամբ  
 Վողբերգությունը մեր ընտանիքի,  
 Նրա ձակատին կուտակվեց մի ամպ  
 Շանթածին ամպը դալիք փոթորկի...  
 Անդուսպ զայրույթով ու խիստ վճռական  
 Ասաց, լնվ, եղուս, թող եղուս լինի...

Իր տակը փուած քուլաբը հագալի,  
Մի քանի վայրկյան լուռ նայեց լուսնին  
Հետո պատվիրեց՝ հոտը հավաքել —  
Ու իր մոտ բերել մեծ այծը — ներին,  
Ողում շարժելով ցուալը գլխակեռ՝  
Բարձրաձայն կանչեց զամփո շներին:

Ո՞ւ, նա այդ որը շատ եր անսովոր.  
Զեր կարող զսպել իր սիրաը լսփող  
Վիշտը հորձանուա, վիշտը ահավոր,  
Վիշտը հոգեցունց՝ անդուսպ հրաբուխ:  
Յես յերբեք նրան դեռ չեյի տեսել  
Այդպես սոսկալի, այդպես գաղաղած...  
Նա, վոր բարի յեր ու խաղաղասեր,  
Այդ որ դարձել եր ուղղակի անսահճ:  
Կատաղի կրքով ու խռովաճույզ  
Իր ատամները սեղմում եր իրար,  
Ու մոնչում եր խենթ, խելակորույս,  
Վորպես վիրավոր վագրն արնապարար:

Ո՞ւ, նա մտախոհ՝ լուսնի տակ կանգնած —  
Զորում դցել եր մի յերկար ստվեր,  
Ինչ զոր ահավոր միտք եր թագնված  
Նրա փոթորկված հույղերի յետեւ:  
Այժմ եմ հասկանում, զոր նրա սրառում  
Մաքառում եյին յերկու զգացմունք,  
Ու իրենց ձամբից ամեն ինչ սրբում,  
Գրոհում եյին բարձունքից բարձունք. —  
Մեկն իր հոգու սերն եր անխորտակ,  
Մյուսը — քրոջ վրեժը ցակոտ,  
Ու կանգնել եր նա ազոտ լուսնի տակ,  
Յեվ մտացրիի, և՛ մելամաղձոտ:

Այժմ եմ հասկանում, վոր նա ուզում եր  
Սղայի հոտը անդունդը լցնել,  
Ու մեր անաբգված Մարուսի ու մոր

Անսահման, անհուն վրեժը լուծել:  
Ուզում եր... Սակայն այդպիսի մի քայլ  
Հովիքն իր սրում յԵրբ ե կատարել,—  
Յեղբայրս գուցե նամուսի համար  
Բյուրավոր աղա մեկից կոտորեր,  
Բայց սիրած հոսին չարամիտ ձեռք տալ,  
Անմայլ թողնելով գառները սարում,—  
Միթե դրանից ավելի վատթար  
Բայլ կատարել և հովիքն իր սրում...

Ու հոտը նորից սարը բարձրացավ,  
Փողեց արոտի կոհակների մեջ,  
Յեվ ինձ թվաց, թե իսպառ չքացավ,  
Անհետ փարատվեց յեղբորս վիշտը մեծ...  
Բայց այդ գիշերը նա անհայտացավ,  
Ու ել չերևաց որեր, տարիներ...  
Յեվ յերբ մել յերկրում մըրիկ բարձրացավ,  
Ու գողդողացին աղաներ, տերեր,  
Յեվ յերբ կարմրածուփ գրոշը պարզած՝  
Մեր յերկիրն մտավ Բանակը Կարմիր,—  
Յեղայրս յեկավ — նոր վերածնված  
Վորպես մի կարմիր, հերոս կոմանդիր...

Տեսնելով հեռվից ուրախ գալիս են  
Պոետն ու Լենան — մոտ ու թևանցուկ,  
Ինձ թվում եր, թե հանդարտ լալիս են  
Նրա աչքերը — լուս ու անարցունք:  
Նա իր պատմությունն ընդհատեց հանկարծ,  
Տեղից վեր կացավ — կանգնեց մտախոհ,  
Նրա աչքերը և՛ բոցավառված,  
Յեկ տիսուր եյին, և՛ ծովի պես իսոր:  
Լսվում եր արգեն Լենայի աննինջ  
Զանգակահնչյուն ծիծաղը զվարթ,  
Յերբ յերկու խոսքով — տիսուր ու հակիրծ  
Վերը ջերկու խոսքով — տիսուր ու հակիրծ

— Քույրս տառապեց յերկար տարիներ,  
Աչքերի հուը մոխրացավ, հանգավ,  
Ել անգոր յեղալ էր բեռը տանել, —  
Դեմքը ծերության կնճիռներ հագավ:  
Ու մի առավոտ, աշնան առավոտ —  
Նա անշնչացավ լենդոոր հյուծախտից,  
Իսկ այդ յերեկո — յեղայրս փառավոր  
Յերեան մտավ հին Քանաքեռից:  
Ծածանվում եյին զրոշներ կարմիր,  
Խորհրդային եր յերկիրը դարձել,  
Ու նոյնմբերյան փոթորիկ քամին  
Տղուկ տերերին հիմքից եր հնձել:

Աշխարհը փոխվեց  
Խնդրության ձայնից յերկիրը թնդաց  
Ու բոլորի հետ սիրառ ել վոզողեց  
Մի հրակարմիր գարնան լռւաբաց:

Հուբանել արել թեքվել և վազուց  
Ու յերեկոն և փովում ծորակում,  
Հանրային այդին, տներն ու փողոց  
Լողում են լույսի ծփուն հորձանքում:  
Վորպես խազողի հմայուն վողկույզ,  
Ողբում կախվել են լամպերը շուշան.  
Վանց զսպեմ ցնծուն թեները հոգույս,  
Վանց չտամ թինդի վառ աղբանշան:  
Լենայի աչքերն բորբ ինդությունով  
Ժիր բողիառում են ու հրավառավում,

Իսկ նկարիչը քաղցրավեր տունով  
Թեյ խմելու յե մեզ հրավիրում...

... Ծառուղիներով յերփներանդ ու զով,  
Նկարչի տունն ենք խմբով բարձրանում,  
Ահա մի աղջիկ, վոր գյութիչ նազով  
Իր սիրած տղի հոգին ե հանում.  
Ու ահա խմբեր — կանաչին նստած  
Խմում են կյանքի պինևետ թասից,  
Պարում են, յերգում, ցնձում են սրտանց  
Անհող ծծելով վայելը դարի:  
Նրանք յեկել են հանքահորերից,  
Մեր հորակառուց գործարաններից,  
Նրանք յեկել են բերրի դաշտերից  
Անձիր արտերից սոցիալիստական:

Ուշ յեղեկոյ յե, յերբ հասնում ենք տուն,  
Թեյում ենք գրառում — գորդերի վրա,  
Ու թեյից հետո — ձիշտ ժամը ութին  
Մենք ցած ենք իջնում դեպի ոպերա:  
Մեծ աղմուկ հանած քրդական մի խումբ —  
Յեկել և այստեղ, խաղում ե «Ձառնուա»:  
Ասում են՝ խաղը և՛ կիրթ ե, և՛ նուրբ,  
Բեմադրությունն՝ անսահման հարուստ:  
Ասում են... Սակայն գնում ենք տեսնենք  
Իսկական խաղը և թատրոնը մեծ,  
Ու ահա խմբով, զորպես նորեկներ  
Մենք սրահումն ենք՝ մարդկանց ծովի մեջ:

Ծանոթանում ենք մի յերիտասարդ,  
Հաճելի դեմքով պատմաբանի հետ.  
Նրա խոսքերը չոր են ու անզարդ,  
Սակայն հաստատ են, ինչպես գրանիտ:  
Նա պատմաբան է Բժնի քաղաքի  
Հանքաբանական նոր ինստիտուտում,

Այժմ ուզում ե՞լ յերբ այդը ծագի,  
 Մեղ հետ միասին վերադառնալ տուն:  
 Մինչ մենք խոսում ենք ուզերթի մասին,  
 Կազմում ենք պլանն հետազոտության,  
 Հնչում ե զանգը, բոլորս միասին  
 Շտապում ենք ներս և նստում անձայն:  
  
 Լույսերը հանկարծ մարում են, հանդչում  
 Ու փարագույրը բացվում է հանդարտ,  
 Եշուկ չի լավում հսկա դահլիճում,  
 Լուս և դահլիճը այս մշտագլարթ:  
 Պատկերն առաջին գոնե ինձ վրա  
 Թողնում ե ուժգին տպավորություն,  
 Տեսել ելի յաս «Ձառնուս» ոպերան  
 Պատանեկությանս ժամանակներում:  
 Բայց նա այս անգամ ուրիշ եր կարծեք,  
 Տըվում ե նրան նոր մեկնարանում,  
 Նրան դիպել ե մի հանձարի ձեռք  
 Հանձար, վոր ահա բեմ և բարձրանում:  
  
 Ժամերն անչափ արագ են թոշում,  
 Իսկ պատկերները — ավելի արագ,  
 Ո՞ւ, ինչ հմայուն, ինչ պարզ են հնչում —  
 Այդ Մարգարիտի յերգերը հստակ:  
 Կիսվում ե արդեն գիշերը գարնան  
 Յերբ ավարտվում ե պատկերը վերջին.  
 Կողքիս կանգնել ե մոտախոհ լենան՝  
 Սչքերը հառած հուզված դահլիճին:  
 Ծափի հորձանքը չի լուսմ յերկար,  
 Ու դղրդում ե շենքը վիթխարի,  
 Յերբ գուրս ենք գալիս մենք զանդադաքայլ,  
 Հոգում վառ պահած կրակը դարի:

Նկարչին սիրով ուզարկում ենք տուն,  
 Հյուրանոց գնում պատմաբանի հետ,  
 Մեր ձանապարհին անվերջ ցնծություն,

Զորում յերգում ե քաղցրալուր մի գետ...  
 Խորունի գիշեր ե: Պակած անկողնում,  
 Մաքերիս հետ եմ զրուցում անձայն,  
 Պատուհանիս տակ սոխակն և յերգում  
 Յերգում են նաև ջրերը արծաթ:  
 Ու այդ համերգի հնչյունների տակ  
 Մայր Մորիկեսն ե աչքերս փակում,  
 Իմ հոգու վրա իջնում ե հստակ  
 Մաքրաջինջ, հանդիսա, յերջանկալի քուն...

## ՅԵՐԳ ԶՈՐՌՈՐԴ

Լուսերի շուտի ՄԱՐԴԱՐԻՏԸ

Արեւքը գեռ չեր շառապունել,  
Յերբ մենք Արդնուց դուրս յեկանք խմբով.  
Պոետ Վարդենցը կարծես անքուն եր,  
Կարծես չեր քայլում մեր բռնած ճամբով:  
Յեզ թվում եր ինձ, վոր մի այրող միտք  
Տանջում ե նրան, նա ապրում ե մի  
Ինչ վոր արտակարդ, հոգեկան վիճակ,  
Վորից զգում ե և ցավ, և հրձվանք:  
Հեռվում վառվում ե պարդ հորիզոնին  
Վոսկենն ըսցի մի չքնաղ խարույկ.  
Պոետի անհուն ու խորազնին  
Աչքերում, սակայն, գիշեր ու մըրիկ...

Ի՞նչ ե մտածում, — յես այդ չգիտեմ,  
Բայց ընկերությունն մեր յերկարապե  
Ինձ ասում ե թե, յերբ նա ամպել ե,  
Նրա ճակատի ամպերի յետե  
Կա մտքի հեղեղ, կա հույզի սամում,  
Կա զժգոհության սանձահար արտօւնջ,  
Ու այդ ժամին ե նա արտասանում  
Իր զեղումների տողերը «զյութիչ»:  
Ու չեմ սփալվել: Ահա ամպերի  
Շուրթը լիզելով՝ շողաց մի կայծակ,  
Ու մեր պտերի անքուն աչքերում  
Վառվեց աշունքվա մի արևածագ:

Նա սպասում եր թեթև առիթի,  
Մի չնչին կայծի, վոր հրդեհ վառեր,  
Ու դուրս ժայթքեր վերավոր սրտից  
Հրարիսային շիկացած քարեր:  
Բայց չպտնելով գեթ թույլ պատրվակ՝  
Նախահարձակման դիմեց նա նորից  
Ու թափեց վրաս մարտական կրակ,  
Հարցի սումբերով քարկոծելով ինձ. —  
— Յերեկ յես տեսա, վոր զմայլանքով  
Դիտում եյիր դու «Թառուստ» ոպերան,  
Ո՞վ եր մագնիսել ապրումները քո —  
Մեֆիստոֆելը, թե Մարդարիտան:

Զահել Վերթերից մինչեւ ալեհեր  
Ֆառուստն իմաստուն՝ ով ե նվագում  
Դյութեյի պայծառ քնարի վրա,  
Ո՞վ ե ծիծաղով մեղմիկ հեկեկում  
«Մեռած հոգիներ» անմահ պոեմում  
Կամ «Ռեվիլորում» — ասա, ո, ասա,  
Ինչու յես լոել: Գուցե հիշեցիր  
Մեր թումանյանի փոքրիկ Գիքուին՝  
Ո՞վ ե ստեղծել այդպիսի անմար,  
Արևոտ պատկեր վիշտը, սիրելիս,  
Կիշտը կենսատու, վիշտը՝ քնքուշ մայլ,  
Վոր հանճարներին սնունդ ե տալիս:

Կարդացել ես դու Դոստումսկուն:  
Վիկտոր Հյուգոյին գիտես մոտիկից,  
Նրանց քնարին ով ե նվագում  
Այդպիս հոգեմաշ ու դառնակսկիծ:  
Ո՞վ ե ստեղծել Ռմար-Խայամի  
Կամ մեր Տերյանի այնքան հիասքանչ,  
Այնքան նրակերտ ու յեթերային  
Խոսքերն նվագուն ու քաղցրակարկաչ:  
Դու գեռ լուս ես, պատասխան չունես

Դու մի յերջանիկ, անհոգ թոշունց ես,  
Չպիտես, վոր այդ խոսկան լարերին  
Վիշտն ե նվազում այդքան անլոփն:

Կարդացել ես զու լեկ Տոլստոյի  
Չքնաղ վիալակը՝ «Կրեյցերյան սոնատ»  
Տեսել ես պարթե մավր Ռթելոյին —  
Մերթ — մռայլ մի ամպ, մերթ — արև զվարթ,  
Ու քանի անդամ բեմում տեսել ես,  
Յեկ աբասանել — Դեղէմոնայի  
Մեռնելու ժամին... Սակայն քեզ ու քեզ  
Յերբ ես հարցրել, թե այդ յերկերին —  
Ովկիանոսից — խոր, արեից պայծառ՝  
Այդ ով ե տվել այդքան թափ, յեռանդ...  
Կարծեմ հիշեցիր, կարծեմ հասկացար,  
Թե ինչ ե սիրո անընկճելի խանդ:

Տեսել ես արդյոք մեծն Անջելոյի  
«Մովսեսը» հսկա, այդ ժայռից կերտված  
Ծերունի հովվին, կամ Ռաֆայելի  
Ժամուն «Մազոննան» — աստվածահայաց.  
Տեսել ես, սակայն հարցրել ես մի որ,  
Թե ի՞նչ ուժով են լույս աշխարհ յեկել  
Այդ գերմարդկային, այդ արտասովոր  
Մուրճ ու վրձինով ստեղծված յերգերն:  
Այդ ֆանտազիան ե — մեծ ճարտարապետ  
Դարերը իրար կապող, կամքջող,  
Ու մենք — սերունդներս, վորոկս մի ճամբորդ՝  
Գալիս անցնում ենք այդ նույն կամքջով:

Բայց դուք, դուք իսպառ վերացրել եք  
Աղբյուրը վշտի, խանդի, անուբջի,  
Վոսկե մշուշը անհետ ցրել եք  
Յերազող մարդու աչքի առաջից:  
Կարել եք նաև գետի վշոցը,  
Բանտել եք նըրան քետոն ե պատով...

Նա յե ուրորել իմ որովոցը  
Մեր զյուցազնական յերդ ու հեքիաթովի:  
— Ո, իմ դայակս, դետն իմ Հրազդան,  
Դու բանա մանելիս միթե չտեսար,  
Վոր անքուն թողիր քո աղիզ վորդուն,  
Յեկ վորբանում են ձոր, անտառ ու սար...

Ճարձակում գործող այս պոետ տղան,  
Վորպես անբանակ, բայց քաջ զորավար,  
Վոր խոսքի կարկուտ ու հուր եր տեղում,  
Հայտարարեց մի կարճ զինադադար:  
Գուցե նա զգաց, գուցե մտածեց  
Իր վողերգական վիճակի մասին,  
Գուցե համոզվեց, վոր զուր են, ունայն  
Նրա կոփը ու խոսքերը սին,  
Բայց կարճ տեսեցին զինադադարի  
Վայրկյաններն լարված, մութ ու ոմբակիր,  
Ահա պոետը այնքան տիրալի՝  
Իր անխինդ բախտը լալիս ե կրկին:

— Ո՞, սիրս խրվում են թունավոր նեսեր,  
Յերբ կանչում ե ձեր այս յերկաթուղին,  
Անխնա պոկել ու դեն եք նետել  
Վողկույզները մեր հյութեղ խաղողի,  
Ու նրա համար ճամբա յեք բացել,  
Վոր մեր ձորերից սրբնթաց անցնի,  
Քանի՛ ծաղիկ ե այստեղ վորբացել  
Ու քանի՛, քանի վայրի վարդենի...  
Բայց դուք անցել եք այնպես հաղթական,  
Ինչպես Աթիլան կամ մի Լենկթեմուր,  
Ու հիմա վորպես մեծ աշխարհակալ՝  
Զեր նժույզներն են թոշում ամենուր:

Պատմագիրները հիացմաւնքով են  
Հիշում հունական դարն Պերիկլեսի, —  
Մարմարից եք նա իր դարը կերտել,

Իսկ դուք՝ շողերից ելեքտրոս լույսի:  
 Զեր կերտած շենքը փայլուն է՝ վորպես  
 Խալիֆան երի վոսկեզոծ պալատ,  
 Սակայն ինչեր կան այդ պատերից ներս,  
 Գուցե Պուշկինի նման մի տաղմնդ...  
 Ո, վոչ, իմ ընկեր, փորել եք անդունդ  
 Դուք մեծ տաղանդի յերկու վոտքի տակ, —  
 Մեկով կախված ե անդնդում անհուն,  
 Մյուսով՝ կանգնել ե վիճին անհատակ:

Դուք ստեղծել եք հար ու նման ձեզ  
 Մի խնդուն աշխարհ: Յեվ գուցե ապշեր  
 Բուննոփոնը կամ մի Սոփոկլես,  
 Թե մեր յերկիրը ընկներ մի գիշեր:  
 Ժան Վալժանի պես հերոսներ ծնող  
 Իրովությունը թաղել եք վաղմաց,  
 Սեր, յերազ, թախիծ ու հուշեր գունեղ  
 Ավլում եք, մաքրում մաբդկային հոգուց:  
 Ել ի՞նչ եք թողնում, վոչինչ և վոչինչ,  
 Մեր ամենասուրբ զգացմունքներից,  
 Սիրով գարձել ե միապազար, ջինջ  
 Մի դարնան յերկինք — առանց ամպերի:

Բայց ինչի՞ յե պետք, ո, ինչի՞ յե պետք  
 Դարունը — առանց բքաշունչ ձմրան,  
 Չլսել յերեք աշնան քամու յերգ,  
 Չտեսնել յաւունոտ կատարը լեռան...  
 Չտեսնել հասուն արտերը ամրան,  
 Միշտ գարուն, գարուն, անընդհատ գարուն:  
 Չլսել ցորնի վոսկի հասկերում  
 Արտօւնուերի յերգն — այնպես հուրիսուրան,  
 Չտեսնել աշնան վոսկի տերեներ  
 Մակույների պես քամուն խաղալիք...  
 Չանձրալի յե, չե, սիրելի ընկեր,  
 Այս ի՞նչ գալիք եր, գալիք, վայ, գալիք...:

Պոետի վերջին խոսքերն անհույս  
 Շատ զարմացրին մեր պատմաբանին,  
 Գեղեցիկ խոսքեր, խոսքեր նրբանյուս՝  
 Բայց դրված խարխուլ տապանաքարին.  
 Ո՛, այդ վոսկեզոծ խոսքերի առուն  
 Յերգում եր տխուր ու դառնակսկիծ,  
 Ու այդ յերգի հետ և՛ թոր, և՛ անհուն  
 վիշտն եր զուրս թափվում ավերակ կրծքից:  
 Շատ և զարմանում պատմաբանը մեր,  
 Վոր մեր որերում կան նման մարդիկ,  
 Ու սկսում ե թիստ հանդիմանել  
 Անհույս պոետին — բառերով անտիկ:

— Դու, յերիտասարդ, մի որիգինալ  
 Ու տարորինակ նոր յերեսույթ ես,  
 Բայց «պետք չե ապշեր, պետք և հասկանալ»,  
 Այսպես և ասել մի պայծառատես...  
 Այժմ աշխատենք այդ քո հույզերի,  
 Այդ քո մտքերի հասարակական  
 Արմատը զանել: Քո անհույս սերի,  
 Տերևաթափի յերգերը լալկան  
 Անշուշտ լոկ քոնը, քոնը չեն միայն,  
 Բոլոր զարերում մեծ ցըջաղարձի  
 Փառավոր ժամին — մի Շատոբրիան  
 Յերգել և գովքը վհատ թախիծի:

Այդպես ես և դու: Կոչ ես անում մեղ —  
 Շարժումը սանձել ջնջել փոփոխման  
 Որենքն անխախտ: Կանգ առ, — ասում ես, —  
 Կանգ առ, ով յերկիր, կանգ առ ինձ նման:  
 Ու մանկան նման — մատղ դրել ես  
 Կարմիր կրակում — զգում ես կսկիծ,  
 Յեվ հայհոյում ես, և՛ բարձր լալիս,  
 Առանց քաշելու մատղ կրակից:  
 Նիհիլիստի պես ժխտում ես՝ ի՞նչ կա,

Ինչ ստեղծել են սերունդներ անվիվ  
Ու բաց ես անում մի նոր «Ամերիկա»  
Թիրառում ես զերթ մի թոշուն անթե:  
  
Ինչքան ել խոսես դու բարձունքների  
Հմայքի մասին, ինչքան ել զոռաս  
Դու աղատության զնդուն զանգերի  
Ղողանջի մասին, — չկա արձագանք:  
Պրուղոնի պես, վոր Փրանսիական  
Հեղափոխության հարթած ճամբեքով  
Ուզում եր դառնալ դեպ համքարական  
Կյանքը ծանրաշարժ, — դու յել նույն հետքով  
Դառնալ ես ուզում դեպ թշվառության,  
Խանդի ու վշտի անցյալը «վոսկեդար»,  
Բայց տես, ինչ հպարտ, ինչ արադաթափ  
Արշավում ե մեր բանակն անդադար...

Ճիշտ նույն բոպեյին ձորը դպրոցաց  
Արձագանքներից, գնացքն եր անցնում  
Արծվային թափով, նրա սրընթաց  
Վազբում կար նորի, հաղթության ցնծում:  
Տեսնում եյի յես — այդ գնացքի պես,  
Ինչպես արել իր անծիր ճամբին,  
Սլանում ե իմ յերկիրը դեպի  
Գալիքի պայծառ, մշտավառ արփին:  
Տեսնում եյի յես... Բայց ահա նրանք, —  
Մեզ մոտենում ե մի խումբ դյուղացի  
Ու բորբոքելով զրույց ու կատակ  
Իշնում ենք դեպի քաղաքը — Բժնի:  
  
Նրանցից մեկը դեռ շատ ե ջանել,  
Նրա աչքերը սև են, ինչպես սաթ,  
Մեկը — քչախոս մի ծեր ալեհեր,  
Մյուսը՝ հաղթանգամ մի յերխասարդ:  
Նրանք սիրում են ուրիշին լսել,  
Հարցեր են տալիս բազմակողմանի,

Դիտության ծարակ ու վկրելքի սեր,  
Հրդեհի պես և բռնել ամենին:  
Արդեն ահազդին ճամբա յենք անցած,  
Որը դառնում է համարյա կես որ,  
Յերբ պատմաբանը հարցնում է նրանց,  
Թե ի՞նչ մարդիկ են, վորտեղից և ժւր:  
  
— Վելագառնում ենք մեղվաբուծների  
Համապումարից, — ասաց պատանին, —  
Վորտեղ զեկուցեց համաշխարհային  
Մեղվաբույծ Սաթոն, Սաթո Մարտունին:  
— Ո՛, այդ աղջիկը խոսքի մաքնիս եր,  
Կախարդել եր մեղ անուշ զբույցով,  
Նրա պատմածը և՛ խոր, և՛ պարզ եր,  
Ինչպես մաքրաշինջ, կապուտակ մի ծով:  
— Իսկապես խելոք, խելոք եր խոսում  
Այդ լավ աղջիկը, — ասաց ծերունին, —  
Կարծես լեռներից վտակ եր հոսում,  
Կարծես փչում եր բուրավետ քամի:

Իսկ բարձրահասսակ այդ հսկա տղան,  
Վորը մինչև այդ լոկ մի մի անգամ  
Կայծ եր արձակում, հանկարծ հրեղեն,  
Ըմբոստ մաքերով ասպարեզ յեկավ: —  
Մխալ ե, սխալ հույն փիլիսոփան,  
Վոր ասել ե, թե միենույն գետում  
Զես կարող մտնել դու յերկու անգամ.  
Յեթե նա ապրեր այս մեր որերում,  
Տեսներ բարձրացող քաղաքներ լանդուն,  
Աշխարհափոխման թափն հսկայական,  
Նա սկետք է ասեր, միենույն գետում —  
Զես կարող մտնել նույնիսկ մի անգամ:

Բայց նրա խոսքը կտրելով կիսից՝  
Պոետը ցաւկոտ, ինչպես դյուրավառ  
Վառողը — կայծից, նորից հրկիզեց՝

Ինչ վոր թողել եր շեն ու անավեր:  
Նրա խոսքերում կար անկեղծության  
Տիբրալի մի շեշտ, ու վոչ մի շինծու  
Շարժ ու ձեերի գերասանություն  
Չկար անսովոր նրա զրույցում:  
Նա դուրս եր թափում մաղձն իր հոգու,  
Ամեն ինչ փշրող այն հարբածի պես,  
Վոր ըմպած դինին դուրս և ժայթքում,  
Ու դառնում հանգիստ, և՛ խաղաղ, և՛ հեղ:

— Ատում եմ, — ասաց, — ամբողջ եյությամբ  
Այդ քաղաքները — մեծ ու անվանի,  
Ուր մարդը — դրասա, միտքը — փայտի թամբ,  
Բարձիր ամեն ինչ՝ և նա կտանի:  
Ուր թոքերն սեղմած բարձր սեղանին  
Թվերով լեցուն դլուխը հենած  
Հաստ մատյաններին — կարծես սոզում են  
Հաշվետարները աներազ, սմբած:  
Ուր բազմանում ե կուրծքը խորն ընկած  
Հասակով թզուկ ու կորաքամակ,  
Անփայլ աչքերում կրակը հանգած  
Ու դունատ մարդկանց մի սովար բանակ:

Ուր լույսն արևի գեղատոմսով ե,  
Ուր սարսափով ես համրուրում նույնիսկ  
Շուրթերը կարմիր, ուր սիրո սով ե,  
Ուր չկա, չկա ասպետական խոռք.  
Յեկ ուր այս կամ այն սոսկալի ախտից  
Չկարակվելու, չայրվելու համար  
Չեռնոցով են լոկ բռնում այնտեղից,  
Ուր ձեռք ես տվել դու պատահաբար:  
Ուր արշալույսը տեսնում են սակավ,  
Միթիթարվում են ցուրտ վերջալույսով,  
Ուր վոր լոել ե յերդն հերսոսական  
Յեկ ուր տիրում ե ծաղիկների սով:

Ուր կյանքիդ կեսը և այն ել, այն ել  
Քո ջահելության յեսուն որերում  
Պետք ե տառապես, թե չե՞մի անել  
Խորիթորամ կընկնես — գայլի բներում:  
Պիտ աշակերտես գեթ տասը տարի,  
Մի քանի տարի պիտի ուսանես:  
Ու որեր են պետք ճիշտ քառորդ գարի,  
Վոր դու մասնագետ անուն վաստակես:  
Ու ապես վորպես մի քաղաքացի,  
Միջակից ել ցած, մի անհշան մարդ,  
Յերբեմն նույնիսկ ստվերը քաղցի  
Գայլի աչքերով կհայլի վրադ:

Յեկ միթե հաղար, բյուր հաղար անգամ  
Մեղնից յերջանիկ ու բախտավոր չե  
Ալպյան հովիվը... Մենք հավետ անքուն  
Վորոճում ենք մեր մտքերը չնչին  
Սոսրյա հացի, առորյա հոգսի  
Ու վշտի մասին, իսկ հովիվը այդ,  
Վոր վայելում ե ընության թասից  
Լոկ փրփրացող ու ձյունաթույր կաթ,  
Ապեկով մի գար չի տեսնում նույնիսկ  
Թեթև վլխացավ, միթե նրանից  
Բախտավորը կա, ասեք, ոհ, ասեք,  
Յեկ ինձ աղատեք այս տանջող ցավից...

Այս խնդրում, այս, յես սրտով հոգով  
Ուսւսոյական եմ — գյուղացին՝ նստած  
Իր արակառին՝ գեղջկական յերգով  
Վարի արտերը իր լայնատարած,  
Ու մանուկները բնության ծոցում  
Ազատ մեծանան, ազատ ուսանեն,  
Հովիվը սարում կարգա զեկուցում  
Յերգերի մասին մի հին գուսանի,  
Գյուղում չերևա վոչ մի հարկանան,

Խըճիթում շողա ելեքարական լամպ,  
Ու կարիքի դեմ, ինչպես մի վահան՝  
Դաշտում բարձրանան հասկերը հպարտ:

Քնկեր պատմաբան, դու ինձ հետադեմ  
Մարդ ես համարում ու անգիր արած  
Մի քանի քրաղ նետում ես դես դեն.  
Բայց ի՞նչ խեղճ ես դու, ոհ, մարդ արարած,  
Դու մեր որերի ծպայալ Մալչալին,  
Չոր յերկաթ ես դու, քեզնից վոչ մի լոսփ  
Շինել չի լինի, յես զուր եմ սալին  
Խփում իմ մուրգը, դու մի ինքնախար,  
Հաշիշով հարբած ֆանատիկոս ես,  
Վոր իր կրոնի թույնը ծծում ե,  
Վորպես քաղցր հյութ, ու հոգին տալիս  
Մահվան ժամին ել անհոդ ցնծում ե:

Հանդերձյալ կյանքի խարուսիկ հույսով,  
Ճառդ նման եր վաղորոք դրված  
Մի բանաձևի. — բարձր պաթոսով  
Խոսում ե մեկը բերդեր դրաված,  
Ազատության ջահ բանակի մասին,  
Խոսում ե վորպես մի նոր կիկերոն,  
Մի նոր վորպեկիր անմահ Պառնասի,  
Ու ահա մեկը ձայնով կերկերուն  
Այդ հուր հրեղեն խոսքերի առթիվ  
Կարգում ե մի ցուրտ, անշունչ բանաձև,  
Թեւ նա անթիվ, անհամար, անթիվ  
Ժողովսերումն ե նույնը կարգացեւ:

— Կարդենց, բարեկամ, այդ ի՞նչ քաղաքի,  
Այդ ի՞նչ վորջերի մասին ես խոսում,  
Ի՞նչ պատկերներ են հուզում քո հոգին,  
Արթուն ես արդյոք, թի՞ս սին յերազում:  
Դու վերանում ես իրական կյանքից,  
Կախվում ես անոդ տարածության մեջ,

Յեկ քեզ թվում ե, թե մեծ Բայլղակի  
Պատկերած քաղաքն ապրում ե անվերջ  
Դու կարդացել ես «Ժերմինալը» կամ  
Դոստուսկու վեպերն հանճարեկ  
Յեկ քեզ թվում ե, թե այսոր ել կան  
Նույն պատկերները՝ ավելի ահեղ:

✓ Մեծ հիացմունքով լսում եյի յես  
Լենայի խոսքը — խորիմաստ, հակիրճ,  
Վոր պոետի դեմ ըացում եր, կարծես,  
Անանցանելի խորախոր մի կիրճ:  
Մինչեւ պոետը կրանար դուռը  
Փաստերով հարուստ իր զինանոցի  
Մեջքին կկապեր ասպետի թուրը,  
Ասպարեզ կիշներ՝ հեծած նժույդ ձին,  
Մեր նոր հյուրերը բոլոր կողմերից  
Կրակ տեղացին նրա դիրքերին,  
Ու կամաց կամաց ճակտի խորշերից  
Տիրության ամպը իջավ հոնքերին...

— Լսելով խոսքերդ գյուղերի մասին, —  
Ասաց ծերունին, հիշեցի անհետ  
Մեռած գնացած յերգասաց Հասոն  
Ու մի տիսուր դեպք — կալված նրա հետ:  
Հարսանիք եր այդ, բայց ի՞նչ հարսանիք, —  
Ամուսնանում եր հարուստ հողատեր  
Մելիք Բեկլարը: Հավաքվել եյինք  
Բոլոր գյուղերից թե տեր, թե ճորտեր:  
Յոթ որ, յոթ գիշեր գհողն եր թնդում,  
Գինին հոսում եր դետի պես վարար,  
Յեկ պարում եյին, ուտում ու խնդում  
Գզըից մինչ տերտեր, հարսից մինչ կեսրար:

Վերջին գիշերն եր: Ո՞, վերջին գիշեր,  
Յեկ շատ են ուտում, և ըմպում անհապ,  
Դատարկվում եյին գինու տակառներ,

Տակառներ հսկա, տակառնել անտակ:  
Հավաքվել եյին սեղանի շուրջը  
Մեծամեծները ամբողջ նահանգի,  
Ու լոել եյին: Զեր լսվում մի շունչ. —  
Սպասում եյին, վոր Հասոն յերդի  
Հարս ու փեսայի բախտավորության  
Կենացը — մի յերդ, մի դվարթուն յերդ,  
Բայց ահա Հասոն բարձրացավ տեղից —  
Աչքերում վշտի ծովը անեղերք:

Յերգում եր Հասոն այնպես վողբաձայն,  
Կարծես մեռնում եր նրա մինուճար  
Հավակը աղիդ, ու լուսաբացին  
Հավիտյան պիտի զցեր ճանապարհ:  
Յերգում եր Հասոն — քրդական «լոլո»  
Ու իր յերդի հետ լալիս եր կամաց...  
Ախորժակ ուներ անսպառ լալու  
Այդ բատրակ տղան, այդ դիմ գառնարածն,  
Յեկ նորյնիսկ, նորյնիսկ այդ հարսանիքի,  
Այդ խնդության մեջ լալիս եր Հասոն.  
Լսեցին նրան հյուրերն թանկագին  
Յեկ լոկ յերկու խոսք՝ խեղճ տղա, — ասին:

Նորից զնդացին գինու բաժակներ,  
Ու նորից թնդաց գհուլ զվարթ,  
Նորից խնդություն, նորից հանաքներ —  
Արևամուտից մինչև լուսաբաց:  
Ով յերիտասարդ, ուռ ինձ լավ լսիր,  
Հարսանիքները պետք չունեն լացի,  
Թէ արտասվելու ունես անհագ սեր,  
Վորոնիր ուղին գերեզմանոցի:  
Արցունքն ու զինին — անհաշտ թշնամի  
Ախոյաններ են: Միթե չես տեսնում  
Մեր խնդությունը, մեր կարմիր դինին,  
Միթե դու ողով, ողով ես սնվում:

— Զե, ընկեր Պարթեն, սխալվեցիր դու,  
Մեր Հարսանիքը Մելիք Բեկարի  
Հարսանիքը չե, մեր խնդությունը  
Հենց հասոների սրտի լարերի  
Ու հոգու հետ և խոսում մտերիմ:  
Զուր չե Մելիքին լացով վողջունել  
Հովիվը տկլոր: Միթե խինդով են  
Զմեռն ընդունում անբուն թոշուններ:  
Գուցե իզուր չե սպում անծանոթ  
Մեր ուղեկիցը: Գուցե Մելիքի  
Գինառատ, փարթամ սեղանների մոտ  
Նրա պապերն ել նստել են քեֆի:

Ջահել գյուղացու խոսքերը կարծեք  
Խորունկ խրվեցին կուրծքը պոետի,  
Ու նորից զայրույթ, ու նորից անեծք,  
Նորից փոթորիկ ալեկոծ սրտի:  
Ո՛, կոմունիզմը, — բացականչեց նա, —  
Բայց միթե, միթե նրան հակառակ  
Մի բան ասացի, չե՞ վոր կոմմունան  
Յերազս և յեղել ամբողջ ժամանակ:  
Ու հիմա հեղնանք ու ծաղը իմ դեմ  
Մի մարդու կողմից, վորի հայրերը  
Տրեխ են հագել ու մտել թոնիր  
Յեկ մաճ են բռնել պապից մինչ թոռներ:

Բայց հանկարծ կարծեք, խաղաղվեց, հանգավ,  
Ինչպես մոխրացող խարսույկը հրկեղ,  
Նորից մեղմության շապիկը հագավ  
Պոետը խոհուն ու գանգրագես:  
Ու նորից մտավ իր հունը նախկին,  
Ինչպես վարարած գալնային վտակ,  
Նորից թագցրեց իր հուզված հողին  
Ճերմակ ամպերի քուլաների տակ:  
Ընդունեց քնքուշ գեղեցկուհու դիրք,

Մկոնց հանդարտ փիլիսոփայել,  
Կարծես կարգում եր մի վոքեշունչ գիրք,  
Կարծես ձգտում եր հուշն իր փայփայել:

— Վաղուց թերթել եմ յես Թովմաս Մորի  
Գիրքը՝ «Ուստապիան»: Ոհ, նրա կղզու  
Պատկերը յերբեք, յերբեք չի մարի  
Պատանեկությանս վոսկի յերազում:  
Այդ մարդարեյին ինչքան եմ սիրել,  
Ինչքան գուրզուրել իմ հիշողության  
Ճերմակ դղյակում, սակայն սիրել եմ  
Նրա պատկերած գալիքը խնդուն  
Լոկ վորպես յերազ, հաճելի յերազ,  
Սնսահման ծովում մի անհաս կղզի,  
Իսկ ծովի ափին նոտած լինեմ յես,  
Սնվերջ անրջեմ այդ կղզու մասին:

Բայց դուք յերազը փշում եք, ինչպես  
Մարմարյա արձան... Այն ինչ վոր յերեկ  
Յերազ եր, անուրջ, — այսոր ահա, տես,  
Դարձել ե արդեն մի վոսկեշող շինք:  
Տարիներ առաջ թվում եր յերազ...  
Սևանանդույի այս ֆանտազիան,  
Բայց հիմա արդեն թափվում ե վրաս  
Լուսերի հաղար, հաղար շատրվան:  
Ոհ, ել ի՞նչ յերազ, ի՞նչ յերգ, ի՞նչ անուրջ,  
Ել ի՞նչ նկարներ — Այլվազովսկու,  
Դուք վերածել եք բոլորը անշունչ,  
Սակայն փայլիլուն ու դեղին վոսկու:

Այժմ աեսում եմ իրականացած  
Յերազն այդ լուսե: Բայց հանուն ի՞նչի  
Արծիվը սարից գլորել եք ցած,  
Թողեք, ոհ, թողեք, վոր աղատ թուշի,  
Արծիվը ողում թե վեհ ե, թե վես,

Մի բերեք ներքե, թե չե կդառնա  
Հասարակ թոշուն, վոր ունի թեներ,  
Վոր ունի անկում, վոր ունի մահ, մահ:  
Ուտոպիան պետք ե ուտոպիա մնա,  
Յերազը՝ յերազ: Յերբ հազնում ե նա  
Իրականության շապիկը մրոտ,  
Դառնում ե գիշեր — մութ, անառավոտ:

Անչափ սիրում եմ թեավոր «ինչուն»,  
Սակայն ձեր լեզվում ինչուներ չկան,  
Դրա համար են խոսքերս հնչում  
Յեվ ստարոտի, և՛ լենթ, և՛ չարկամ:  
Դրա համար են անըմբոնելի  
Իմ գեղութերը ճշմարտապատում,  
Դրա համար եք տեղի անտեղի  
Արծիվմարեց բռնում, բանտարկում:  
Դրա համար ել գուք չեք նվաճում  
Այդ ինչուների աշխարհը դյութիչ...  
Այ, կենան տարեց, ասացեք՝ ինչժռ,  
Զե վոր ձեզ համար պարզ ե ամեն ինչ:

Իսկապես ասած տերել եր լենան,  
Նույնիսկ բարկության նշույլներ կային,  
Գուցե հուզում եր, չարչարում նրան  
Կրծքում բարախող սիրալ մարդկային:  
Գուցե խղճում եր անհույս պոետին,  
Սնթե կոռուկին այդ յերամազուրել,  
Ինչպես բժիշկն ե խղճում հիվանդին,  
Զգալով, վոր դեղն իզուր ե, իզուր...  
Ծանը ուղտերի քարավանի պես,  
Այսպիսի խոհեր մտքովս անցան,  
Բայց մտիկ արա ու մտքովդ տես՝  
Ինչեր ե խռում մարդն այս տիրածայն:

«Ինձ դուր են գալիս բարդ ու ֆանտաստիկ  
Նախագերը: Այսպես որինակ —

Նախագծվում ե (գուրք այդ լավ դիտեք)  
 Յերկնքից կախել մի նոր արեղակ:  
 Ապրում եմ, ապրում ես այդ յերազով,  
 Այդ մասին նույնիսկ գրել եմ մի վեպ,  
 Բայց շուրջս, շուրջս յերազների սով,  
 Վարդերից աղքատ, անուրջներից վորր:  
 Տվեք, ո, առեք, նոր, նոր ժյուլերներ,  
 Վոր անկարելի բաներ պատմեն մեկ  
 Ո՛, ձանձրալի յեն, աներազ, անսեր,  
 Մեր պոետները, և փոքր, և մեծ:

Ո՛, «իրը ինքնին» ահա ժայռը այն,  
 Կորին բախվելով փշուր են յեղել  
 Հանճարեղ մտքեր: Մի կախարդ կայան,  
 Վորից այն կողմը դեռ վոչ մի ձամբորդ,  
 Վոչ մի Ամունդսեն չի թեակիսել:  
 Ո՛, քանի՞ քանի փիլիսոփաներ  
 Այդ ժայռի դիմաց, վորպես մի Համես  
 Արտասանել են՝ «ինել թե չինել»  
 Այս ե ինդիրը», ու չեն հանդինել  
 Կայանից դենը անել վոչ մի քայլ  
 Ինչպես Համետաը մահվան դեմ կանդնել,  
 Իր մաքերի դեմ մզում եր պայքար:

Բայց չեր հանդինում այդ մութ աշխարհի  
 Սահմանը անցնել, վարաեղից, ավագ  
 Դեռ վոչ մի ձամբորդ չի վերադարձել,  
 Ճամբորդներ հանգուդն, ճամբորդներ խիղալա:  
 Իրն ել անծանոթ, անհայտ աշխարհ ե,  
 Սիրելի ընկեր, ինչ վոր տեսնում ենք՝  
 Լոկ յերեսույթն ե, իսկ իրի ներքին  
 Եյությունը՝ մի կնճիռ ե, գաղտնիք...  
 Յեվ միթե այս լերկ ժայռերը լեզու  
 Ու հոգի չունեն: Այս ծաղիկները  
 Ու այս ժայռերը միթե չեն լոսում.

Ո՛, բնությունը միթե կնելե  
 Այդպիսի հանցանք, վոճագործություն...

Աշխարհն գոյություն ունի լոկ և լոկ,  
 Վորպես յերեսույթ: Ձեղ չեն փրկի, չե,  
 Յեվ վոչ մի նյուտոն, մի ֆարմին, մի Լոկ,  
 Աշխարհը միայն, միայն անուրջ եւ  
 Դրա համար ել ինչ քաղցր ե, կենա,  
 Յերազ գարձածի մտքին անըրջել,  
 Մաքում ստեղծել դալիքները վաս,  
 Մրտում սիրածի շողշողուն աշեր:  
 Ինչ լավ ե նոսել կրակից շիկնած  
 Վառարանի մոտ ձմբան ցուրտ գիշել,  
 Կիսանինջ, փափուկ բարձերին հենած՝  
 Գարնան վարդերը նորից վերնիշել:

Մի տաղանդավոր դերասանի պես՝  
 Արտասանելով ճամն իր հանդավոր,  
 Վառվում եր կարծես մեր սլոեաը հեղ  
 Աչքերով թախծոտ ու աբտասսվոր:  
 Կարծես կարդում եր նա Տուրգենեի  
 Վարդերի գովքը — մի արձակ պոեմ,  
 Նրա աչքերում աշնան արեի  
 Թույլ ճառագայթներ, կրակներ կային:  
 Ու լենան, լենան, վոր նրան յերեք  
 Չեր տալիս դաժան, մահացու հարված,  
 Այս անդամ արդեն անողոք ու սեղ  
 Դիմեց վարդենցին — խիստ վիրավորված:  
 — Ո, Վարդենց, Վարդենց, այդ մեր ես հասել,  
 Ինչպիսի անկում, ինչ գահավիժում,  
 Դու, վոր վսեմին լոկ ունեյիր սեր,  
 Խեղդվում ես այժմ պղտոր ջրերում  
 Ու ձեռք ես պարզում ամեն մի բանին,  
 Նույնիսկ թփերին թույլ ու անկայուն,  
 Յեվ սպասում ես նոյան տապանին,

Վորպես փրկության հուսալի անկյուն։  
Յեվ մեր այս դարում, վորպես նոր Բուդդա՝  
Քարոզում ես դու քար անշարժություն,  
Ո, որլոմովյան ծուլություն ե դա,  
Դա լոկ մի կյանք ե՝ կես քուն, կես արթուն...

Իսկ մենք այլ նյութից ձուլված մարդիկ ենք,  
Մեր որորոցը ովկիանի անզուսպ  
Հողմն ե որորել, մենք բարձրացել ենք  
Կոհակի թևին — խենթ ու ալեծուփ  
Ու մեծացել ենք մաքառման ահեղ  
Ու պայքարների փոթորիկի մեջ...  
Տեսել ենք լեռնից սուրացող հեղեղ,  
Վոր խորտակում ե ամեն, ամեն ինչ,  
Տեսել ենք նաև դասակարգերի  
Մարտական շարքեր խրոխտ, կարդապահ,  
Վորոնք փշրելով դահն արքաների,  
Հարթել են աղատ, նոր կյանքի ճամփա:

Ու մասնակցել ենք այդ մեծ մարտերում,  
Մերթ վորպես զինվոր ու մերթ՝ զեկավար:  
Մենք ճիռ ու ջանքով ե համառորեն  
Աստղեր ենք նույնիսկ վերից թափել վար:  
Ամպերի զավակ — կայծակը խարտյաշ  
Գերել ենք, ինչպես վագրն անապատի,  
Մենք և՛ քանդող ենք, և հմուտ քարտաշ,  
Մենք տիրապետող ամեն մի բերդի:  
Յենթարկում ենք մեղ նույնիսկ տարերը,  
Հեծում բնության խրինջացող ձին,  
Վոչ վոք չի սանձի մեր մեծ վերերը,  
Դաղափարները մեր արևածին:

Այդ քո իր կոչված սփինքս-հրեշին  
Մենք յենթարկել ենք մեր աղդեցության,  
Փոխելով նրան, քեզ կամ ուրիշին,  
Փոխում ենք նաև մեղ հարշապիտայան:

Մենք և փոխում ենք, և հար փոփոխում,  
Զես կարող յերեք դու նույնը մնալ  
Դոյության կովի մեծ հրաբուխում,  
Վորտեղ բաղիտվում ե մարդը բնության,  
Զարկվում են իրար մարդկային խմբեր,  
Ու հարթվում ե մեծ դժվարությամբ  
Կատարելության ճանապարհը վեհ:

Ի՞նչ ե այս բանը, (նա մոտիկ առվից  
Վերցըց մի ափ պարզ ու մաքուր ջուր)  
«Եի անգույն հեղուկ և ուրիշ վաշինչ» —  
Կասեր կարդենցը, կասեր անպատճառ:  
Տես, արեն ինչպես յելավ, բարձրացալ  
Ու հեռվում թողեց լեռներ, յերկիրներ,  
Յեվ քեզ թվում ե, թե անշարժացած  
Այս մեր յերկիրը պառկել ե քներ  
Իսկ արե հսկան պտույտ ե գալիս  
Այդ մեր լիլիպուտ ծույլ աշխարհի շուրջ:  
Յեվ մթթե այդպես չեն դատել դարեր՝  
Բազմացեղ մարդիկ հավատով ու լուրջ:

Թեև այս միաքը դեռ դարեր առաջ  
Ծիծաղելի յեր, բայց այժմ ել, այժմ ել՝  
Բարձրացնելով աղմուկ ու շառաչ,  
Շարունակում ես դու նույնը կրկնել:  
Յեվ քեզ թվում ե հին հույների պես՝  
Աշխարհը վերպես վիթխարի ափսե,  
Իսկ շուրջը նրա մի փրփրադեղ,  
Անհուն ովկիանոս՝ դաժան ու անսեր,  
Կորի ջրերին գեռ վոչ մի ճամբորդ  
Չի համարձակվել իր նավը հանել  
Դեպի անծանոթ, կուսական ափեր,  
Դեպի հմայիչ, անհայտ հեռուներ:

Բայց մենք քեզ պես չենք: Մենք նվաճում ենք  
Բնությունը մեծ, թեև նա հաճախ

Հանում և մեր դեմ կատաղի տարերք:  
Ու թանգ և ծախում իր դանձերը ճոխ:  
Յեվ այդ մարտերում, հենց այդ մարտերում  
Մենք ճանաչում ենք աշխարհն բազմազան,  
իր ընթացքի մեջ անվերջ, անդավում,  
իր փոփոխման մեջ վեհ ու բազմաձայն:  
Թեև զոհում ենք մարտիկ ոդաչու,  
Ծովազնացներ և լսիդախ, և վեհ,  
Բայց մարտնչելով նորից ենք թռչում  
Հիմալայներից, Մոնթաններից վեր:

Մենք նոր մարդիկ ենք: Քայլ քայլի վրա  
Աշխարհն ենք հիմքից, հաստատ նվաճում,  
Յեվ մաքառումով ու խնդությամբ վաս  
Տիեզերքը վողջ մոտից ճանաչում:  
Թեև դժվար և մեր ընալած ուղին,  
Խոչնդուներով, կոփմերով լի,  
Մերթ հանդիպում ենք գորշ մառախուղի՝  
Մերթ անդունդներին մութ ու ահալի,  
Բայց մենք կարում ենք ուղին այդ խութուն՝  
Վորպես նոր կոլումբ, վորպես Մազելան...  
Իսկ դու այդպես խեղճ, այդպես վարանուն  
Ցերպում ես դարձյալ քո հին ալելուն:

Լենայի բերնով հպարտ խոսում եր  
Ամենակարող փաստերի լեզուն.  
Նա և համոզում, և խոր հուզում եր,  
Իր անկեղծությամբ — յերկնի պես լազուր:  
Նկատում եի, վոր Սերգոն նույնպես,  
Սիրով և լսում հուզված լենային,  
Նրա շողարձակ աչքերում, կարծես,  
Մի զույգ բոցավառ խարսչյիներ կային:  
Ո՛, յես պոետին այդքան խղճալի,  
Այդքան թևաթափ դեռ չեյի տեսել. —  
Նա պատրաստվում եր, վոր նորից ճառի,  
Ցերպ Սերգոն նրան սկսեց «շոյել».

— Բայց ինչու, ինչու այսքան վառ, ազատ,  
Այսքան փառավոր կյանքը մեր գունեղ,  
Աչքիդ թվում և անարե, անզարդ  
Մի բանտ, մի շիրիմ և խոնավ, և նեղ:  
Ո՛, միթե, միթե խանդը ոճածին,  
Թշվառությունը — չարիքների մայր,  
Այդքան սիրելի, այդքան լուսածիլ,  
Գեղուհիներ են դարձել քեզ համար,  
Վոր յերբ հիմնովին արմատից քանդում  
Ու դեն նեք նետում այդ հրեշներին,  
Դու մի թունավոր անեծք ես կարդում  
Մեր դարին ու մեր սեդ հերոսներին:

Սիրտը, ասացիր, դարձել և հիմա  
Սնհույզ, անավյուն, միապաղար չոր,  
Սակայն կմ, արդյոք, մի անհույս հիմար,  
Վոր հալատա այդ մտքերիդ ճահճոս:  
Յեվ միթե անցյալ վորեն դարում  
Մարդն ունեցել և այնքան գունագեղ  
Այնքան կենսառատ, այնքան լիարյուն  
Հույզեր, յերազներ, մարտեր ու յերգեր,  
Քան մեր որերի հերոսը խիզախ,  
Աշխարհը փոխող այդ անպարտելին,  
Քան ջահելները մեր մշտածիծաղ  
Վոր ռատիրանում են բոլոր բերդերին»...

Մի հասարակ փաստ: — Կարդացել ես այդ,  
«Հերկած խոպան»ը: Կարդացել ես: Լավ:  
Կմ արդյոք այնտեղ «ոթելոյան խանդ»,  
Կամ անհույս վշտի մի բարակիկ լար...  
Չկա: Չես վիճում: Հապա ի՞նչն և, վոր  
Նրան տվել և այդքան վառ հմայք...  
Դա կյանքը փոխող մարդկանց փառավոր  
Հերոսությունն և ու հույզերը տաք.  
Դա նոր աշխարհի հիմքերը զցող

Դավիթովների հայացքն և պայծառ,  
Դա մեր յեռանդն ե, մեր հույզերը ծով,  
Մեր կամքն ե, կամքը... Այժմ հասկացա՞ր...

Ճիշտ առաց Լենան, վոր մենք և՛ փոխում,  
Յեվ փոփոխվում ենք անվերջ, անընդհատ,  
Բայց ճիշտ ե և այն՝ վոր մեր այդ ուղին  
Չե այնքան հանդիսա, սալարկված ու հարթ:  
Մենք ամեն մի դիրք, մի բերդ, մի գագաթ,  
Մի նոր մարդ անդամ նվաճելու համար,  
Պայքարել ենք միշտ, սլայքարում ենք արդ,  
Մարտեր ենք մղում և՛ խիստ, և՛ համառ:  
Ու ամեն մի որ, ամեն մի վայրկյան  
Մենք թե փոխում ենք, և թե փոփոխվում...  
Ի՞նչպես դիմանա քո այդ խանդարքան  
Մեր մեծ մարտերի փոթորկոտ բովում:

Այսպես որինակ՝ տարիներ առաջ  
Անսահման սիրով լսում եյի յես  
Զուռնայի ձայնը, վոր դառնահառաչ  
Շարժվում եր առաջ՝ ինչպես ծանը յեզ:  
Յերբ լսում եյի Բեթհովեն, Մոցարտ,  
Նույնիսկ Շոպենը ու Զայկովսկին,  
Զանձրանում եյի, զայրանում անչար  
Ու բարձրախոսը անջատում իսկույն:  
Սպասում եյի՝ մինչեւ կլոեր  
Աշխարհաչակ պայծառ Բեթհովեն  
Ու մեկը լացով հանդարտ կղեր  
Մի ծանրածանը, տիառը հորովել:

Իսկ այժմ անվերջ ուղում եմ լսել  
Յեվ Բեթհովենը, և Զայկովսկին,  
Թեև սեղահը ինձ շատ և հուզել  
Ու այսոր ել դեռ հուղում ե կրկին:  
Որո՞րի վրա հույզերն ել մեզ հետ,

Անում, ճոխանում, փոխվում են անվերջ,  
Այս հարցի մասին, ինքնազո՞ն պոետ  
Զուր ես այս ձորում բորբոքում մի վեճ:  
«Ճերկած խոպան»-ից մինչեւ մեր որեր,  
Ինչքան ե փոխվել մարդը մեր դարի,  
Իզուր ես տեսնչում նըան որորել  
Լալիկան ձայներով քո խարխուլ թափի:

Մինչ վեճը թափի թերե և առնում,  
Փոքրիկ կրակը դառնում ե հրդեհ,  
Զանդուի ափին, խորախոր ձորում  
Գյումուշ կայանն ե բարձրանում մեր դեմ:  
Գյումուշ, ո, Գյումուշ՝ վիթխարի մի սիրտ,  
Վոր բարախում ե անվերջ, անընդհատ  
Ու մեր աշխարհին տալիս ե և՛ խինդ,  
Յեվ ճերմակ ածուխ, և՛ սպիտակ վարդ,  
Վոր մեր զյուղերին, մեր քաղաքներին  
Տալիս ե անթիվ անթառամ շուշան,  
Ու շողշողում ե՝ զերթ գալիքների,  
Վառ զալիքների մի աղդանշան:

Գյումուշ, ո, Գյումուշ... բայց ահա արդեն  
Մեր դեմ բացվում ե հիանալի մի գյուղ.  
Շենքեր լուսալի, մարդիկ ժապապեմ,  
Ելեքարիկ լամպեր՝ նոր բացված կնդուղ...  
Շենքերի առաջ՝ ծիծուն պարտեղներ,  
Գողարիկ փողոցներ — ծառադարդ, մաքուր,  
Ել չկան, չկան աթարի դեղեր  
Մըստ խրճիթներ, դեմքեր կեղտակուր...  
Գյումուշ գյուղն ես սա, ինչքան ե փոխվել,  
Բայց տիեզերքում կամ անփոփոխ բան.  
Գյումուշն ել ճիկով խոյանում ե վեր  
Կտրելով կյանքի փառակոր ձամբան:

Մեր սրտում այրող հրճվանքի վարդեր՝  
Մի վերջին անդամ նայում ենք զյուղին,

Շենքերին շքեղ, ծառերին պարթե  
Ու շարունակում մեր բոնած ուղին:  
Անցնում ենք անծիր դաշտերի միջով...  
Վոզերության հուրն ե բորբոքել.  
Մեր շուրջը կանաչ արտերի մի ծով,  
Վոչ սայլի ճոխնչ, վոչ ծանր հորովել:  
Վոլորում ուղին ձգվում ե անվերջ,  
Որը դառնում ե ավելի զյութիչ,  
Սակայն վարդենցը բացել ե մի վեճ  
Ժխտում «քանդում» ե ամեն, ամեն ինչ:

Վեճը կրում ե խիստ լարված բնույթ,  
Սուաջ են մզվում նորանոր հարցեր...  
Զահել զյուղացին զգալով ձանձրույթ,  
Անկարսոց ե իր զարմանքը սանձել:  
Ու մոտենալով Արդաքյանդ զյուղին,  
Թեև ցավելով ու ափսոսանքով,  
Բայց նըանք ընդմիշտ թեքեցին ուղին՝  
Մեր տարորինակ պսետից գժզոն.  
Ու զյուղ բարձրացան քայլերով հաստատ,  
Վիշտ պատճառելով քնքուշ լենային:  
Վերից գալիս եր ջրերով արծաթ  
Անուշ համերգով գետը լեռնային:

Նըանց հետեից ցնծուն աչքերով  
Մեր պատճառանը նայեց մի բոսկ. —  
«Խեղճ Քսենոֆոն, խեղճ Քսենոֆոն,  
Այս մեր աշխարհը քեզ մվ եր ճամբել:  
Ո՞, մեծ դիտնական, ո, խիզախ ճամբորդ,  
Ինչեր չեն տեսել աչքերդ արթուն,  
Աթարի բուրգեր, հյուզեր դետնափոր  
Ու համատրած խոր աղիտություն:  
Քեղանից հետո ինչեր չեն անցել,  
Դարեր են թոել սրբնթաց թափով,  
Բայց պյուզն իր տեսքով նույնն եր մնացել  
Արոր ու թռնիր, հյուզեր գետնափոր:

Ել չկան նրանք — իրամիթները կուզ,  
Հոլուան զող զյուղի ձանձրույթը մասյլ,  
Այժմ լույսերի լամպերը — վողջույղ՝  
Բոցկլտում են վառ ու արևափայլ:  
Յեղ մարդու հոգին հիմուլին փոխվեր,  
Սրտում ծաղկել են նոր զգացմունքներ՝  
Յերկիրս այժմ արշավում ե վեր՝  
Դեպի նորանոր, պայծառ բարձրունքներ:  
Աշխարհափայլման ինչ յեռանդ, ինչ թափ,  
Վոզերության ինչ չափսի ալիք,  
Յես ինչ խոսքերով քո պատկերը տամա  
Կոմունիստական վոսկեցող դալիք»:

Մինչ պատմաբանը բանաստեղծ դարձած  
Գալիքի մասին պոեմ եր կարդում,  
Բժնու շենքերը մեր դեմ բարձրացան  
Մի գեղածիծազ, արեստ հովառում:  
Բայց մենք քաղաքը դիտելով հեռվից՝  
Նոր կայարանում նստեցինք զնացք,  
Իսկ պատմաբանը մեզնից անջատվեց,  
Նստեց իր ավտոն ու քաղաք գնաց:  
Խոստացանք նրան մեր վերադարձին  
Մի քանի որով հյուր մնալ իր մոտ.  
Սուլեց վիթխարի մեր յերկաթե ձին  
Ու ձորում թնդաց ցնծությունը հորդ...  
• • • • • • • • • • •

Արել հանդարա թեքվում եր արդեն,  
Յեղը հավից իջանք Սեանա կղզին:  
Ի՞նչ առատությամբ բռւրում են վարդեր,  
Ի՞նչ քաղցը ե ժպտում ճերմակ ակացին:  
Ծովից փչում ե զովաշունչ քամին.  
Ու սվավում են ճառերը ճաղկած.  
Յելում են ահա աչքիս եկրանին

Շենքեր լուսալի ու արևաբաղձ  
Յեղ հողի, հանքի հարվածայիններ -  
Բանվորներ հպարտ ու ինքնավստահ  
Լսում են անվերջ կիթառի ձայներ,  
Յերգերը սիրո և դվարթության:

Ո՞ւմ ստեղծագործ ձեռքն ե կառուցել  
Այս խոպան կղզում այսպիսի հրաշք,  
Այդ ում անդրին ե այդպես բարձրացել  
Հայացքով պայծառ և՝ վեհ, և՝ հրաչ:  
Ո՛, դա հանձարեղ, մեծ, արևաշինջ  
Իլյիչի ձեռքն ե, իլյիչի անդրին...  
Ինչպես չարձակեմ խենթ ցնծության ճիչ,  
Ինչպես չողջունիմ իմ պայծառ դարին:  
Իսկ Սերգոս... լավ ե այդ մասին լոել:  
Թույլ գրչովս ինչպես պատկերեմ նրան...  
Նա մենից զատկում ու ինչպես մի լեռ,  
Բարձրանում ե դեպ, մեծ սանատորիան...

Անհապ ծծելով բույրը վարդերի,  
Մենք դրսնում ենք մինչև ուշ դիւեր...  
Մի տեղ հնչում են լարերը թառի,  
Մի տեղ գովում են և դինին, և սեր:  
Հոգնել ենք թեև յերկար շրջելուց,  
Բայց քնի մասին մտածող չկա:  
Գուցե ման գայինք մինչև արշալույն  
Թե վոր պոետն իրեն վատ չղղար:  
Հյուրանոց զալով մենք վորոշեցինք,  
Վոր մեր Վարդենոցը մնա բուժվելու,  
Իսկ յես ու կենան արևածագին,  
Ընկերների հետ դնանք Զիրուխլու...

## ՅԵՐԳ ՀԻՆԳԵՐՈՐԴ

### ԱՐԵՎՈՏ ԳԻՇԵՐ

Նկարիչ արփին բոցե վրձինով  
Գունաղարդում ե ջրերը արծաթ,  
Ու մեր նավակը աշխուժ ցնծումով  
Լիճը հերկելով առնում ե նոր թափ:  
Զդիտեմ, ինչու բոլորը հանկարծ  
Փափագ ենք դդում տեսնել Զիրուխլուն.  
Հիշում ենք նորից մեր արևակայծ  
Մուրացան յերգչի տողերը տիրուն:  
Հետու մշտշից յելնում են մեր դեմ  
Հին գյուղի գեմքեր աչքերով շիւմար,  
Նրանք բոլորիս թեև ծանոթ են,  
Բայց սրտով այնքան ոտար են, ոտար:

Վոհց բիբլիական մի նոյ նահապետ՝  
Նամիւ և բարձրանում վեղունցը — Սարգիս,  
Վորպես մոլորված անծանոթ ճամբորդ  
Զիրուխը ձեռքին նստում ե կողքիս:  
Տըտնջում ե նա՝ մինուճար վորդուց,  
«Նոյի աղոսալիցն» այդ նամարդագույն,  
Վոր գյուղը թաղեց անուսում, անլույս,  
Փաստաբան դարձագ, մնաց քաղաքում:  
Դառն հեկեկում ե իր սրտի խորքում  
Ու արցունք թափում՝ ինչպես վարար պետ,  
Կարծես վողբաւմ ե, կարծես մորմօքում  
Մի հին գյուղաստան այդ ծերունու հետ:

Սրտանց լալիս ե այդ Մարգիս րիձան  
 Մինչև ծովափը, մինչև Զիբուխու...  
 Ահա տղերքը նավակից իշան, —  
 Տեղից կանգնում եմ ինքս ել իշնելու,  
 Ու ձեռք եմ պարզում վշտակիր հյուրիս,  
 Ուզում եմ նրան ափին իջեցնել,  
 Բայց նա ցնդել ե, կորել ե հեռվում՝  
 Վորպես տիրադեմ սառնաշունչ ձմեռ  
 Մենք վար ենք իշնում նավահանգստում  
 Ու մտնում ենք մի բուրող ծառուղի.  
 Հեռվից նայում են աչքերով ժամուն  
 Ճերմակ շենքերը բազմատուն գյուղին

Գյուղ ենք բարձրանում: Մեր ճանապարհին  
 Ինչպիսի չընալ հրաշալիքներ,  
 Գալիս խփվում են ծովի ափերին,  
 Գրոհի յելած թեթև ալիքներ:  
 Ու ալիքների բաշերից բռնած՝  
 Լողում են ծովում կին, տղամարդիկ,  
 Տարերքը հաղթել չի կարող նրանց,  
 Նրանք հմուտ են ու անվայն մարտիկ:  
 Ահա կիսամերկ կանանց մի ջոկատ,  
 Վորին մարզում է հրաշագեղ մի կին,  
 Նրանց կրծքերը՝ փրփրացող կաթ,  
 Իսկ մարմինները այրող դյութանք են:

Գեղատեսիլ են կանայքն այդ գյուղի  
 Յեվ նրբակերտ են, և նոռնահասակ,  
 Ո՛, նրանց ճկուն, ճկուն մեջքերին  
 Ինչ լավ ե սազում գեղջկական նազանք:  
 Նրանք հունական արձանների պես  
 Չնաշխարհիկ են ու հոգեզմայլ,  
 Խաղաղ լճի պես հստակ են ու պարզ,  
 Յեվ ջինջ են ինչպես մարմնագույն մարմար:  
 Դեռ վոչ մի, վոչ մեծ քանդակագործ

Զի կերտել այդքան հմայիչ ու վեհ,  
 Այդքան համաշափ, այդքան նըբաղիծ  
 Ու կենդանաշունչ դեմքեր, մարմիններ:

Գյուղագլիքները մեր մեծաքանքար,  
 Հին, անգրագետ, անխօս գեղջկուհուն  
 Գովել են անչափ, անվերջ ու այնքան,  
 Վոր քեզ թվում ե, թե մի հմայուն,  
 Մի չնաշխարհիկ, մի լուսակարկաչ  
 Եյակ ե յեղել այդ մեր գեղջկուհին:  
 Սակայն յես ել եմ ծանոթ այդ կանանց,  
 Այդ Զարդարներին, Անթառամներին,  
 Կարիքը նրանց կոկորդն եր սեղմել,  
 Դարձրել հաստավոտ ու կարճահասակ,  
 Բայց տիրապատում պոետները մեր  
 Այդ համարել են աղգային պարձանք:

Հանգստի ժամն ե: Մոտակա հանդից  
 Ու այգիներիցն այդ բուրումնաշատ,  
 Ծովափ են թափվել ժիր ու խնդալից,  
 Այնքան կենսաբուղի ծեր, յերիտասարդ:  
 Կանայք վարդաշուրթ, մարտիկներ — արի,  
 Առնական, ինչպես հաղթ գլադիատոր,  
 Նրանց թրծել ե հուրը պայքարի,  
 Ճակատամարտերն մեծ ու փառավոր:  
 Ո՛, համայնական անծիր գաշտերի,  
 Վաշտերից մեկին՝ սիրավառ վողջույն,  
 Քեզ, իին Զիբուխու, քո հին դարդերին,  
 Մութ խրճիթներին հավերժական քուն...

Ահա Զիբուխուն: Ծովեղրյա մի գյուղ,  
 Ճերմակ տները ծառերում կորած,  
 Վոչ կավե հյուղեր, վոչ աթարածութ  
 Ցերդիկներ մըստ, վոչ այնքան գոված  
 Հարսները համբ ու լաշակավոր,  
 Վոչ ծերունիներ փայտերին կոթնած,

Հերիաթներ ողատմող ու հոչակալոր,  
 Կոչ հավետ չարքաշ ու ընդմիշտ քրանսած  
 Դեմքեր արեխաշ ու թիկունքներ կուզ:  
 Յել վոչ գամփոներ այնքան աժդահա,  
 Դոներին հսկող ու աղմկահույզ,  
 Վոչ ել մոծակներ չար ու հողեհան:

Ահա Զիբուխլուն: Փողոցներում լայն,  
 Մայթերի վրա այս ստվերաշատ  
 Մանուկներ կան միր, աղջիկներ կան վաս,  
 Աչիկներ կան ու հոնքերը սաթ:  
 Գյուղից ել վոչ մի և վոչ մի քուլա  
 Ծուխ չի բարձրանում դեպ գարնան յերկինք,  
 Բոլորը վառում են ելեքտրական լամպ, —  
 Ել ինչի՞ յե պետք աթար կամ թրիք:  
 Ել ինչ, ի՞նչ յերդիկ, ել ի՞նչ ծուխ, ի՞նչ մուր,  
 Յերբ համայնական խոհանոցներում,  
 Տներում հստակ հար ու ամենուր  
 Ճերմակ ածուխն ե շողարձակ վառվում:

Ո՛, նոր Զիբուխլու, յես ի՞նչ խոսքերով,  
 Քեզ ի՞նչպես, ի՞նչպես պատկերեմ:  
 Վոր գալիք մարդուն իմ այս յերգերով,  
 Իմ այս հույզերով գրավեմ, գերեմ,  
 Վոր գալիք մարդիկ քեզ այնպես հիշեն,  
 Ինչպես հիշում եմ յես հին Զիբուխլուն,  
 Յերբ ձեռք եմ առնում վարպետ քարտաշի՝  
 Մեր Մուրացանի գրերը վշտուն:  
 Ի՞նչ շեշտ, ի՞նչ հնչուն, ի՞նչ ոիթմ գործածեմ,  
 Վոր ներգաշնակի քո մեծ վերելքին, —  
 Ահա աչքերս անցյալին հառած,  
 Մեր վարպետներին հիշում եմ կըկին:

Հին գյուղի մասին այնքան սրտառուչ  
 Յերգեր ե հյուսել Թումանյանը ջինջ...  
 Ո՛, այդ յերգերի արծաթե առուն

Լոռու ձորերից գեռ կանչում ե ինձ:  
 Կաթի սեր քաշող դեղջուկն ե յերգել,  
 Յերգել ե նաև բեղարած մաճկալ,  
 Ու հորինել ե «Յերգեր» ու վերքեր»  
 Մեր հայ Պահնասի մեծագույն արքան,  
 Հին գյուղի մասին խոր ափսոսանքով,  
 Լացով եր պատմում Տերյանը նըբին,  
 Ո՛, նա ուզում եր ճոճող նիդակով  
 Կործանման գրկից փրկել այդ վորքին:

Այդ մարդիկ ինչեր, ինչեր կզային,  
 Թե վոր ապրեյին այս մեր որերում...  
 Յերանի հիմա քնից զարթնեյին,  
 Ու հանդիպեյինը նոր Զիբուխլույում:  
 Նորից շրջեյինք ձորերը կոսու  
 Յել Սլավյանի փեշին ման գայինք,  
 Աչքով տեսնեյին այս մեր աշխարհում  
 Գրոհի յելած ծովը մարդկային:  
 Ծինելույզների ծուխը դիտեյին,  
 Դիտեյին գյուղեր մաքրաջինջ, ձերմակ,  
 Բնկուղենու տակ քեֆի նստեյինք,  
 Իրար զարկելով և՛ սիրտ, և՛ բաժակ...

Զարթնեցեք քնից, վարպետներ պայծառ,  
 Յել մեղ ուղեկցեք մի ժամ, մի վայրկյան,  
 Ի՞նչ ես փափազում բոստան, սալվի ծառ,  
 Անդարդ սիրտ, վառ սեր, ջերմ իսահակյան:  
 Ի՞նչ ես յերազում, լուսածպիտ մարդ,  
 Ծաղկուն լույսերը՝ կոսու ձորերում,  
 Ելեքտրիկ լամպերը՝ ինչպես աղամանդ՝  
 Մեր անդնդախոր կիբճ ու ճորերում...  
 Ի՞նչ ես անըրջում, աշնան սիրահար,  
 Մթնջաղ սիրող ցրտահար պոետ,  
 Արևմագ, վարդեր, արշալույսը վաս, —  
 Դե, վեր կաց, վեր կաց, վայելիր մեզ հետ...

Յես այս խոհերի գիրկն եյի լնկել,  
Այս մտքերն եյին իմ հոգին հուզում,  
Վերհիշում եյի մոռացված յերգեր,  
Յերգեր տիբանուշ, յերգեր յերազուն,  
Յերբ կանդ առանք մենք մի վեհ, սյունաղարդ  
Ու արևալի մեծ շենքի առաջ: —  
Մեզ առաջնորդող մի յերիտասարդ,  
«Դյուզի դպրոցն ե» — բարձրաձայն ասաց:  
Դոնից ներս մտանք: Դադարկ եյին վող  
Լսարանները լուսալի ու լայն. —  
Այստեղ յեղել ե մի գետնափոր վորչ,  
Ուր ապրում եր մի նախրապան թեվան:

— Այստեղ, — ասում ե մի ծեր զյուղացի, —  
Տեր Մարտոքեյի դպրոցն ե յեղել,  
Ո՛, քանի՛ անդամ մեջքիս աքացի,  
Զեռքիս՝ ճիպոտի հարված ե տվել:  
Լենայի հարցը՝ թե ինչ՞ու այսոր  
Դպրոցում չկա վոչ մի աշակերտ,  
Զարմանքով լուց աչքերով լազուր:  
Մի ջահել աղջիկ՝ զուսոլ ու բարեկիրթ:  
— Աշակերտները, պատասխանեց ծեր,  
Թավուտ հոնքերով մի հաղթանդամ մարդ —  
Աշակերտները դաշտ են գնացել  
Ուսուցիչների առաջնորդությամբ:

Իրագործել ենք պատգամն Իլյիչի, —  
Պրակտիկայի ճանապարհը մեծ  
Լուսավորում ենք տեսության անշեշ,  
Վառ փարոսներով: Ու ել չենք զիջի  
Մենք մեր գրաված դիրքերն անառիկ:  
Իմ ջահելության ժամանակներում  
Շատ եյի լում յես պոլիտեխնիկ  
Դպրոցի մասին: Ինչե՞ր չեր գրում  
Մանկագարժների բանակը բազում:

Զըմբռնելով այդ վեհ բառի վոգին,  
Լուսնոտի նման դեգերում եյին  
Բյուր մեթոդների լաբիրինթոսում...

Իսկ մյժմ... Սակայն կներեք դուք ինձ,  
Վոր ձեղ պատմում եմ մի բանի մասին,  
Վորին ծանոթ եք ինձնից գերազանց  
Յեզ լավ հմուտ եք այդ այրող հարցին:  
Ներեցեք, վոր ձեղ հյուրընկալելու,  
Յեզ մի զովարան տանելու տեղակ,  
Կարդում եմ վաղուց ասված «ալելու»,  
Վորպես նորություն և դյութիչ, և տաք:  
Համեցեք, իջնենք կոմմունի այգին,  
Քիչ հանգստացեք, հետո կզնաք.  
Գոնցե կապասեք յեկող դնացքին,  
Գոնցե ավտոյով, — ինչպես կամենաք,

Յեզ իմ այն հարցին, թե անգրագետ  
Մարդիկ կան արդյոք Զիբուխուլու գյուղում,  
Մի լայնալանջ կին՝ աչքերն լույսի գետ,  
Պատասխանում ե ու քմծիծաղում.  
— Ներեցեք, ընկեր, դա շատ հին հարց ե,  
Բառարաններից վաղուց վերացված,  
Մի հայացք ոցեք դուք հարեանցի,  
Տեսեք՝ Զիբուխուլուն ինչպես ե փոխված:  
Մեր գյուղում միայն բարձրագույն ավարտ  
Կանաց տոկոսը հիսունից անց ե,  
Գրադետ են վողջ ծեր, յերիտասարդ,  
Նախկին Զիբուխուլուն անհետ կորած ե:

Այսպես զրոյցով իջնում ենք այգին,  
Ուր ծաղիկները նոր են փթթում,  
Յեզ ուր խմում են լույսն արեգակի  
Վարդերը գունեղ, վարդերը ժպտուն:  
Նստում ենք ծիծուն թավ նշենու տակ  
Ու թիկն ենք տալիս կանաչի գորգին,

Վերից նայում ե աչքի պես հստակ,  
Խաղաղ ծովի պես մի կապույտ յերկինք:  
Ճաշում ենք հենց այդ բնության գրկում,  
Հմագում ենք բույրը բյուր ծաղիկների.  
Չզգացինք՝ ինչպես յեղավ իրիկուն,  
Ինչպես արել թեկնեց լեռներին:

Հաղիվ հասնում ենք նոր Դիլիջանից  
Հեղինեւ յեկող մի ձեպընթացի,  
Բայց մւր ե, մւր ե այդ անըջային,  
Այդ պոետ տղան, այնքան տիրապին:  
Մենք մենակ թողած նրան Սևանում  
Վերադառնում ենք նորից Յերևան.  
Ո՞վ գիտե, այժմ ուր են սավառնում  
Նրա մտքերը և՛ սուր, և՛ ունայն:  
Վերադառնում ենք, բայց առանց նրան,  
Մի լարից «զուրկ են» ջութակները մեր.  
Ո, ով կարդ ե Վարդենցի նման  
Հին յեղանակներն «անուշ» նվագել...

Սակայն այս ինչ ե, ընթերցող ընկեր,  
Մտիկ տուր, հրճվիր, ցնծությամբ խնդա,  
Սևանից մինչև Մասիսն ալեհեր՝  
Լույսերի ծով ե, շողքերի անտառ...  
Կանգ առ, ով գնացք, դանդաղիր մի քիչ,  
Վոր յերկար դիտենք տեսարանը այս.  
Կանգ առ, ո, կանգ առ, թող այս բարձունքից  
Դիտենք մի չքնարդ, վոսկեղեն յերազ:  
«Կանգ առ, ո, վայրկյան, ո, վորբան, վորքան  
Դեղեցիկ ես դու» — քեզ նման չքնար  
Վայրկյան իր որում դեռ արև արքան  
Յերբեք, ո, յերբեք չի մտաբերում...  
Յերկու որ հետո լենային տեսա  
Տրիբունի վրա մի մեծ շքերթի,

Կանքնել եր վորպես անառիկ մի սար՝  
Հայացքը հատած անցնող շարքերին:  
Շքերթից հետո, մենք պտանք իրար,  
Նա իր գրպանից հանեց մի ծրար...  
.

Կանգ առանք ահա: Մեր վոտքերի տակ  
Մի անդնդախոր, գլխապտույտ ձոր,  
Իսկ ձորի ափին ամուր, անխորտակ,  
Իր յերգերի պես պարզ ու միաձույլ  
Կանքնել ե ծերուկ պսետ լուսեցին...  
Նրա արձանի սովերում նստած  
Այդ խորհրդավոր նամակը բացինք.  
Յեկ ահա լսիր, թե ինչ եր գրած...

— Միքելի լենա, գրաբերիս հետ  
Դրկում եմ վերջին, վերջին նամակս,  
Ինձ հետ միասին մի ծիծաղալիտ,  
Մի կապուտաչ լիճ բարեսում ե քեզ:  
Քեզ բարեսում ե լիճը յեղերող  
Անտառում կորած այս լեռնաշղթան,  
Բարեսում են քեզ հավետ յերազող  
Մարդակերպ, մոայլ ժայռերը տիտան:  
Քեզ բարեսում են այս ջրերը ջինջ,  
Ու բարդիները քամուց սկսվան,  
Բարեսում ե քեզ նաև մի աղջիկ,  
Մի հավերժահարս՝ անունը Սևան:

Յեղանիկ կենա, յերկար գիշերներ  
ինձ տանջում եր մի անլուծելի հարց,  
Ու յերբեք, յերբեք հանգիստ չի քնել  
Իմ հոգին խռով ու հողմահալած:  
Յես դանիական այդ թագաժառանգ  
Համլետի նման շատ եյի խոհում,  
Ինչպես պղնձի կանաչավուն ժանդ՝  
Սիրտս կըծում եր կասկածը անհուն,  
Ու չեյի կարող գըռհի գնալ,  
Վճռել վերջապես՝ լինե՞լ թե չլինե՞լ...  
Բայց այսոր... Այսոր, սիրելի կենա  
Յես վարոշել եմ հավիտյան քնել:

Ունեցել եմ խոր հուսահատության՝  
Խելագարության տանջալի որեր,  
Մդավանջային գիշերում տարտամ  
Աշնան քամին և սիրտս որորել  
Բայց համլետի պես յես չեմ սարսափել  
Անդրշիրիմյան անհայտությունից,  
Զի սանձի նման իմ կամքը զսպել  
Ու մահվան գրկից հետ և քաշել ինձ  
Այս հիսաքանչ, այս հոգեզմայլ  
Համայնապարփակ բնության վողին  
Ու վորպես մի խիստ, սակայն սիրող մայր՝  
Ինձ շղթայել և այս ոտար կյանքին:

Ո՛, բնության պես նրբին նկարիչ  
Զի ծնել, կենա, վոչ մի մոլորակ,  
Ռաֆայելի պես հանձարները ջինջ  
Այդ վարպետի մոտ պատրանք են, պատրանք...  
Ծովեր կախարդող Այվազովսկին,  
Մի Լեռնաբդո կամ մի Ֆիդիաս,  
Մի մըրկահույզ, բոցաշունչ Պուշկին  
Չափածո խոսքի կատարն այդ անհաս,  
Վարպետ բնության ստեղծագործած

Պատկերներն են լոկ պատճենահանում,  
Ու դուք, խեղճերդ աչքերդ չուած՝  
Նայում եք նրանց, ապրում, հիանում...

Իսկ յես դեռ մանուկ, մանուկ որերից  
Աշակերտել եմ այդ մեծ վարպետին,  
Ոտար եմ յեղել ձեր աղմկալից,  
Զեր շեփորածայն յերգին ու մարտին,  
Յեվ ահա այսոր, մեռնելուց առաջ  
Նորից ըմպում եմ իմ հին վարպետի  
Գինու բաժակից: Աչքերս հառած  
Յերբեք չնիբոնդ ջրի կապույտին,  
Դիտում եմ լիճը... Ո՛, խաղաղ ե նա,  
Սիրելի կենա, անսահման խաղաղ,  
Մի չարաձճի վեղուհու նման  
Կարծես ուզում ե հոգուս հետ խաղալ...

Դիտում եմ լիճը: Վարպետ բնության  
Վրձինով գծված մի չքնաղ պատկեր,  
Այնքան եմ, այնքան ավաղին ողառկել,  
Անրջել անուշ ու նայել նրան...  
Սակայն մի ժամից ավելի յերկար  
Զեմ կարող դիտել նույնիսկ հանձարեղ  
Նկարչի գործը, զի ձանձրույթ արքան,  
Մտնելով հոգիս զորքովն իր ահեղ, —  
Իմ համբերության թույլ իշխանության  
Բոլոր բերդերին տիրում ե մեկից  
Ու վիզու ցցած մի ժանդում շղթա,  
Տանջում, խոշտանգում ու խեղում ե ինձ:

Բնության կերտած ամեն մի պատկեր  
Հանդես և գալիս միասնության մեջ,  
Բայց մենք քանդում ենք, աղճատում անվերջ  
Այդ միասնության շենքը փառահեղ...  
Այսպես որինակ՝ սիրելի կենա,  
Նկարիչները աշխարհանոչակ

Յերջանիկ Լենա, յերկար դիշերներ  
Ինձ տանջում եր մի անլուծելի հարց,  
Ու յերբեք, յերբեք հանդիսաւ չի քնել  
Իմ հոգին խռով ու հողմահալած:

Յես դանիական այդ թագաժառանգ  
Համլետի նման շատ եյի խոհում,  
Ինչպես պղնձի կանաչավուն ժանդ՝  
Սիրտս կըծում եր կասկածը անհուն,  
Ու չեցի կարող գրոհի քնալ,  
Վճռել վերջապես՝ լինել թե չլինել...  
Բայց այսոր... Այսոր, սիրելի Լենա  
Յես վորոշել եմ հավիտյան քնել:

Ունեցել եմ խոր հուսահատության՝  
Խելագարության տանջալի որեր,  
Մղձավանջային դիշերում տարտամ  
Աշնան քամին ե սիրտս որորել,  
Բայց Համլետի պես յես չեմ սարսափել  
Անդրշիրիմյան անհայտությունից,  
Չի սանձի նման իմ կամքը զապել  
Ու մահվան գրկից հետ ե քաշել ինձ  
Այս հիասքանչ, այս հոգեզմայլ  
Համայնապարփակ բնության վոգին  
Ու վորպես մի խիստ, սակայն սիրող մայր՝  
Ինձ շղթայել ե այս ոտար կյանքին:

Ո՛, բնության պես նրբին նկարիչ  
Չի ծնել, Լենա, վոչ մի մոլորակ,  
Ռաֆայելի պես հանճարները չինչ  
Այդ վարպետի մոտ պատրանք են, պատրանք...  
Ծովեր կախարդող Այվազովսկին,  
Մի Լեռնարդո կամ մի Ֆիդիաս,  
Մի մըրկահույզ, բոցաշունչ Պուշկին  
Զափած խոսքի կատարն այդ անհաս,  
Վարպետ բնության ստեղծագործած

Պատկերներն են լոկ պատճենահանում,  
Ու գուք, խեղճերդ աչքերդ չուած՝  
Նայում եք նըանց, ապրում, հիանում...

Իսկ յես դեռ մանուկ, մանուկ որերից  
Աշակերտել եմ այդ մեծ վարպետին,  
Ոտար եմ յեղել ձեր աղմկալից,  
Զեր շեփորաձայն յերգին ու մարտին:  
Յեվ ահա այսոր, մեռնելուց առաջ  
Նորից ըմպում եմ իմ հին վարպետի  
Գինու բաժակից: Աչքերս հառած  
Յերբեք չնիրհող ջրի կապույտին,  
Դիտում եմ լիճը... Ո՛, խաղաղ ե նա,  
Սիրելի Լենա, անսահման խաղաղ,  
Մի չարաճճի գեղուհու նման  
Կարծես ուզում ե հոգուս հետ խաղալ...

Դիտում եմ լիճը: Վարպետ բնության  
Վրձինով զծված մի չքնաղ պատկեր.  
Անքան եմ, այնքան ավազին սպակել,  
Անըշել անուշ ու նայել նրան...  
Սակայն մի ժամից ավելի յերկար  
Չեմ կարող դիտել նույնիսկ հանճարեղ  
Նկարչի գործը, զի ձանձրույթ արքան,  
Մտնելով հոգիս զորքովս իլ ահեղ, —  
Իմ համբերության թույլ իշխանության  
Բոլոր բերգերին տիրում ե մեկից  
Ու վիզու ցցած մի ժանդու շղթա,  
Տանջում, խոշտանգում ու խեղդում ե ինձ:

Բնության կերտած ամեն մի պատկեր  
Հանդես ե գալիս միասնության մեջ,  
Բայց մենք քանդում ենք, աղճատում անվերջ  
Այդ միասնության շենքը փառահեղ...  
Այսպես որինակ՝ սիրելի Լենա,  
Նկարիչները աշխարհահոչակ

Դործադրելով և՛ հանձար, և՛ ջանք,  
Ծովը հանձնում են ձերմակ կտավին:  
Յեվ նույնիսկ ովկիանն իր մեծ ցասումով,  
Մի Հովհանն ահեղ կտմ մի Ավրորա՝  
Նրանց վրձինի կախարդ շարժումով  
Լուռ քարանում են կտավի վրա:

Բայց նկարներում այդ հիասքանչ  
Միշտ պակասում եմ մի եյական բան.—  
Ահա մի առու, անթոս, անկարկաչ  
Բոնել ե իրա առորյա ճամբան,  
Ահա քեզ նաև Այվազովսկու  
«Իններովդ ալիք» նկարը փառահեղ,  
Նավարեկություն, փոթորիկ, սոսկում,  
Ու փրփուրների խելազար հեղեղ...  
Բայց պակասում ե ովկիանի հոգին —  
Հարաշարժ ջրի յերգը մոլեզին:  
Յեվ ահա այսպես՝ քանդում եք անվերջ  
Բնության շենքը և՛ պայծառ, և՛ մեծ:

Բայց խոր կսկիծով քեզ գրեմ պիտի,  
Վոր ձանձրացել եմ նաև վարպետիս  
Հըաշալիքներից... ել ինձ չեն հուզում  
Վոչ վարդեի կարմիր, վոչ տրտում աշուն,  
Վոչ ծաղկեղորդը լեռնալանջերի,  
Վոչ հեղեղումը դարնան ջրերի,  
Վոչ անուշ յերգը աղբյուր՝ պոկտի,  
Վոչ բարձրասալաց մեր դռան բարդին:  
Մենակությունն ել, վոր սիրում ելի  
Սվելի սաստիկ, քան գիրկը տատիս,  
Մյօմ դարձել ե մի դժոխային  
Ու սիրտ հոշոտող ժանտաղեմ դահիճ:

Մենակ շրջել եմ աշխարհն լայնարձակ,  
Յեղել եմ բոլոր թանգարաններում,  
Տեսել ովկիանի ջուրը լեռնացած,

Ու կայմը՝ կորած խենթ կոհակներում:  
Յեղել եմ ձյունոտ հեռու հյուսիսում,  
Հյուսիսափայլն ե շողացել գլխիս,  
Աշխարհի բոլոր չքնաղ ափերում  
Նախ գցել ե խորախոր խարիսխ:  
Ու անտառներ եմ շրջել կուսական,  
Ամպերին համնող ծառեր եմ տեսել,  
Յեվ բարձրացել եմ Եվերեստ հսկան,  
Ուր վայելել եմ անմահության սեր...

Յեղել եմ նաև Նեղոսի հովառում,  
Պիրամիդներ եմ տեսել վեհանիստ,  
Իսկ այդ սփինքսը... Հեքիաթ անպատում  
Յեվ խորհրդավոր, և՛ հավետ հանգիստ...  
Բայց միշտ տիտուր եմ յեղել յես հոգով,  
Ու ձանձրացել եմ դիտել — լսելուց,  
Յեվ կը ել եմ յես անհուն տանջանքով  
Մենակությունը, վարպետ ծանր լուծ:  
Մենակության պես, սիրելի լենա,  
Զկա ավելի սարսափելի բան,  
Այս աշխարհը ինձ թվում ե հիմա,  
Մի անծայրածիր, մի հեղձուցիչ բանա...

Այժմ եմ հասկանում, թե ինչ վիթխարի  
Վիշտ ե ունեցել Արուշահարին,  
Վոր այլպես ցասկոտ, այլպես թունալի  
Մահավճիռ է կարդում իր դարին:  
Բայց ուր ե զնում մարդն այդ խելագար,  
Այդ ուր ե տանում իր կարավանին,  
Այդ ուր ե թողնում նարգիզ, նունուֆար,  
Յեվ վարդերը վառ, և արմավենին:  
— Դեպի արել, — տառում ե մի ձայն, —  
Դեպի անապատ, վոսկեղեն հեռուն...  
Բայց առանց ընկեր, սիրելի լենա,  
Ցուրտ մենությունն ե կանչում Մահարուն:

Նորից կարդացի յես յերեկ զիշեր  
 Վերջին նամակը վշտու վերթերի,  
 Այնտեղ թեև կար անհանգչելի սեր,  
 Ու վառ բուրմունքը դարնան վարդերի,  
 Ու թեև կային սրտառուչ տողեր,  
 Սիրտ լացացնող ձայներ կիթառի,  
 Բայց սովորաբար նա յել և թողել  
 Մի խղճուկ կտակ իր հզոր դարին,  
 Կտակել և նա, վոր իրեն թաղեն  
 Հեռափոր դաշտում մի զույգ ծառի տակ,  
 Վոր մահից հետո դոնե դադաղում  
 Զման մենակ ու անհիշատակ:

Դրանից ել մեծ սնափառություն,  
 Սիրելի Լենա, նշել կարմող ես:  
 Ունենաս այնքան մեծ արիություն,  
 Վոր հերոսաբար մահն արհամարհես,  
 Հետո կտակես, թե ինձ հիշեցեք,  
 Մարդիկ, ո, մարդիկ ինձ մի մոռանաք,  
 Դուք, վոր կյանքի մեջ ինձ հոշոտեցիք,  
 Ծաղիկներ ցանեք դադաղիս վրա...  
 Վերթեր, ո, Վերթեր, ամոթ ե, ամոթ,  
 Այդքան խեղճանալ, այդքան ընկծվել  
 Դու վոր աշխարհը ցնցեցիք մահովդ  
 Ու վողջ դերմանիան քնից հանիր վեր:

Ինքնասպանություն, քեզ թվում ե դա  
 Մի սնամեջ բառ, թուլամորթի քայլ,  
 Դուցե ծիծաղով նամակս կարդաս  
 Ու ինձ համարես մի խեղճ խելագար...  
 Չե վոր այդպես են մարդել քո հոգին  
 Մանկապարտեզից մինչ համալսարան,  
 Չե վոր քամլում են սև անարդանքին  
 Ինքնասպանի անունը վառման:  
 Ու չե վոր, չե վոր մաքովդ չի անցել

Ինքնասպան լինել, սիրելի Լենա,  
 Այդ դաղանը քեզ չի սպառնացել  
 Իր ժանիքներով դաշույնանման:

Բայց ինքնասպան լինելու համար  
 Պետք ե ունենալ մեծ հերոսություն,  
 Իսկ հերոս լինել, սիրելի Լենա,  
 Դեռ չի հաջողվել ամեն մի մարդու:  
 Յեվ նամանավանդ, յերբ կանխորոշում,  
 Յերբ մտածում ես գիշերներ յերկար,  
 Յերբ կա քո սրտի ալեկոծ խորշում  
 Բաղիւփող հույցերի խելահեղ պայքար,  
 Յերբ թողնելու յես ընդմիշտ, վերջնական,  
 Զըերը հստակ, յերկինքը կապույտ  
 Գնում մի աշխարհ, վորաեղից սակայն,  
 «Չի վերադարձել դեռ վոչ մի ճամբորդ»:

Յեվ իրոք, Լենա, չկա ավելի  
 Հանդուբն, համարձակ, հերոսական քայլ,  
 Բան յերբ մատնում ես անդարձ ավերին  
 Կյանքդ, անցյալդ ու քո ապագան:  
 Բայց ապագազուրկ մարդ եմ յես հիմա,  
 Իսկ ներկաս... Ներկաս մի կախարդիչ սուսա.  
 Ինձ համարում են ցնորված հիմար  
 Ու նիզակ ճոճող ասպետ — Դոն-Կիխոտ:  
 Գուցե ինձ հիշեն մի քանի ընկեր  
 Ու մի քանի ժամ իմ մահը սպան,  
 Չե վոր գրել եմ մի քանի յերգեր,  
 Յերգեր սիրավառ ու լիրիկական:

Ու ինչպես մի մարդ, վոր կաթիլ կաթիլ  
 Թույն ե կուլ տալիս դեռ մանկությունից  
 Յեվ իր առնական հասակումն արդեն  
 Չի քաշփում նույնիսկ մի բաժակ թույնից,  
 Այնպես ել այժմ, այս բարձր ժայռից

Անվախ նետվում եմ յես դիրկը ծովի...  
Թող ալիքները բռնեն լափեն ինձ,  
Թող գանգս իսպառ, իսպառ փշրվի  
Ու ծուլվի ծովին, հալվի նրա մեջ,  
Թող հյուլեանա վողնաշարը իմ,  
Ու ջրերի հետ թափառեմ անվերջ  
Մինչև արել բաղխվի աշխարհին:

Դե, ընդունիր ինձ, ծովը իմ կապուտաչ,  
Տուր սրտիս հանգիստ, հավերժական քուն,  
Ո, սիրտս, սիրտս, սիրտս սիրտատանջ  
Թող դիքն ե գալիս, իմ հարադատ քույր:  
Փախչում եմ, փախչում այս հարափոփոխ,  
Այս հավերժահոս կյանքի հորձանքից,  
Փրկիր, ո, փրկիր ամեն ինչ լափող  
Վոչնչացումի յերկաթյա ձեռքից:  
Դրկիր ինձ, գրկիր, ծովը իմ կապուտաչ,  
Դու հավետ անքուն իմ հարադատ քույր,  
Յեկ սիրտս, սիրտս, սիրտս սիրտատանջ  
Թող լինի աղատ ու քեզ պես մաքուր:  
\* \* \* \* \*

Ինձանից հետո և վոչ մի կտակ,  
Վոչ մի հիշատակ չեմ ուղում թողնել...  
Թե վոր պատահմամբ դիակս գտաք,  
Խնդրում եմ, խնդրում հողում չթաղեք,  
Ինձ նորից ծովի յերախը զցեք  
Թող ալիքների թերին լող տամ,  
Նամակիս լեզուն հրով փակեցեք,  
Վոր սիրտս ուրիշ մարդիկ չկարդան,  
Վոչ վոք չլսի, վոչ վոք չլմանա,  
Վոր ծնվել եմ յես, ապրել մահացել:  
Զե վոր աշխարհը ձեղ ել չի մնա, —  
Ինչի՞ վրա յե խնդրությունը ձեր...

Գուցի Կարդենցի նամակի վոգին  
Շատերին թվար արտասովսր բան,  
Զե վոր նրանում կային «թանգագին»  
«Աննման» վոճեր — վեհ, վոսկերաբրառ.  
Զե վոր վարդենցը իր պոետական  
Վողջ գանձարանը հանել եր հանդես,  
Դուրս թափել վոճի դրդեր դյութական,  
Պատկերներ, հույզեր՝ նըբահյուս լեհեղագ...  
Բայց իր եյությամբ այդ «բարձրասլաց»,  
«Թևավոր» վոգին դուրս յեկավ մի հետ,  
Անհույս, անարև մահամերձի լաց  
Ու մահվան ձոնված վողբալի մի յերգ:

\* \* \*

Լենան նամակը կարդալուց հետո  
Մի քիչ լուս մնաց, հետո վեր կացավ  
Ու հաստատակամ, շանթի պես հատու՝  
Դեմքիս սեենեց աչքերը պայծառ:  
— Կեր կաց, Արմենակ, — ասաց մեզմաբար,  
Այդ մարդուն այժմ խղճալ ել չարժե.  
Նա բազուկներովն արնազուրկ, անկար՝  
Ուզում եր հսկա լեները շարժել.  
Ո՛, նա ուզում եր սահնձահարել մեր  
Այս քառատրոփ կյանքի նժույգ ձին.  
Սակայն ջաթջախված՝ ընկավ աներեր,  
Ու առաջ թռավ ձին արևածին:

\* \* \*

Վարդենցն ուզում եր պատմության թոչող,  
Պատող անիվը հանել իր ձամբից,  
Սակայն տապալվեց՝ ինչպես մի չոր ձյուղ  
Հանկարծ ընկնում ե բարձրացած հողմից:  
Ո՛, Վարդենցներին փրկություն չկա,  
Մեծ կյանքն ե նրանց մատնել մահացման,  
Նրանց գեմ չկա վհչ վառ ապագա,

Վահ գարնան վարդեր, վահ հույսեր անմար:  
Դրա համար եր Վարդենցը գովերդում  
Ինքնասպանների «հերսոնթյունը».  
Դրա համար ե, վոր այս վառ կյանքում  
Նրանք հեշտությամբ ըմպում են թույնը...

Վաղ առավոտյան յելնում եմ փողոց:  
Մայիսի մեկն ե՝ ցնծություն, շքերթ՝  
Մարդկային ծովը՝ հորդառատ ու հոծ՝  
Իսկ ինդությունը՝ գարնանային գետ:  
Գնում եմ մի թերթ, սիրով կարդում եմ  
Իմ նոր պոեմը, Մայիսի մասին.  
Կարդալուց հետո անհոգ թերթում եմ  
Ու աչքս հառում վերջին յերեսին:  
Հեռու անկյունում, վորպես «սուրբի» քող,  
Սևին ե տալիս յերկու լացող տող.  
«Սևանա կղզու մեծ քարափի տակ  
Գտնվել ե մի անձանոթ դիակ»...

Քաղաքում հորդում, հորձանք ե տալիս  
Յերգի, նվագի գետը վարարուն.  
Ի՞նչ հաղթական ե հերոսը դարիս,  
Մրտում՝ արշալույս, աչքերում՝ գարուն...  
Ու ահա հպարտ անցնում են նրանք,  
Շարքերը խիտ են, սերտ ու ամբակուռ  
Համաշափ, վստահ, ջլապինդ, արագ  
Անցնում են ջահել ազջիկներ գանդուր:  
Ահա կարմրավառ դրոշը դրկած՝  
Քայլում ե լենան շարքի առաջից.  
Նրա աչքերում՝ անհանգչելի կայծ,  
Հայացքը՝ վճիռ յերկնքի պես ջինջ...

### ԿՅԱՆՔԻՍ ՃԱՄԲԱՆ

Սիրելի Ողա, նստել եմ ահա՝  
Բնության գրկում՝ արմավենու տակ,  
Վորպես սրտահույզ մի սրնդահար՝  
Կողքիս յերգում են զեփյուռ ու վասկ:  
Նրանց ձայնակցում, համերգում են բյուր  
Կարկաչուն աղբյուր, թոշուններ նորեկի,  
Ինչքան ուզում են՝ ծաղիկների բույր,  
Գույներ բաղմազան, և՝ յերանգ, և՝ յերգ...  
Յերկինքը այնպես կապույտ ե, անբիծ,  
Ողը դովաշունչ, դաշտերը՝ կանաչ,  
Հույզերիս գետը յելած ափերից  
Խայտող ջրերով թոշում ե առաջ:

Իմ վոտքերի տակ մի անհատակ ձոր,  
Հայացքիս առաջ՝ քառաղագաթ սար,  
Քիչ հեռվում՝ կանաչ արտերի մի ծով,  
Դաշտեր բերկալի, անեղր, անծայր:  
Դարավոր ձորում — յերկաթի զնզաց,  
Կառուցման պաթու, մուրճերի համերդ,  
Ու ամենուրեք մարդն ստեղծագործ,  
Միտքը խուզարկու, և ջինարար ձեռք:  
Ծաղկած ծառերին թառել են, կարծես,  
Թիթեռներ ձերմակ ու բազմահազար,  
Այսպիսի պատկեր դեռ չի ավել մեղ  
Հին նկարչության և վահ մի հանձար:

Մտերիմ Ողա, նստել եմ ահա  
 Այդ պատկերի գեմ՝ զերթ հանդիսատես:  
 Ծաղկի թերթեր են թափվում իմ վրա.  
 Ու յես կարոտով վերհիշում եմ քեզ.  
 Վերհիշում եմ քեզ, մարտաշունչ ընկեր,  
 Քեզ՝ անհանգչելի յեռանդի խարոյել,  
 Իմ սիրտն ել զարնան շորեր ե հագել —  
 Յես հիմա այնպես ուրախ եմ, առույգ:  
 Յես հիմա այնպես — աշխույժ եմ, Ողա,  
 Այնպես հուսավառ, այնպես լավատես,  
 Վհատությունը ինձ խորթ ե, ոտար: —  
 Ու խինդս, ահա, հաղորդում եմ քեզ:

Անմոռաց Ողա, ինչպես լուսարձակ՝  
 Կյանքիս գիշերվա մութը պատռելով՝  
 Թոշում են հուշերս... Ահա մի գյուղակ՝  
 Միջին մի տնակ՝ խարթուլ պատերով:  
 Այդ իմ հայրենի պյուղն ե հուշ դարձել  
 Այդ մեր խրճիթն ե՝ որրան մանկության,  
 Հիշում եմ տատիս՝ կորաքամակ, ծեր,  
 Յեղրորս՝ մի հսկավեհ ու հաղթանդամ.  
 Ահա իմ մայրը՝ հեռու որերից  
 Կարծես կանչում ե, ձեռքով անում ինձ:  
 Ու հունձ ե անում հայրս հողագործ՝  
 Թաղված հասկերի ծովումն ալելոծ:

Մեր գյուղակն ուներ չքնաղ բնություն —  
 Մի կողմը դաշտ եր, յերկու կողմը՝ սար,  
 Ծվարել եր նա լայնարձակ հովտում,  
 Ուր հողն եր բերբի ու ջրերը, սառ:  
 Ուր բերքն եր առատ, արոտը՝ փարթամ,  
 Ողը կենսատու, այգին՝ մրգաշատ,  
 Ուր ցցվում եյին՝ զերթ հսկա տիտան՝  
 Ժայռեր հինավորց, քերծեր մամուապատ:  
 Հիասքանչ յերկինք, գեղեցիկ լեռներ,

Անթիվ առուներ, աղբյուրներ վճիտ,  
 Կախարդիչ գարուն, կարճատե ձմեռ,  
 Ծաղկառատ ձորեր — խայտարդետ չիթ:

Բայց այդ սալերին, հողին ու ջրին  
 իր թաթն եր գրել մի ժանտատես բեկ,  
 Մեղ բաժին թողել խրճիթները հին,  
 Զարքաշ աշխատանք, քարափները լերկ,  
 Մեղ բաժին թողել՝ սև տղիտություն,  
 Սնահավատ միտք, սահմանափակ խելք,  
 Մեղ բաժին թողել հեքիաթներ տրտում,  
 Յեկեղեցի, բանտ, սրտամորմոք յերգ:  
 Մեղ բաժին թողել վաշխառու, տերտեր,  
 Հարկեր բազմազան՝ դանակի պես սուր,  
 Մեղ բաժին թողել վիրափոր սրտեր,  
 Ու ծովածավալ վրեժի ցասում:

Այստեղ եր անցնում, սիրելի Ողա,  
 Իմ մանկությունը — վանդակված թոշուն,  
 Յերբ վողջ աշխարհը հիմքից վորոտաց  
 Սկսվեց հրի, սրի շառաչյուն:  
 Դեմ գեմի յելան — յերկրներ, ազգեր,  
 Իրար բաղխվեցին հսկաների պես,  
 Գյուղերը դարձան կուրացած աչքեր,  
 Իսկ կյանքը՝ թաղման սև սգահանդես:  
 Ինքնակալ մահը տիրեց աշխարհին,  
 Սար ու ձորերը լուռ ամայացան,  
 Ու ընդմիշտ թողած մեր խրճիթը հին,  
 Յես դաժան կյանքում ուղևոր գարձա...

Սրտակից Ոգա, այժմ ել սարսուռով,  
 Ահով եմ հիշում իմ կյանքի ձամբան:  
 Յես ձամբիս տեսա և՝ մարդակեր սով,  
 Յել մահվան սարսափի, և՝ դաշտեր խոպան:  
 Տեսա պալատներ — ցոփության, կրքի,  
 Խրճիթներ տեսա — մութ, արևազուրկ,

Կրեցի սուզի, հեծկլտող յերգի,  
 Լացող աչքերի ձանձրույթը անձուկ:  
 Յես կյանքում տեսա հայացքներ մոայլ,  
 Յեվ արհամարհանք, և՛ քարսրտություն,  
 Հին կյանքը, Ողա, վորպես մի խորթ մայր,  
 Իմ սրտին տվեց լոկ թախիծ ու թույն:

Ու հիմա, ահա, յերբ շուրջս յերգի,  
 Ծաղկի, ծիծաղի ծովն և վարարում,  
 Հասունանում և ծովառատ բերքի,  
 Խորախոր հերկի մի բեղուն գարուն,  
 Յերբ մարդու հոգուց, մաքից, հույզերից  
 Մաքրում — թափում ենք հնության փոշին,  
 Յերբ ամենուրեք — այնպես խնդալից —  
 Խայտում, խնդում են մանկիները ժիր,  
 Յերբ բարձրանում են նոր աշխարհ, նոր մարդ,  
 Նոր յերգ, նոր հույզեր, նոր սիրտ ու նոր սեր,  
 Անցլալս, ահա, վորպես տհաճ սարդ,  
 Հուշերիս առաջ վոստայն և հյուսել:

Ինչպես արեի պայծառ լույսի տակ  
 Իրերն ավելի պարզ են յերեսում,  
 Այնպես՝ անցյալիս անդունդն անհատակ  
 Այս մեր մարտաշունչ ցնծուն որերթում  
 Ավելի լավ և իր վողջ եյությամբ,  
 Այլանդակությամբ բացվում իմ առաջ...  
 Ո՛, դա ի՞նչ կյանք եր, դժոխք եր, զնդան,  
 Գիշեր՝ սոսկալի ու անլուսաբաց:  
 Տառապում եյի այդ խեղդող բանտում,  
 Անլոյս գիշերում՝ մութ ու ահավոր,  
 Յերբ լսվեց դղիրդ, զբոհի թնդյուն  
 Ու բացվեց անմար մի նոր առավոտ:

Ենք ինչպես ձմրան հաջորդում և վառ,  
 Թարմություն բերող կենսառատ գարուն,  
 Այդպես ել, ահա, այդ այդը զվարթ,

Իմ սիրտը լցրեց խնդությամբ անհուն:  
 Բոցկլտաց հոգիս: Ու սիրտս գարձավ  
 Հույսի, յեռանդի անսպառ մի ծով,  
 Հին կյանքը՝ վորպես մոայլ քարանձավ՝  
 Փլվեց, ավերվեց մի հաղթ հարվածով:  
 Փոխվեց իմ կյանքի հունը տանջալի,  
 Իմ դեմ բացվեցին — նոր հորիզոններ  
 Ու շղթայկապ սիրտըս տանջալի.  
 Դուրս յեկավ բանտից, զնդանից անել...

Այդ որից, Ողա, սկսվեց ահա  
 Խոկական կյանքիս վերելքի ուղին,  
 Անվերջ մաքրելով հոգիս վշտահար  
 Ախտերից, թույնից — դարավոր ու հին,  
 Յես վեր բարձրացա դժոխք՝ անդունդից  
 Ու մտա մի լայն, անծայրածիր դաշտ,  
 Ուր ջերմ սիրով վողջունեցին ինձ  
 Նոր կյանքը կերտող բյուրավոր քարտաշ,  
 Ու ինձ առնելով իրենց հորձանքում,  
 Իմ մտքին տվին բագեյի թևեր,  
 Յես սովորեցի լինել աննկուն,  
 Կովել, խիզախել, ձգտել դեպի վեր:

Ո՛, այն աշխարհում, ուր մարդը մարդուն  
 Գազան և, Ողա, շատ և անհնար  
 «Փայտե խրճիթից մինչ սպիտակ տուն»  
 Հաստատ քայլերով վերև բարձրանար:  
 Յեվ յեթե մեկը բարձրանում ել և,  
 Քանի, քանիսներ կորչտւմ են անհետ...  
 Նրանց ձամբին կան, և՛ անառիկ լեռ,  
 Յեվ խութոտ ծովեր, և՛ ձահիճ, և՛ գետ:  
 Ու տիրում և այդ աշխարհի մարդկանց  
 Մի աղշեցուցիչ դարմանք անպատում,  
 Յերբ մեկը «բախտով» հասնում և հանկարծ,  
 «Փայտե խրճիթից մինչ սպիտակ տուն»:

Կյանքի հատակից ինձ հետ միասին,  
 Այնքն թշվառներ յելան բարձրացան,  
 Կպատմեմ միայն յես մեկի մասին,  
 Վորին ծանոթ են աչքերդ պայծառ:  
 Իմ այդ ընկերոջ անունն ե Մինաս,  
 Ինքը հաղթանդամ, մի պարթե տիտան.  
 Վորպես տանջալի, հեղառուցիչ յերազ՝  
 Մինասն ել տեսավ կյանքը մանկատան:  
 Թե տառապանքի ինչ որեր տեսանք՝  
 Սոսկում եմ նույնիսկ հիշել այդ մասին,  
 Բայց, տես, մաքառման մի հուժկու հոսանք  
 Վորտեղից վորտեղ հանեց Մինասին:

Այդ տաղանդավոր «սանքյուլոտ» տղան  
 Բոնեց գիտության ուղին դժվարին.  
 Իր սրտում վառեց աստղեր հուրհուրան  
 Ու վեր բարձրացավ՝ զերթ զինվոր արի:  
 Տիրեց գիտության ամրակուռ բերդին,  
 Համաշխարհային նոր գյուտեր արեց,  
 Ո՛, այդ հողագործ գյուղացու վորդին,  
 Ինչպիսի գանձեր լույս աշխարհ հանեց...  
 Նա հիմա արդեն հոչակ և հանել՝  
 Վորպես մի խողոր ջահել կենսաբան  
 Ու բաց ե անում նոր ճանապարհներ,  
 Յեզ խիզախորեն, և հերոսաբար:

Իսկ յես իմ ճամբին լույս մուսաների,  
 Յերգի, գեղեցիկ մեծ աշխարհն ընկա,  
 Ինձ հմայեցին բարձր սարերի  
 Կատարները վեհ, գիշերն լուսնիա,  
 Ինձ ներշնչեցին վարդերը հուրհուր  
 Հասկերը ծփուն, աղջիկները վառ,  
 Հոգիս գյութեցին ովկիաններն անհուն,  
 Ծովերն ալեկոծ ու մըրկահար.  
 Ինձ վոգեկոչեց մարդը մաքառող,

Նոր կյանքը կերտող մարդն հերսոսական  
 Հոգիս մագնիսեց ամենակարող  
 Աշխատանքը սուրբ ու նվիրական:

Մանուկ հասակից մեր թումանյանի  
 Վճիտ յերգերը ինձ հմայեցին,  
 Վորպես կամարը վառ ծիածանի՝  
 Մրտիս մեջ մնաց այդ մեծ Լոռեցին:  
 Ու Շեքսպիրի համայնապարփակ  
 Հանճարի հրով հոգիս տաքացավ,  
 Միրեցի նրա արեկ պես բարկ,  
 Ովկիանի պես խոր «Համլետ»-ը պայծառ:  
 Պուշկինն ու Հայնեն կենսուրախություն,  
 Պարզություն ու թև ավին իմ յերդին,  
 Ինչպես շանթածին ամպի դղրդյուն՝  
 Յերգիս տոն տվեց փոթորկոտ Գորկին:

Ու ահա այսպես՝ իմ պայծառ ընկեր,  
 Յենելով կյանքի խորունկ հատակից,  
 Ընդմիշտ ցրելով, և վիշտ և թաթիծ՝  
 Յես յերկարածիք ճամբա յեմ ընկել,  
 Ու ճանապարհիս թումանյանի ջինջ,  
 Զուլալ աղբյուրից մի բաժակ ըմպած՝  
 Մի կայծ վերցրած Հայնեյի հրից՝  
 Պուշկինի յերգի բորբ գինով արբած՝  
 Յեկել հասել եմ մի մեծ լեռան տակ,  
 Վորի գագաթը ձյունոտ ե ու վեհ,  
 Ու հիմա, ահա, կարոտվ անհազ,  
 Հաստատ բայլերով բարձրանում եմ վեր...



Отв. редактор ~~А. Адамян~~  
Тех. редактор **И. Карапетян**  
Обложка и титул **Леткара**

**A. САРМЕН**

**П О Л Е Т**

(на армянском языке)

Отпечатано в тип. Госиздата ССР Армении.  
Москва, Армянский пер., 2. Зак. 1236.  
Главлит № Б—12972. Тираж 3000. Сд. в наб.  
19/VIII-35 г. Подписано к печ. 20/IX-35 г.  
Печ. л. 11<sup>1</sup>/<sub>2</sub>. В 1 п. л. 39,000 п. зн.

9 p u L 4 M.

«Ազգային գրադարան



NL0362676

53692

